Ա. Դանիելյան

Աջարիա Ափելյան

ԵՐԵՎԱՆ

Մենագրությունը նվիրված է XIX դարի վերջին տասնամյակի հայ գյուղատիրուհիներից՝ Ագարիա Ադելյանի գրական ժառանգության արժեքավորման հարցին: Արխիվային նոր փաստերի, մասնավորապես Ռիգայի Պոլիտեխնիկումից ձեռք բերված նոր տվյալների հիման վրա քննության է առնվում Ադելյանի գեղարվեստական ստեղծագործությունը, որոշվում նրա տեղը հայ գյուղատիրուհիների շարքում:

Մենագրության վերջում կցված է Ադելյանի երկերի տասնձին հրատարակությունների լրիվ բիբլիոգրաֆիան:

Աշխատությունը հրատարակվում է Ադելյանի մահվան վաթսունամյակի կապակցությամբ:

ԳԻՏԱ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

13 (33)



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт литературы им. М. Абегяна

С. Даниелян

Азария Аделян

Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН - 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

Ա. Դանիելյան

Աջսրիս Աղէքսան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ · 1964



Ա.ՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Անցյալ դարի 90-ական թվականներին, «Մուրճ» ամսագրի էջերում սկսվեցին տպագրվել, դեռևս ընթերցող շրջաններին անհայտ, Ադելյանի (Ազատիա Դանիելյան) ակնարկներն ու պատմվածքները, որոնց թեման հայ գյուղն էր և հայ գյուղացին։

XIX դարի վերջին տասնամյակի հայ գյուղի կենսական հարցերն էին շոշափում նորահայտ գրողի ստեղծագործությունները, որոնց թարմությունը և անմիջականությունը չէր կարող աննկատ մնալ հայ ընթերցողից։ Անկատակած, ժամանակակիցները չէին կարող ենթադրել, որ իրականության սուր ընկալման ակնհայտ ձիրքով և կյանքի մասին համարձակ հետևություններ անելու կարողությամբ օժտված արձակագիրը, ռեալական դպրոցը նոր ավարտած 22-ամյա երիտասարդ է։ Դժվար է պատկե-

բացնել, որ 32-ամյա հասակում գերեզման իջած արձակագիրը կարող էր ստեղծագործական այդչափ բեղմնավոր՝ և իր հասարակական գործունեությամբ նույնչափ ավյունով լինել:

XIX դարի հայ գրողների ցանկում գուցե մի քանի անուններ միայն կարելի է հիշատակել, որոնց կյանքը այդչափ կարճատև լիներ: Ադելյանը մոնում է այն երիտասարդ քանքարների շարքը, որոնք իրենց հետ տարան գրական անկատար հղացումներ և ստեղծագործական խոստացող հնարավորություններ...

Գրական գործունեության մի տասնամյակում Ադելյանը իր համեստ վաստակով մեր գրականությանը բերեց հայ գյուղացու անօգնական կյանքի համարձակ նկարագիրը և կենդանի ու ճշմարտացի պատկերներով լսելի դարձրեց աշխատավորական խավերի ցավատանջ բողոքը գյուղը ավերող ուժերի հանդեպ:

Անցյալ դարի 90-ական թվականներին Ադելյանը կարծեք թե ձեռք էր մեկնում ռուս նարոդնիկ բելետրիստներին դեպի գյուղացին ունեցած իր բողոքանվեր սիրով և նրա կյանքին գիտակ մարդու սրգասավոր խոհերով, որը գյուղացուն սպառնացող վտանգից փրկելու ուղիներ էր մատնանշում: Դրա համար իսկ Ադելյանը վաստակեց հայ բուրժուական մտավորականության թշնամանքը: Պատահական չէ, որ լիբերալ մամուլը լռությամբ ընդունեց նրա մահը:

«Մուրճ»-ը, որն իր էջերում հյուրընկալում էր Ադելյանին և նույնիսկ քննադատական ծավալուն հոդվածով խրախուսեց երիտասարդ արձակագրի առաջին քայլերը, քար լռություն պահպանեց նրա հիշատակի նկատմամբ, որովհետև չմարսեց այն մերկացնող հոդվածը, որտեղ Ադելյանը «Մուրճ»-ի, ինչպես և «Մշակ»-ի մի քանի գրչակներին պիտակավորեց «мошеники пера» սպանիչ դարձվածքով, Լիբերալ բուրժուազիայի մտավորականությունը քաջ հայտնի էր նաև Շահումյանի և Ադելյանի ոչ միայն գաղափարական-քաղաքական մերձակցությունը, այլև նրանց անձնական մտերմությունը, ուստի և իր հաշիվները մաքրեց՝ մոռացության մատնելով Ադելյանի գրական վաստակը...

Միայն «Նոր դարը» տպագրեց մի համեստ ծանուցում նրա մահվան առթիվ։ «Նոր դար» թերթի 1903 թվականի նոյեմբերի 15-ի համարում կարդում ենք Հին Նախիջևանից հետևյալ հաղորդումը. «Կիրակի, նոյեմբերի 9-ին, այստեղ վախճանվեց Ազարիա Դանիելյանը, մեղրեցի։ Հանգուցյալը 30 տարեկան էր, 1901 թվականին ավարտել էր Ռիգայի Պոլիտեխնիկումը ոսկե մեդալով և նույն տարին հրավիրվեց Երևանի թեմական դպրոցը, ուր մի տարի (1901—1902) վարեց մաթեմատիկայի ուսուցչի պաշտոն։ Ապա հիվանդության պատճառով թողեց ուսուցչությունը։ Գրականության մեջ հայտնի էր Ադելյան կեղծանունով. գրում էր թերթերում։ Թոքախտը գերեզման իջեցրեց մի ծաղիկ կյանք։

Դանիելյանը գնում էր իր հայրենի գյուղը, բայց հիվանդությունը արգելք եղավ նրան տեղ հասնելու և մեռավ այստեղ»:

Հայ ժողովուրդը, որ միշտ էլ սիրով և ակնածանքով է վերաբերվել իրենց կյանքը և գործը ժողովրդին նվիրաբերող մարդկանց հիշատակին, երախտագիտությամբ է գնահատում Ադելյանի գրական վաստակը՝ մտցնելով այն մեր մշակույթի հարուստ գանձարանը:

Այդ երախտագիտության վկայությունը 1950 թվականին Ադելյանի երկերի ժողովածուի առաջին հրատարակությունն էր:

Մեղրիում, որտեղ ծնվել է Ադելյանը և որի ջանքերով հայ իրականության մեջ 1901 թվականին կազմակերպվել է առաջին սպառողական կոոպերացիան, այժմ բարձրանում է նրա կիսանդրին ի հաստատումն Մեղրու կոլտնտեսականի երախտագիտության՝ վաղաժամ գերեզման իջած իր հայրենակցի հիշատակին...

Սույն մենագրությունը մի փորձ է՝ վերագնահատելու և արժեքավորելու մեր գրականության երախտավոր մշակներից մեկի գրական վաստակը:



ԿՅԱՆՔԸ

Ազարիա Դանիելյանը (Ադելյանը) ծնվել է Մեղրի գյուղում, միջակ տնտեսության տեր՝ գյուղացու ընտանիքում։ Ազարիայի հայրը՝ Մարտիրոսը, թեպետ գյուղի բանիմաց և գրագետ մարդկանցից էր, սակայն չէր կարողանում կերակրել իր բազմանդամ ընտանիքը, ուստի, ինչպես շատերն իրենց գյուղում, ստիպված էր իր որդիներին պանդխտության ուղարկել։ Նրա չորս զավակներից միայն ավագ որդին՝ Ենոքն էր, մնացել գյուղում, որը և ղեկավարում էր տնտեսությունը։ Մյուս երկու որդիներից Ղևոնդը աշխատում էր Բաքվի նավթահանքերում, իսկ Քրիստաֆորը՝ Բաթումիում, որոնք օտար քաղաքներում արդեն ամուսնացել և ընտանիք էին կազմել։ Միայն մի քանի տարին մեկ, կարճ ժամանակով, նրանք գյուղ էին գալիս, իրենց կարոտն

առնում և կրկին հեռանում՝ թողնելով իրենցից հեռու հարազատների չեմպակարոտ արցունքը: Ազարիան Մարտիրոսի չորրորդ զավակն էր, որը ծնվել է 1871 թվականի հունիսի 17-ին: Նախնական գրադիտությունն Ազարիան ստացել է տեր-Թորիկյան տիպի գյուղական սարկավագներից մեկի մոտ: «Ներհակ Առաքելը» պատմվածքում Ադելյանը նկարագրել է այդ դաժան ուսուցման տարիներից ստացած իր մանկական տպավորությունները. «Ահա մղոսի Մոսին չոք է տվել ներկի կարասի առաջ և տարածված կտավը պատեցնում է ձեռքերում: Նրա դիմաց, պատի տակ, խոնավ դաշակների վրա նստոտած են աշակերտները և մի մի դիրք ձեռքներին մոմոտում են: Նրանց բոլորի դեմքն էլ համարյա գունատ է: Ոմանց աչքերում լույս չի մնացել, իսկ ոմանք ապուշների են նմանվում, և երբ կարկամած աշակերտը չի կարողանում դասը պատասխանել, նրա վրա բարձրանում է մղոսու բռունցքը «աաա չոո...— գոռում է մղոսին,— էշի կոոր... չոքիր. էս սհաթիս չոքիր, գարշելի...»:

Բայց և կային պայծառ հուշեր գյուղական կյանքի անմեղ օրերից: Որքան հաճելի էր ազատվել մղոսու հոգեմաշ դասերից. վազել տուն ու մի կաոր հաց և այծի պանիր ծոցում պահած, ընկերների հետ չափչփել աշնան բերքից ազատված այդիներում, մաղլցել երկնահաս բարդիները ու նրանց փաթաթված վազերի վրայից պոկել խաղողի ոսկեհատ ողկույզները, որոնց չէր հասել այգեպա-

ոչ ձեռքը... կամ բարձրանալ դյուղի թիկունքի ցորնագույն ժայռերին բազմած հինավուրց բուրջերը և նրանց անցքերից նայել հեռո՛ւ, հեռո՛ւ...

Դյուղի լեռնականտարնեերին, չգիտես թե որ ժամանակներից մնալած այդ բերդերից մի հեքիաթային տեսարան էր բացվում նրանց առաջ: Լերկ ձորի մեջ պատրաստված դյուղը, մեկը մյուսի թիկունքին բազմած տներով, նմանվում էր գոգավոր քարակոփ սանդուղքի, որի տանիքներին փռված մրգերը և պատշգամբներում կախած նռան և սերկևիլի կախաններբը, ինչպես գույնզգույն ուլունքի շարան, հուրհրատում էին արևի տակ... կարծես մեկը գունավոր ծածկոց է փռել այդ քարակոփ սանդուղքին ոնց-որ փիանդազ, որի վրայով կարելի է իջնել ու հասնել այդիներին:

Իսկ այդիները, աշնան այդ օրերին, երիներանգում էին հազար ու մի գույներով... դեղին, կարմիր, կանաչ... կարծես մեկը Ալանդյազի կատարից իր տատի ձեռքով գործած մի գոլ չեչիմ է ձորն ի վար նետել:

Դեպի հարավ երևում էր պողպատի փայլ ունեցող Արաքսի կոտրտված դաշույնը, որը լիզելով Դաշլիչոխաշի հողակտորները, անհետանում ու կորչում էր Դիլբաքի սարորտում: Ահա պարսկական չոր, անտպատ ափերը... ահա և անդրի պես դյուղի վրա կախված Դուզալի խանի ապարանքը, խոժոռ ու մռայլ, ինչպես իրենց ափերը, իսկ դեպի հյուսիս

կապույտին էր տալիս Ալանդյազը, որի կատարից ինչպես իր պապն էր պատմում, երևում էր ինքը՝ Սիս-Մասիսը։

Սակայն մղդուսու ուսումնական «տիրակալությունը» վերջացավ, և 1882 թվականին Մեղրիում բացվում է ծխական դպրոց։ Մղդուսուն փոխարինելու եկավ Ներսիսյան դպրոցն ավարտած երիտասարդ մի համադյուղացի։ Ադելյանը գյուղի նորաբաց դպրոցի առաջին սաներից էր, ուր նա սովորեց և ավարտեց 1885 թվականին։ Նույն թվականի աշնանը Բաքվից հարազատներին տեսության եկավ Աղարիայի ավագ եղբայրը, որն աշխատում էր Բալախանու նավթահանքերում։ Հայրը պատմում էր որդուն գյուղի ապրուստի դժվարության մասին, այն մասին, որ բամբակը գին չունի, որ այլևս շերամ չեն կարողանում պահել, իսկ տերունական հարկերը շատացել են։ Այդ ըրույցների ժամանակ վճռվեց և Աղարիայի բախտը. «Կտանեմ հետս Բաքու,— ասաց Ղևոնդը,— կապրենք մի կերպ, իսկ Աղարիային կտամ ռեալական դպրոցում սովորելու, կավարտի, կոմերսանտ, կամ չէ, հաշվապահ կդառնա և տանը նեցուկ կլինի»։

Մարտիրոսը չհասկացավ «կոմերսանտ» բառը, սակայն հաշվապահությունը նրա սրտովն էր, քանի որ համոզված էր, թե հաշիվ իմացող մարդը միշտ էլ փող կունենա ու, նայելով իր գունատ և թուլակազմ որդուն, համաձայնեց Ղևոնդի առաջարկին։

— Գոնե հանգիստ աշխատանք կլինի որդու համար,— հուսադրեց իրեն ծերունին։

Բաքվում Ազարիան ընդունվեց ռեալական դպրոց, ուր սովորելու հետ միասին սիրում էր նաև ընթերցանությամբ զբաղվել։ Հայ գրողներից նա կարդում էր Աբովյանի, Րաֆֆու վեպերը, Պատկանյանի, Հովհաննիսյանի բանաստեղծություններ, հետևում էր Գրիգոր Արծրունու հոդվածներին։ Նրա սիրած գրողներն էին նաև Պուշկինը, Լերմոնտովը, Ուսպենսկին, Զլատովրատսկին, Կորոլենկոն։

Ռեալական դպրոցում նա մտերմացավ ռուս դասընկերների հետ և նրանց շնորհիվ կարողանում էր հետևել Ռուսաստանի առաջավոր պարբերականներին, նրանց հասարակական հոսանքների պայքարին։ Հատկապես նարոդնիկների կատարած սխրագործությունները հիացնում էին նրան։ Իր ռուս դասընկերներից մեկը, որն արգելված գրքեր էր բերում կարդալու, նրան հանձնեց «Սովրեմեննիկ» ամսագիրը. «Կկարդաս «Ինչ անել» վեպը,— ասաց նա,— այդ վեպի հեղինակը 20 տարի է, ինչ դեգերում է աքսորում»։

Երկու գիշեր լուսացրեց, սակայն կարդաց վեպը, մի գործ, որը նման չէր մինչ այդ կարդացած վեպերից և ոչ մեկին։ Նա ապշած էր Չերնիշևսկու վեպի հերոսների նպատակասլաց կյանքով, նրանց իմաստալից գործունեությամբ, Վերա Պավլովնայի արհեստանոցներով և Ռախմետովի խորհրդավոր

կերպարով։ Այն ժամանակ շատ բան մնաց չհասկացված, բայց խորապես ըմբռնեց, որ Ջերնիշևսկին յուրաքանչյուր ազնիվ և գիտակից մարդու առջև դնում էր ինչ անելու հարցը։ Իսկապես, ինչ անել. ավարտել ռեալական դպրոցը և դառնալ նավթային ֆիրմայում հաշվապա՞հ, կամ առևտրական գործարքներո՞վ զբաղվել, թե՞ նվիրվել գիտության, և Կիրսանովի նման օգտակար լինել հասարակությանը։ Վեպը օգնեց Ադարիային բախտորոշելու իր ապագան։

Հայաստանի Պետական արխիվում հայտնաբերված Ադելյանի այդ տարիների մի քանի նամակները նոր լույս են սփռում Բաքվի ռեալական դպրոցում նրա ուսանելու ժամանակաշրջանի վրա։ Այդ նամակներից պարզվում է, որ դպրոցի վերջին դասարանում, որտեղ սովորել է Ադելյանը, գործել է աշակերտական միություն, որի խնդիրներից մեկը եղել է ժողովրդի համար հանրամատչելի գրքեր հրատարակել։ «Մշակ» թերթի աշխատակից Մալումյանին գրած մի նամակում Ադելյանը հայտնում է. «Շնորհակալ եմ, որ չես մոռացել այն, ինչ որ խոսեցինք ամառանոցում։ Առաջարկությունդ մենք սիրով կընդունինք, որովհետև այդպիսով ձեռագիրներ մենք հեշտությամբ ձեռք կբերենք։ Այդպիսով մենք մի տարվա ընթացքում մի քանի գրքեր կարող ենք հրատարակել ու ցրել։ Հիանալի բան կլինի։ Նամակդ կարդացի ընկերներիս մոտ ստանալուն պես, նրանք ևս ընդունում են առաջար-

կությունդ. միայն դրվածքները վերաբերում պիտի լինին բնական դիտութեյան և վիպասանութեյան։ Կենսագրական էլ կարելի է, միայն, եթե վիպական ձևով դրված լինին։ Ժողովուրդը դժվար կկարդա այնպիսի կենսագրութեյուններ, որպիսիք մեղանում, մեր գրականութեյան մեջ կան»[1]։

1891 թվականի 18 դեկտեմբերի թվակիր նամակում Ադելյանը կրկին անդրադառնում է գրքի հրատարակութեյան հարցին. «Այս տարի մենք պիտի հրատարակենք մի քանի ժողովրդական գրքեր։ Մենք՝ 7-րդ դասարանի աշակերտներս, վերջին տարին է, որ ուսումնարանում ենք։ Գալ տարի մենք կունենանք քնած, իսկ մյուս տարի մեռած ուսանողութեյուն (աշակերտներ)։ Իրականութեյունը մեզ այդ տխուր երևույթն է ցույց տալիս»[2]։ Այդ նամակում մեծ ոգևորութեյամբ խոսում է «Գարիբալդի» գրքի հրատարակութեյան մասին։ Նամակները հիմք են տալիս ենթադրելու, որ Բաքվի ռեալական դպրոցում եղել է աշակերտական միութեյուն, որտեղ, հավանորեն, ընդգրկված են եղել ավարտական դասարանի աշակերտները։ Միութեյունը, ըստ երևույթին, ունեցել է իր գրամական միջոցները, որովհետև Ադելյանը խոսում է նյութական սուղ միջոցների մասին. «Մենք այժմ կասայում քիչ

---

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 2, գ 713, թիվ 4—5։

[2] Նույն տեղում, 713, թիվ 6—7։

փող ունենք, նիսխաներ էլ ունենք աշակերտների վրա»։ Սակայն նյութական միջոցները ուժեղացնելու հեռանկարը հուսադրում է Ադելյանին։ «Կարող ենք 2—3 գիրք հրատարակել», գրում է նա և տեղեկություններ հայտնում առաջին գրքի հրատարակության մասին։

Դժվար է, իհարկե, նամակներից կռահել աշակերտական միության նպատակների կամ նրա գործունեության շրջանակների մասին, բայց որ այդ միությունը իր ձեռնարկումներով ժողովրդին օգտակար լինելու ցանկություններ է ունեցել և իր աշխատանքը ծավալել է դպրոցական ադմինիստրացիայից գաղտնի, այդ մասին խոսում է նամակի «հետ գրության» մեջ արված հետևյալ նախազգուշացումը. «Նամակը ուսումնարանի հասցեով չուղարկես, որովհետև տեսուչը նամակները բաց է անում ժամանակ-ժամանակ։ Երևակայիր, քո նամակն էլ է բացում։ Վնասներ շատ կկրենք»։ Միաժամանակ Ադելյանի այդ նամակներից պարզվում է, որ նա գրականությամբ սկսել է զբաղվել դեռևս 1891 թվականից։ Մալումյանին նա գրում է. «Մշակ»-ին մի պատկեր եմ ուղարկելու գյուղական կյանքից։ Եթե հարմար կլինի, թող տպագրեն... ես սիրում եմ գրել միայն գյուղական կյանքից։ Այդ է պատճառը, որ ես այժմ ուսումնասիրում եմ Глеб Успенск-ուն»։ Ուստի, կարելի է հաստատված համարել, որ մինչև Ռիգա մեկնելը, Ադելյանը ծանոթ է եղել ռուս նարոդնիկ-բելետրիստների ստեղծա-



Ստ. Շահումյանը (երկրորդ շարք, աջից երկրորդը) և Ա. Ադելյանը (աջից երրորդը, երկրորդ շարք) Ռիգայի մի խումբ հայ ուսանողների հետ, 1901 թ.:

գործությունններին, գյուղական կյանքի մասին ունեցած նարոդնիկական մտորումներին ու խոհերին։

1892 թվականին, ավարտելով ռեալական դպրոցը, Ազարիան մեկնում է Ռիգա։ Հաջող քննություններ տալով Ռիգայի Պոլիտեխնիկումում, նա ընդունվում է քիմիական ֆակուլտետ, սակայն նյութական դժվարությունների պատճառով ուսանել կարողացավ միայն երկու տարի։ Ռիգայում ուսանելու այդ տարիներին, գյուղի կյանքից ունեցած տպավորությունները և ռուս սոցիալիստների արգելված գրքերը անհետևանք չեն անցնում Ազարիայի համար։ Ռիգայում նա գրում է իր առաջին երկը «Ներհակ Առաքելը» և ուղարկում այն «Մուրճ» ամսագրին, ուր և տպագրվում է պատմվածքը։ Թեորի թողնելով ուսումը, Ադելյանը 1894 թվականին գյուղ է վերադառնում։ Հայրը արդեն չկար, իսկ եղբոր ընտանիքը դարձել էր բազմանդամ, և դարձյալ նույն կարիքը ու դժվարությունները ծառացած էին իրենց ընտանիքի առջև։ Շուրջ երկու տարի Ադելյանը ստիպված է լինում ուսուցչություն անել իրենց գյուղի երկդասյան դպրոցում։ Այդ տարիներին նա կարողանում է հիմնավորապես ծանոթանալ ոչ միայն իրենց գյուղի, այլև շրջանի գյուղերի տնտեսական դրությանը։ Ամենուրեք նա տեսնում էր գյուղացիների տնտեսական դրության վատթարացումը, հողապակասություն, մասսայական պանդխտություն և համատարած կարիք։ Գյուղում

2—97

միայն մի քանի տնտեսություններ, որոնք երեք-չորս տարի առաջ մանրավաճառությամբ էին զբաղվում, այժմ ցուցափեղկերով խանութներ էին բացել, ուր կարելի էր գտնել ամեն ինչ, սկսած Մյուր Մերելիզի քաղցրավենիքներից մինչև Բոդարջյանի «Դարիալ» ծխախոտը։ Գյուղական այդ վաշխառուները ողջ շրջանը վերցրել էին իրենց ձեռքը։ Այդ ձեռներեց մարդիկ, նույնիսկ, իրենց գումարներին արդյունաբերական ելք էին տվել։ Գյուղում արդեն մետաքսի թելի գործարան էր բացված, և գյուղի վաշխառուները, էժան գներով իրենց ձեռքը գցելով գյուղացու ծանր աշխատանքով ձեռք բերված շերամը, մշակում էին այն և արտահանում Ռուսաստանի վաճառաշահ կենտրոնները։ Կարիքի և պարտքի մեջ խեղդված գյուղացիները հաճախ էին ձեռք մեկնում գյուղական վաճառականներին և ստիպված 20—25 տոկոսով գումարներ էին պարտք վերցնում։ Պարտքի տակ ընկած և կարիքի մեջ խեղդված գյուղացիների հողերի մեծ մասը անցնում էր հարուստների ձեռքը, իսկ իրենք հողազուրկ գյուղացիները, բռնում էին պանդխտության ճանապարհը։

Այդ տարիներին Ադելյանը իր շուրջն է համախմբում գյուղի առաջավոր երիտասարդներին, ուսուցիչներին ու նրանց հետ միասին բացատրում գյուղացիներին իրենց վատթարացող վիճակի պատճառները, պանդխտության վնասները և աշխատում իր խորհուրդներով օգնել նրանց։ Այդ տա-

րինների Ադելյանը դյուղական թշվառության հիմնական պատճառը համարում է տգիտությունը, հետամնացությունը և աշխատում միջոցներ գտնել լուսավորության, դրագիտության ուսուցման և դյուղատնտեսական դիտելիքների տարածման համար։ Դյուղական ինտելիգենցիայի ուժերով Ադելյանը Մեղրիում ներկայացումներ է կազմակերպում, «Մշակ»-ից և այլ թերթերից ընթերցումներ և կուլտուր-լուսավորչական զանազան միջոցառումներ ձեռնարկում, ենթադրելով, որ լուսավորության տարածման շնորհիվ, աշխատավոր դյուղացին կկարողանա ևս ջոկել սպիտակից և հնարավորություն կունենա սպառնացող անտեսական քայքայումից և աղքատացուցից պաշտպանել իրեն։

1896 թվականին ցարական կառավարության կարգադրությամբ փակվեցին հայկական դպրոցները։ Փակվեց նաև Մեղրու երկդասյան դպրոցը։ Ադելյանը ստիպված թողնում է դյուղը և մեկնում Ռիգա կրկին շարունակելու ուսումը։ Այս անգամ արդեն նա է մեկնում իր զեռատի կնոջ հետ։

Դժվարին են եղել և զրկանքներով անցել Ադելյանի ուսումնառության տարիները Ռիգայում, բայց այդ տարիները նշանակալից դեր են կատարել նրա գաղափարական-քաղաքական հայացքների ձևավորման գործում։ Այդ տարիներին Ադելյանը մտերմանում է Ստեփան Շահումյանի հետ, որը 1898 թվականին նույնպես ընդունվում է Ռիգայի Պոլիտեխնիկումը ուսանելու համար։

Ռիգայի Պոլիտեխնիկումը, ուր զգալի թվով հայ երիտասարդներ են ուսանել, եղել է Ռուսաստանի այն բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկը, որը կոչված էր տեխնիկական գիտության տարբեր բնագավառների համար մասնագետներ պատրաստել։

Ռուսաստանում, ճորտատիրական ռեֆորմի հետևանքով, արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը պահանջում էր ստեղծել տեխնիկական բարձրորակ կադրեր, որի հետևանքով սկսվում էին կազմակերպվել տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Պատահական չէ, երբ Պիսարևը «Մեր համալսարանական գիտությունը» հոդվածում փորձում էր պրոպագանդել մասնագիտական կրթության անհրաժեշտությունը, նսեմացնելով համալսարանական կրթության դերն ու նշանակությունը։ «Համալսարանը,— գրում է Պիսարևը,— մեզ չի տալիս կատարելապես կրթված մարդիկ, որովհետև նրա կառուցվածքը բազմաթիվ արգելքներ է դնում սովորողի ինքնուրույն մտավոր զարգացման ճանապարհին։ Համալսարանը չի տալիս մասնագետներ, որովհետև մասնագետին չի կարող պատրաստել դպրոցը, նրան պատրաստում է միայն ինքը կյանքը։ Ի՞նչ է տալիս մեզ համալսարանը. մարդիկ, որոնք ներծծված են մտահայեցողությամբ, տեսությունները աքսոմայի տեղ ընդունողներ, կյանքից դեպի գիրք հեռացողներ, որոնք իրենց ֆրազներում ու դատողություններում

պահպանում են այն ֆակուլտետի դրոշմը, որի մեջ ներփակված են եղել»[3]։

Ռիգայի Պոլիտեխնիկումը եղել է նախահեղափոխական Ռուսաստանի տեխնիկական կադրերի պատրաստման լավագույն օջախներից մեկը, որը բացվել է 1862 թվականին և որտեղ 50 տարվա ընթացքում, ուսանել են 9278 ուսանող, ըստ որում, եթե 1862—1895 թվականներին Պոլիտեխնիկումում սովորել են 4010 հոգի, ապա 1895—1912 թվականների ժամանակաշրջաններում սովորել են 5268 հոգի։ Վերջին տասնամյակներին ուսանողների քանակական այդպիսի գերազանցությունը պետք է բացատրել Ռուսաստանի արդյունաբերության վկրելքով պայմանավորված տեխնիկական կադրեր ստեղծելու անհրաժեշտությամբ։ 1890 թվականներից Անդրկովկասում զարգացող նավթի, պղնձի և այլ ճյուղերի արդյունաբերությունը իր հերթին առաջ քաշեց սեփական տեխնիկական կադրերի պատրաստման հրամայական պահանջ։ Այդ պատճառով զգալի է եղել Անդրկովկասից Ռիգա մեկնող նաև հայ ուսանողների թիվը։

Հիսուն տարվա ընթացքում Ռիգայի Պոլիտեխնիկումում ուսանել են 84 հայ ուսանողներ, որոնց զգալի մասը սովորել է 1890—1900 թվականներին։

Եթե 1880—1890 թվականներին Ռիգայի Պոլի-

---

[3] **Д. И. Писарев,** Полное собрание сочинений в шести томах, т· 3 С Петербург, 1894, стр. 102.

տեխնիկումում սովորել է 9 հայ, ապա 1890—1900 թվականներին հայ ուսանողների թիվը արդեն հասնում է 41 հոգու, իսկ 1900—1912 թվականներին՝ 31: Հայ ուսանողները Ռիգա սովորելու էին մեկնում դերազանցապես Անդրկովկասի արդյունաբերական հայաշատ քաղաքներից: Այսպես, օրինակ՝ Պոլիտեխնիկումում սովորել են հայեր Թիֆլիսից 20 հոգի, Բաքվից՝ 13, Նիկոլաևսկի նահանգից՝ 16, Դոնի-Նախիջևանից՝ 6, Երևանից՝ 4, Շուշուց՝ 4, Աստրախանից՝ 3, Ռոստովից՝ 2, Շամախուց՝ 2, իսկ մնացած 14 հոգին Դերբենտից, Ապուլիսից, Ալեքսանդրապոլից, Ախալցխայից, Նոխուց և այլ քաղաքներից:

Ինչպես հայտնի է, նախահեղափոխական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող տարբեր ազգությունների ուսանողները ունեցել են իրենց հայրենակցական միությունները: Ռիգայի Պոլիտեխնիկումում սովորող հայ ուսանողները 1892 թվականին կազմակերպում են «Սևան» անունը կրող հայրենակցական միություն, որի մեջ ընդգրկված են եղել թվով 12 հոգի:

Ուսանողական այդ միությունը ունեցել է իր նախագահը՝ Վաչյան, փոխնախագահը՝ Զաքյան, քարտուղարը՝ Մեժլումյան և գրադարանավար-գանձապահը՝ Կիսայան: Ցավոք, մեզ չի հաջել ուսանողական հայրենակցական այդ միության ծրագիրը կամ կանոնադրությունը, սակայն հավաստի է, որ նա

եղել է ձևակերպված ուսանողական հայրենակցական միությունների մեկը[4]:

1896 թվականին «Սևանը» համալրվում է նոր ուսանողներով, որոնց թվում է նաև Ադելյանը: Միության անդամների թիվը հասնում է 23 հոգու: Այդ համալրումը, ըստ երևույթին, ընդլայնում է միության առջև դրված խնդիրների շրջանակը, ինչպես և փոխվում է նաև ղեկավար կազմը: Նախագահ է ընտրվում Զաքյանը, փոխնագահ Բաշինջաղյանը, իսկ քարտուղար՝ Սարգսյանը: Հետագայում, երբ Ստեփան Շահումյանը ընդունվում է Պոլիտեխնիկում, նրա ղեկավարությամբ «Սևան» միության ներսում ստեղծվում է «Թևորեատիկ» անունով մարքսիստական առանձին խմբակ, որի ակտիվ մասնակիցներից է եղել Ադելյանը:

Վ. Ավետիսյանը իր «Ստեփան Շահումյան» կենսագրական ակնարկի մեջ գրում է. «Հայ ուսանողությունը կազմում է իր «Սևան» հայրենակցական միությունը: Այդ միության ներսում Ստ. Շահումյանին հաջողվում է կազմակերպել «Թևորեատիկ» մարքսիստական խմբակը, նրա շարքերը ներգրավելով մոտ 10 հայ առաջավոր ուսանողների: Խմբակի անդամներից էին հայ հայտնի գյուղագիր Ա. Ադելյանը (Դանիելյանը), ինժեներ Ն. Փիրումի-

---

4 Հայրենակցական միության անդամ են եղել Վաչյանը, Զաքյանը, Մեժլումյանը, Կիսայանը, Ս. Ոսկանյանը, Ա. Ներսիսյանը, Վ. Արությանը, Ս. Բաշինջաղյանը, Մարգարյանը, Տեր-Հովհաննիսյանը, Ա. Քոչարյանը, Կ. Սարգսյանը:

յանը և ուրիշներ։ «Թեորետիկը» զբաղվում է ոչ միայն իր անդամների մարքսիստական ինքնակրթությամբ, այլև ակտիվ պայքար է տանում «Սևան» միության շարքերում գտնվող նացիոնալիստական ուսանողության դեմ և կապ պահպանում Ռիգայի գործարանների սոցիալ-դեմոկրատական խմբակների ու բանվորների հետ»[5]։

«Թեորետիկների»-ի գործունեությունը ակտիվ ռևոլյուցիոն գունավորում է ստանում։ «Ստեփան Շահումյանի Ռիգայի շրջանի կյանքի մասին» հոդվածում Լ. Ֆլաումը գրում է. «Հավաքելով խմբակի անդամներին, Շահումյանը առաջարկում է կոչ. հրատարակել ուղղված հայ ժողովրդին, շարադրելով իրենց հայացքները ռևոլյուցիոն շարժման նկատմամբ, կոչելով ժողովրդին մասնակցելու այդ շարժմանը։ Այդ կոչը տպագրվեց հեկտոգրաֆի վրա և խմբակի անդամների միջոցով տարածվեց հայրենիքում»[6]։ Ինչպես տեսնում ենք, Շահումյանի գլխավորած «Թեորետիկ» խմբակը հեղափոխական գործունեություն է ծավալել ոչ միայն Ռիգայում, այլև Հայաստանում։ Չպետք է կասկածել, որ «Թեորետիկների» ձեռնարկումների մեջ Ադելյանը եղել է Շահումյանի ակտիվ աջակիցներից մեկը։

Ադելյանը եղել է Շահումյանի ոչ միայն գաղափարական համախոհների շարքում, այլև նրա շատ

---

[5] Վ. Ավետիսյան, *Ստեփան Շահումյան*, Երևան, 1953, էջ 13։

[6] Газета «Коммунист», орган ЦККП Армении. 1961, №221.



Ա. Աղելյանը, իր կինը՝ Վասիլոա Վարդանյանը և որդին՝ Հայկ Դանիելյանը 1898 թ.:

մտերիմ ընկերը։ Նրանց մտերմության լավագույն վկայություններից մեկը կարելի է համարել Ստ. Շահումյանի Թիֆլիզից բացառիկ ջերմությամբ Ադելյանին գրած նամակը։ Ահա թե ինչ է գրում Շահումյանը։

«Սիրելի՛ Ազարիա։ Ռիգայից վերադառնալուց հետո առաջին անգամ եմ գրիչ վերցնում ձեռքս։ Սկզբում ժամանակ չկար, իսկ վերջին օրերս էլ գնացել էի գյուղ, իմ ընկեր տանուտիրոջ մոտ։ Ի՞նչ նոր բան կա Ռիգայում։ Ինչ ես եկել եմ այստեղ, ոչ մի լուր չունեմ ոչ մի տեղից, ոչ էլ Ռուսաստանից առհասարակ. ի՞նչ վիճակում է շարժումը։ Ի՞նչ են ասում նոր մինիստրի և նրա բանդապետ օգնականի մասին։ Գրի՛ր խնդրեմ, այդ բոլորի մասին։

Հենց որ տեղ հասա, մտա «Մուրճ»-ի խմբագրությունը։ Քեզ ֆոնոգրաֆի ճշտությամբ կպատմեմ իմ ղրույցի մասին. խմբագրության փոքրիկ սենյակում ես տեսա երեք հոգու, նրանց բոլորին ես չէի ճանաչում և նրանցից ոչ մեկին էլ չէի կարող խմբագիր համարել, այն աստիճան նրանք քոսոտ էին։ Դիմեցի նրանցից մեկին և նրա պատասխաններից հասկացա, որ նա Լևոն Ս-ն է։

— Հ. Ադելյանը (Ա. Դանիելյանի կեղծ անունն է) ինձ խնդրել է իմանալ, թե արդյոք կտպագրվի նրա երկը։

Նա կռահեց, որ ես Ռիգայի Պոլիտեխնիկումի ուսանող եմ, ու ոտից գլուխ չափեց ինձ։

— Ո՛չ, չի տպագրվի։ (Իսկ դու, հավանորեն սպասում էիր)։

— Կարելի՞ է հետ վերցնել ձեռագիրը։

— Խնդրեմ.— և նա արկղից հանեց և ինձ հանձնեց փաթեթը։

— Կարելի՞ է իմանալ, թե ինչու չի տպագրվի։

— Ինչպես ասենք ձեզ։ Գիտեք ինչ, անհարմար է... որպես ստեղծագործություն, նա անհաջող է։

— Յահեսություն... և վերջ։

Այդ դիալոգի ժամանակ մյուս երկուսը լուռ նայում էին ինձ։ Հենց որ ես դուրս եկա, տաք վիճաբանություն սկսվեց. մի երկու երեք անգամ լսեցի «Ռիգա» բառը։ Ես հեռացա։ Հեռացա այն զգացումով, որ այդ մերժումը վատ կանդրադառնա քեզ վրա, թեպետև ես սպասում էի այդ։

Որքան ես կարողացա իմանալ Լ. Ս.-ին ծանոթ մարդկանցից, նա անհանդուրժելի և աշառու մարդ է, ասում են, թե այդ տեսակետից նա ավելի վատ է, քան Լեոն, այնպես որ նրա անաչառության մասին խոսք անգամ չի կարող լինել։ Ընդհանրապես այստեղ դժգոհ են «Մուրճ»-ից, որովհետև գտնում են, որ նա ոչ մի դեմք չունի։ Լ. Ս-ի տգիտության մասին, հատկապես պոեզիայի ասպարեզում, անեկդոտներ են պատմում և այլն։ Հուսով եմ, որ կկարողանամ ավելի մոտիկից ճանաչել ինչպես նրան, այնպես էլ «Մուրճ»-ի ու «Մշակ»-ի շուրջ խմբավորվող ամբողջ կուսակցությունը։

«Մշակ»-ում, հավանորեն կարդացիր մեր հասցեին արված պատկական շնորհավորանքները։ Ես ուզում էի մասնավոր կերպով պատասխանել «Վրձին»-ին։ Գուցե և պատասխանեմ։ Մամուլում պատասխանել չարժե, թեպետև կարելի էր հուսալ տալ նրանց այդ առիթը։

Ինչպե՞ս են քո պարապմունքները։ Ես առայժմ գուցե և մի քանի ամիս մնամ այստեղ, թեպետ և դա ինձ համար շատ ծանր կլինի։ Մեր ընտանեկան դրությունը այնքան վատ է, որ դժվար է հանգիստ մնալ։ Չգիտեմ, թե արդյոք կկարողանամ պարապել։ Ոչ մի տեղեկություն չունեմ մեր տղաներից՝ Սարուխանից, Նիկոլից և մյուսներից։ Վանոն նույնպես չի եկել։ Այդտեղ ինչպե՞ս անցավ ապրիլի 9-ի օրը։ Բարևներս կիսատին և մյուսներին, եթե նրանք այդտեղ են։ Այսօր հույս ունեմ ստանալու 30 ռուբլու ծանուցագիրը։ Արդյոք չե՞ն մոռացել։ Ընդունիր բարևներս։ Պյոտր Խաչիչն այստեղ է։ Առանձնապես մի վշտանար «Մուրճ»-ի մեռժման համար, գրողը տանի նրանց. մեր ժողովածուն լույս կտեսնի»[7]։

Երկրորդ նամակը, որ Շահումյանը գրել է Ուդունլարից Ադելյանին, ինտիմ բնույթ ունի և վկայում է նրանց տևական մտերմության մասին։ Նամակով Շահումյանը հայտնում է Ադելյանին իր ամուսնության մասին, ծրագրած աշխատանքների

---

[7] Ստ. Շահումյան, Նամակներ, Երևան, 1959, էջ 182—184։

մասին, հարց ու փորձ անում մտերիմ ընկերներից և այլն։

Իր քրոջը ուղարկած նամակներից մեկում Ստ Շահումյանը խորհուրդ է տալիս կարդալ «Մուրճ»-ում տպագրված Ադելյանի «Դառը խոստովանություն» պատմվածքը, հիշատակելով որ «Նրա հեղինակն այստեղի ուսանող է և իմ սիրելի ու պատվելի բարեկամ»[8]։

1900 թվականի ամռանը Ադելյանը ստիպված է լինում վերադառնալ հայրենիք։ Թոքերի հիվանդությունը արդեն զգացնել էր տվել իրեն և, բացի այդ, նա արդեն երեք երեխաների հայր էր, և անհրաժեշտ էր մտածել ընտանիքի գոյության մասին։ Մեղրիում Ադելյանը իր շուրջը համախմբելով գյուղի առաջավոր երիտասարդությանը, ձեռնարկում է սպառողական կոոպերացիայի հիմնադրման գործին։ Մեղրու կոոպերացիայի պատմությունը հայ գյուղի աշխատավորական խավերի պայքարի հետաքրքիր դրվագն է կազմում, որի մեջ խոշոր դեր է խաղացել Ադելյանը։ Կ. Կարագյանի «Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում» ուշագրավ ուսումնասիրության մեջ հետաքրքրական փաստեր են բերված այդ կոոպերացիայի կազմակերպման մասին, որի մեջ խոշոր դեր է խաղացել նաև Ադելյանը։ «Ադելյանի ներ-

---

[8] Ստ. Շահումյան, Գրականության մասին, Երևան, 1947, էջ 187։

կայութիւնը,— գրում է Կ. Կարագեանը,— նոր թափ ու եռանդ է հաղորդում ձեռնարկված գործին և նպաստում է նրա բարեհաջող ավարտմանը»[9]։

1901 թվականին Ադելյանը փայլուն կերպով ավարտում է Ռիգայի Պոլիտեխնիկումը ինժեներ քիմիկոսի կոչումով և ընդմիշտ վերադառնում հայրենիք։

Ռիգայի Պոլիտեխնիկումի հիմնադրման 50-ամյակի կապակցութեամբ հրատարակված ««Abum academicum» (1862—1912) Ադելյանի մասին հետևյալն է հաղորդվում։

„Danielians Asaria, aus Zelissacvctpol, geb. 17; zuni 1871. Rcolschule zu Baky. Rtuf ch. 92-94' 93-1901. D. ch, Zchrer d Math. physik u che mie in Eruvan. 1903։

Ռիգայի պետական արխիվումն է գտնվում Ադելյանին տրված Պոլիտեխնիկումի գովասանագիրը, ուսման մեջ ունեցած նրա առաջադիմութեան համար։

Նրա ավարտական դիպլոմում նշված են հանձնած քննութիւնների և պրակտիկ աշխատանքների գնահատականները։ Հետաքրքրական է նրա «Կրասավազային քարերի տարեկան 5 միլիոն արտադրութեան գործարանի նախագիծը» աշխատանքը։

Լավ գնահատականի է արժանացել «Տաք օդի թթվացնող ազդեցութիւնը կրի տեխնիկական հատ-

[9] Կ. Կարագյան, *Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում*, Երևան, 1957, էջ 106։

կության նկատմամբ ծծումբի հետ և առանց ծծումբի» ավարտական շարադրությունը[10]:

1901 թվականին ավարտելով Պոլիտեխնիկումը, Ադելյանը վերադառնում է Հայրենիք և հաստատվում Երևանում: Նա նշանակվում է քիմիայի և ֆիզիկայի դասատու Երևանի թեմական դպրոցում, ուր աշխատում է մոտ երկու տարի: Իր մանկավարժական նվիրված աշխատանքով Ադելյանը շատ շուտով վաստակում է ուսուցչության և աշակերտության սերն ու համակրանքը:

Թեմական դպրոցի մի քանի առաջավոր ուսուցիչների, հատկապես Ագապյանի և Քուշմանյանի հետ միասին, նա պայքարում է դպրոցի ուսուցչության մեջ տեղ գտած ռեակցիոն տարրերի դեմ:

Թեմական դպրոցի հոգաբարձական ընտրությունների ժամանակ Ադելյանը ակտիվորեն պայքարում և մերկացնում է թեմի առաջնորդ Սուքիաս եպ. Պարզյանին, որը ցանկանում էր հոգաբարձական ընտրություններին հոգաբարձու անցկացնել իր կամակատար Տիրայր վարդապետ Տեր-Հովհաննիսյանին:

Թեմական դպրոցի ուսուցիչներից Քուշմանյանը հետևյալ խոսքերով է բնութագրում Ադելյանին. «Նա մեծ ապագա խոստացող, պատրաստված երիտասարդ ուժ էր, պայծառ դեմք, անձնուրաց ընկեր և

10 Ռիգայի Պոլիտեխնիկումի արխիվից տրված տեղեկությունների համար մեր շնորհակալությունն ենք հայտնում Լ. Ֆլաումին:

վերին աստիճանի ինտելիգենտ մարդ ու համարձակ մարտնչող, դժբախտաբար փխրուն առողջությամբ»:

Իրոք զրկանքներով լի ուսման տարիները քայքայել էին Ադելյանի առողջությունը: Թոքախտով հիվանդ, նա 1903 թվականին, ստիպված է լինում թողնել Երևանի թեմական դպրոցը և վերադառնալ Մեղրի: Գյուղի ամառանոցային կյանքը (լիճկվազ) կազդուրում է նրան այն աստիճան, որ արձակուրդով գյուղ եկած եղբայրը՝ Քրիստաֆոր Դանիելյանը, տեսնելով նրան առողջացած, ստիպում է իր հետ մեկնել Թիֆլիզ և այնտեղ անցնել աշխատանքի: Սակայն Թիֆլիզում թոքերի հիվանդությունը վերսկսվում է նոր ուժով և նա հոկտեմբերի վերջերին ստիպված է լինում դարձյալ գյուղ վերադառնալ:

Ճանապարհին, գնացքում հիվանդի դրությունը ծանրանում է այն աստիճան, որ ստիպված է լինում իջնել Նախիջևանում, սակայն հիվանդանոց չլինելու պատճառով նա տեղավորվում է հյուրանոցում և այդտեղ էլ պառկում: Ադելյանը հեռագրով գյուղից կանչում է կնոջը և եղբորը, որոնք սակայն հասնում են նրա վերջին շնչին: 1903 թվականի նոյեմբերի 9-ին, Նախիջևանում Ադելյանը վախճանվում է: Աճյունը հարազատները տեղափոխում են Մեղրի և նոյեմբերի 12-ին հողին հանձնում:

կության նկատմամբ ծծումբի հետ և առանց ծծումբի» ավարտական շարադրությունը[10]:

1901 թվականին ավարտելով Պոլիտեխնիկումը, Ադելյանը վերադառնում է հայրենիք և հաստատվում Երևանում: Նա նշանակվում է քիմիայի և ֆիզիկայի դասատու Երևանի թեմական դպրոցում, ուր աշխատում է մոտ երկու տարի: Իր մանկավարժական նվիրված աշխատանքով Ադելյանը շատ շուտով վաստակում է ուսուցչության և աշակերտության սերն ու համակրանքը:

Թեմական դպրոցի մի քանի առաջավոր ուսուցիչների, հատկապես Ագապյանի և Քուշմանյանի հետ միասին, նա պայքարում է դպրոցի ուսուցչության մեջ տեղ գտած ռեակցիոն տարրերի դեմ:

Թեմական դպրոցի հոգաբարձական ընտրությունների ժամանակ Ադելյանը ակտիվորեն պայքարում և մերկացնում է թեմի առաջնորդ Սուքիաս եպ. Պարզյանին, որը ցանկանում էր հոգաբարձական ընտրություններին հոգաբարձու անցկացնել իր կամակատար Տիրայր վարդապետ Տեր-Հովհաննիսյանին:

Թեմական դպրոցի ուսուցիչներից Քուշմանյանը հետևյալ խոսքերով է բնութագրում Ադելյանին. «Նա մեծ ապագա խոստացող, պատրաստված երիտասարդ ուժ էր, պայծառ դեմք, անձնուրաց ընկեր և

---

10 Ռիգայի Պոլիտեխնիկումի արխիվից տրված տեղեկությունների համար մեր շնորհակալությունն ենք հայտնում Լ. Ֆլաումին:

վերին աստիճանի ինտելիգենտ մարդ ու համարձակ մարտնչող, դժբախտաբար փխրուն առողջությամբ»:

Իրոք զրկանքներով լի ուսման տարիները քայքայել էին Ադելյանի առողջությունը: Թոքախտով հիվանդ, նա 1903 թվականին, ստիպված է լինում թողնել Երևանի թեմական դպրոցը և վերադառնալ Մեղրի: Գյուղի ամառանոցային կյանքը (լիճկվազ) կազդուրում է նրան այն աստիճան, որ արձակուրդով գյուղ եկած եղբայրը՝ Քրիստաֆոր Դանիելյանը, տեսնելով նրան առողջացած, ստիպում է իր հետ մեկնել Թիֆլիզ և այնտեղ անցնել աշխատանքի: Սակայն Թիֆլիզում թոքերի հիվանդությունը վերսկսվում է նոր ուժով և նա հոկտեմբերի վերջերին ստիպված է լինում դարձյալ գյուղ վերադառնալ:


Ճանապարհին, դնացքում հիվանդի դրությունը ծանրանում է այն աստիճան, որ ստիպված է լինում իջնել Նախիջևանում, սակայն հիվանդանոց չլինելու պատճառով նա տեղավորվում է հյուրանոցում և այդտեղ էլ պառկում: Ադելյանը հեռագրով գյուղից կանչում է կնոջը և եղբորը, որոնք սակայն հասնում են նրա վերջին շնչին: 1903 թվականի նոյեմբերի 9-ին, Նախիջևանում Ադելյանը վախճանվում է: Աճյունը հարազատները տեղափոխում են Մեղրի և նոյեմբերի 12-ին հողին հանձնում:

* *
*

Հայ գրականության պատմության մեջ Ադելյանի գրական ժառանգությունը համարյա չի լուսաբանված։ «Դարեվերջի գյուղացիներ»-ի Ագապյանի, Բաբկենցի, Ճուղուրյանի և մյուսների գրական ժառանգությունը բնութագրելիս, հիշատակել են նաև Ադելյանին և անցել։

Եթե XIX դարի վերջին հայ գյուղացիների «համայնացուցակի» և նրանց թվում Ադելյանի գրական վաստակի մեջ դիտված են եղել որոշ արժեքներ, ապա այդ հանդիսացել է միայն գյուղաճանաչության հանգամանքը, ուստի և գնահատվել ոչ այնքան նրանց ունեցած վաստակի գեղարվեստական արժանիքներով, որքան նրանց երկերի փաստագրական նշանակությամբ։

Սովետական գրական քննադատության մեջ առաջին անգամ ակադեմիկոս Արսեն Տերտերյանն է «Նկատողություններ մեր գյուղագիրների մասին» հոդվածում խոսել հայ գեղջկական գրականության մասին՝ սկսած Խ. Աբովյանից մինչև Ակսել Բակունցը, երբ «այդ հարյուրամյակի ընթացքում քսանհինգ հայ գյուղագետներ պրպտել են մեր գյուղական կյանքը, ուսումնասիրել են այդ կյանքի հասարակական ու տնտեսական երևույթները, և այդ ամենը մարմնացրել են գրական ձևերի, տի-



Ադելյանի հուշարձանը Մեղրիում:

պերի և պատկերների մի երկար համայնացուցակ»[11]։

Այդ ուշագրավ աշխատության մեջ ակադեմիկոս Տերտերյանը ցույց է տվել շուրջ մի հարյուրամյակի ընթացքում հայ գյուղագիրների ստեղծագործության պրոգրեսիվ կողմերը, սկսած հայ գյուղի ներդաշնակ կյանքը խարխլող կապիտալիզմի, և գյուղը քայքայող առևտրա-վաշխառուական կապիտալի դեմ մաքառման դրվագներից մինչև պանդխտության և սակավահողության երևույթների համարձակ մերկացումները։ Բնութագրելով գյուղագիրների երկերի հասարակագիտական բովանդակությունը և ապա այդ բովանդակության գեղարվեստական արտահայտությունը, ակադեմիկոս Ա. Տերտերյանը մի հոդվածի շրջանակում չէր կարող խոսել գյուղը նկարագրող կրոսեր սերնդի գրողների յուրաքանչյուրի հասարակական մտայնության և գեղարվեստական արժանիքների մասին։ Սակայն իրավացիորեն Տերտերյանը գտնում է, որ «նրանց աշխարհայացքի մարմնացումը որոշ տիպերի մեջ, ռուս նարոդնիկներից նրանց կրած ազդեցությունը, վերջապես նրանց իդեալների գրական-հասարակական արժեքը—ահա խնդիրներ, որոնք պետք է մի-մի թեմա հանդիսանան մեր գյուղագիրների գեղարվեստական դեմքը պարզելու համար»

---

11 Ա. Տերտերյան, Նկատողություններ մեր գյուղագիրների մասին, ՀՍԽՀ պետ. համալսարանի տեղեկագիր, 1927, № 2—3, էջ 258։

3—97

Եթե Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Մուրացանը արժանացել են բանասիրության սևեռուն ուշադրության, ապա ցավոք պետք է նշել, որ հայ գյուղագիրները դրեթե դուրս մնացին մեր բանասիրության տեսադաշտից։ Ավելին. գրողների այդ սերունդը մնաց Մուրացանի գրական ժառանգության ստվերում, նրանց վաստակը գնահատելով որպես Մուրացանի գյուղափրկիչ ծրագիրը հավաստող մի սերունդ, որոնք իրենց գյուղաճանաչությամբ հաստատել են միայն այդ ծրագրի կենսագործման անհրաժեշտությունը և հրատապությունը։

Այդ մտայնությունը հիմք է տվել Ադելյանին համարելու որպես Մուրացանի սոցիալական ուտոպիան ջատագովող գրողներից մեկը։ Ակադեմիկոս Ա. Տերտերյանը իր մի այլ աշխատության մեջ գրում է. «Ադելյանն ինքը և իր ինտելիգենտները մի երազ ունեն—ապագա հայ գյուղը, ուր «համերաշխության ոգին կամաց-կամաց մուտք է գործում... բոլորն սկսում են սիրով և փոխադարձ օգնությամբ ապրել (տե՛ս «Նեռհակ Առաքելը» պատմվածքը)։ Դա արդեն Մուրացանի սոցիալական ուտոպիան է»[12]։

Մնում է զարմանալ, թե ինչպես մեր բազմավաստակ գիտնականը կարող է Ադելյանի երևույթի հիման վրա այդպիսի հապճեպ եզրակացության

---

12 Ա. Տերտերյան, *Մուրացանը և գարնվերջի գյուղագիրները*, Առաջադրություն, № 7, 1930, էջ 29։

հանգել, երբ իր բովանդակ ստեղծագործությամբ Ադելյանը հերքել է հենց այդ սոցիալական համեբաշխության հնարավորության թեզը։

Յավոք, գյուղագիրների մասին ստեղծված այդ կարգի մտայնությունը նախադրյալներ է ստեղծել դուրս բերելու նրանց ստեղծագործությունը գրական մնայուն արժեքների պատմության ցանկից, ուստի պատահական չէ, որ նախահեղափոխական շրջանի դպրոցական դասագրքերում իրենց արժանի տեղը ունեցող գրողների այդ սերունդը դուրս մնաց գրականության պատմության դպրոցական ծրագրերից և դասագրքերից։

Պետք է նկատել, որ «գյուղագիրներ» քաղաքագիությունն ստացած տերմինով համահարթվեց 90-ական թվականների հայ իրականության մեջ ասպարեզ եկած գյուղը պատկերող տարբեր տաղանդի և հասարակական մտայնության տեր արձակագիրների դերն ու նշանակությունը։ Այդ համահարթումը իր արտահայտությունը գտավ նրանց ստեղծագործության հասարակական արժեքը նվաստացնող բնութագրումներով՝ բնավ չմտահոգվելով ճշգրտելու յուրաքանչյուր արձակագրի տաղանդի առանձնահատկությունը, նրանց աշխարհայացքի մեջ եղող տարբերությունները, ինչպես և յուրաքանչյուրի տեղն ու դերը հայ գրականության պատմության մեջ։ 1950 թվականին հրատարակված «Հայ գյուղագիրներ» ստվարածավալ ժողովածուի առաջաբանում կարուկ ձևով խոսվում

է այն մասին, թե «խիստ սահմանափակ են եղել մեր գյուղագիր հեղինակների աշխարհայացքը» և գյուղագիրների վրա տարածելով Լենինի Տոլստոյին տված բնութագրման հատատումը, որ նրանք, օրինակ, քննադատում են հոգևորականությունը, սակայն ոչ թե նրանց ժխտելու միտումով, այլ ինչպես Տոլստոյը, ցանկանում են «պաշտոնական տերտերների տեղ բարոյապես համոզված տերտերներ դնելու, այսինքն, մշակում ամենանրբին, ուստի և առանձնապես նողկալի տերտերականություն»։ Եվ վերջապես այդ առաջաբանում խոսվում է այն մասին, թե «մեր գյուղացիները օբյեկտիվորեն պաշտպանել են ցարիզմը»։ Եթե փորձենք կոնկրետացնել այդ բնութագրումները գյուղագիր արձակագրի որևէ ստեղծագործության նկատմամբ, ապա դժվար չի լինի նկատել դրանց անընդունելի լինելը։ Հայտնի է, որ Գ. Պլեխանովը զբաղվել է նարոդնիկ-բելետրիստների ստեղծագործության վերլուծությամբ և ցույց տվել նարոդնիկական գրական շարժման ասպարեզ գալու ընդհանուր պայմանները, սակայն ինչպես հայտնի է, Գ. Պլեխանովը քննության է առնում յուրաքանչյուր նարոդնիկ-բելետրիստի գրական ժառանգությունը՝ վերցնելով նրան իր աշխարհայացքի զարգացման մեջ և իր արվեստի առանձնահատկություններով։

Ժամանակն է, որ Ագապյանի, Ճուղուրյանի, Ադելյանի, Մալխասյանի, Սանդալի և մյուսների ստեղծագործության գնահատության և արժեքա-

վորման հարցը դառնա մեր բանասիրության ուսումնասիրության առարկան, նպատակ ունենալով վեր հանելու յուրաքանչյուր գրողի ունեցած վաստակը հայ գրականության պատմության մեջ։

Ադելյանի մասին խոսելիս, պետք է նկատել, որ մինչ օրս մենք չունենք նրա ամբողջական կենսագրությունը, ստիպված ենք խոստովանել նաև, որ ըստ արժանվույն չի գնահատվել այն նշանակալից փաստը, որ հայ իրականության մեջ Ադելյանը առաջինն է եղել, որ ոչ միայն պրոպագանդել է սպառողական կոոպերացիայի գաղափարը, այլև գործնականորեն իրականացրել է այն։ Եվ վերջապես չի ստեղծված թեկուզ մի համեստ մենագրություն՝ նվիրված նրա գրական-ստեղծագործության գնահատության և արժեքավորման հարցին։

Բավական է հիշատակել այն փաստը, որ վերջին 40 տարիների ընթացքում Ադելյանի ստեղծագործության գնահատությանը նվիրված հոդվածով հանդես է եկել միայն բանասեր՝ Ա. Ինճիկյանը, որը, իրավամբ, գրում է, թե «նրա թողած գրական ժառանգությունը իր գեղարվեստական-հասարակական արժեքով մեր գրականության պատմության հիմնական ֆոնդի մեջ է մտնում»[13]։

Որն է եղել հայ գյուղագիրների և նրանց թվում Ադելյանի ստեղծագործության թերագնահատության պատճառը։ Այդ, նախ և առաջ բխել է նրանց

[13] Ա. Ինճիկյան, Ա. Ադելյան, «Խորհրդային գրականություն», 1939, № 10—11։

երկերի հրապարախոսական միտումից։ Խոսք չունենք. անցյալ դարի վերջին, հայ գյուղագիրների նպատակը եղել է ոչ այնքան գեղարվեստական ստեղծագործության պահանջը, որքան հայ գյուղի կենսական հարցերի լուսաբանության հրատապ ցանկությունը։ Հայտնի է, որ ռուս նարոդնիկ գրողներին ևս ղբաղեցրել են այդ բնույթի հարցերը։ Նարոդնիկ-բելետրիստներին գերազանցապես ղբաղեցրել է ռուս գյուղացին իր սոցիալական վիճակով, իր սովորություններով և հայացքներով, ռուսական գյուղի կենցաղի և երկրագործական աշխատանքի պայմաններով և այլն։ Գ. Վ. Պլեխանովը Գ. Ուսպենսկուն, Կարոնինին, Նաումովին նվիրված փայլուն հոդվածներով ցույց է տվել, որ նարոդնիկ գրողներին հետաքրքրել են ոչ այնքան անհատական բնավորությունները և նրանց հոգեբանական ապրումները, իրենց հերոսների ներքին աշխարհը, կրքերն ու հույզերը, որքան աշխատավորական զանգվածների հասարակական կենցաղը, նրանց բարքերը ու սովորույթները։ «Կան հոգեբան-գեղարվեստագետներ,— գրում է Պլեխանովը,— որոշ բացառություններով նարոդնիկ-բելետրիստներին կարելի է անվանել սոցիոլոգ-գեղարվեստագետներ»։ Տուրգենևի և Ուսպենսկու ստեղծագործությունների հակադրության օրինակով, Պլեխանովը ցույց է տվել, որ Տուրգենևը, որը պակաս կրքոտությամբ չէ արձագանքել հասարակական կյանքի այրող հարցերին, այնուամենայ-

նիվ, զբաղվել է գերազանցապես էսթետիկայով, քան «հարցերով», մինչդեռ Գլեբ Ուսպենսկին հասարակական կյանքի հարցերին մոտեցել է գերազանցապես որպես հրապարակախոս՝ կերպարներին զուգակցելով իր մեկնաբանություններն ու դատողությունները: Գ. Ուսպենսկուն զբաղեցնում էին այն հարցերը, որոնք գյուղական կյանքի բարվոքման համար հրատապ հետաքրքրություն էին ներկայացնում: «Նարոդնիկ զրողների մոտ հասարակական շահերը գերակշռում են զրական շահերից», գրում է Պլեխանովը: Սակայն ոչ ոք, և դրանց թվում Պլեխանովը, չի փորձել նսեմացնել Ուսպենսկու, Զլատովրատսկու կամ, ասենք, Կարոնինի և մյուս նարոդնիկ-բելետրիստների ստեղծագործության նշանակությունը ռուս գրականության մեջ:

Ընդհակառակը, Պլեխանովը ցույց է տվել, և այդ անպայման ամբողջությամբ վերաբերում է նաև մեր գյուղագիրներին, թե «դա խորապես ռեալիստական գրականություն էր... ջերմացված զգացմունքներով և ներթափանցված մտքով» և որ այդ գրականությունը պետք է ուսումնասիրել նույնքան ուշադիր, որքան վիճակագրական ուսումնասիրությունները ռուսական ժողովրդական տնտեսության մասին:

Դժվար չէ նկատել, որ ինչպես հայ գյուղագիրների, այնպես էլ ռուս նարոդնիկ-բելետրիստների երկերում հասարակական շահագրգռությունների

տիրապետող տրամադրությունը իր կնիքն է դրել նրանց գեղարվեստական երկերի մշակման վրա։ Այդ պատճառով իսկ կարելի է ոչ միայն հայ, այլև ռուս նարոդնիկ-բելետրիստների բաղմաթիվ գործերում ցույց տալ, թե գեղարվեստական և թե լեզվական կարգի բազմաթիվ անհարթություններ և դիսոնանսներ։

Հայ գյուղագիրների կրտսեր սերունդի ներկայացուցիչները ևս իրենց երկերում աշխատել են արձագանքել գյուղացուն հրատապորեն հուզող հարցերին, փորձել են իրենց ստեղծագործություններում վեր հանել գյուղական կյանքի ճշմարտացի պատկերը, առանց հոգալու այդ երկերը «սրբագան տեսք»-ի բերելու մասին։ Այդ տեսակետից բավական ուշագրավ են «Մուրճ»-ի գրախոսի դիտողությունները Ադելյանի մի պատմվածքի մասին, որը ստիպված է նախազգուշացնել ընթերցողին, որ չի անդրադառնալու պատմվածքի գեղարվեստական արժանիքներին «որովհետև հեղինակը (Ադելյանը) հայտնել է խմբագրությանը, որ երկը գեղարվեստական տեսակետից պեաք է վերամշակվի»։

«Մուրճ»-ի մի այլ գրախոս, քննության առնելով Հ. Ճուղուրյանի պատմվածքներից մեկը, նկատում է. «Անուշադիր լինելը նրա գրվածքներում երևում է ամեն կողմից, թե նյութի ընտրության, թե գրվածքի մասերի փոխադարձ կապի ու դասավորության, թե նյութը մշակելու եղանակի, թե գրվածքի ձևի և լեզվի և թե նույնիսկ հրատարակության կող-

մից։ Սա մի անարվեստ կերպով գործող շնորք է, որին անծանոթ են գործելու եղանակներն ու ճանապարհները»[14]։

«Նրանց,— գրում է Պլեխանովը,— հարկադրում է գրիչ վերցնել ոչ այնքան գեղարվեստական ստեղծագործության պահանջը, որքան իր և ուրիշների համար մեր հասարակական հարաբերությունների այս կամ այն կողմը պարզելու ցանկությունը»։

Եթե մեր գյուղագիրների և նրանց թվում Ադելյանի երկերում կարելի է գտնել XIX դարի վերջին տասնամյակի հայ գյուղի ճշմարտացի նկարագիրը՝ գյուղացուն հուզող կենսական հարցերով, ապա դա գերազանցապես թելադրված է եղել գյուղական աշխատավորությանը օգնելու, գյուղի «անհետաձգելի հարցերին» լուծում տալու ջերմ ցանկությամբ։ Իհարկե, Ադելյանի երկերում չկան գեղարվեստական մշակույթի և փորձի այն հնարները, ինչպիսիք կան, օրինակ, Մուրացանի երկերում։ Բայց Ադելյանի պատմվածքներում նույնպես կա ճշմարտացի արվեստ, ջերմացված՝ աշխատավոր գյուղացու հանդեպ ունեցած խոր սիրով և կարեկցությամբ։

Հայտնի է, որ անցյալ դարի 80-ական թվականներին ռուս տարատոհմիկ մտավորականությունը ամենայն հավատով լի, ձեռնամուխ եղավ ժո-

---

[14] «Մուրճ», 1899, № 2—3, էջ 288։

զովրդական կյանքի բազմակողմանի ուսումնասիրությանը, նպատակ ունենալով փրկել գյուղացուն՝ սպառնացող վերահաս վտանգից։

70—80-ական թվականների հետռեֆորմյան տարիների մի ամբողջ պատմաշրջանի ռուս դրականության թեման գերազանցապես գյուղային էր իր բախտի և ճակատագրի հարցերով, մի դրականություն, որը փորձում էր գյուղական կյանքի զարգացման համար կուլաններ և ուղիներ գտնել։ Հայ գյուղագիրները, և դրանց թվում Ադելյանը նույնպես, զբաղվեցին հայ գյուղի «գործերով», ունենալով մի սևեռուն նպատակ՝ փրկել հայ աշխատավոր գյուղացուն առևտրա-վաշխառուական և արդյունաբերական կապիտալիզմի կործանարար հետևանքներից։

* *
*

Ադելյանը գրական ասպարեզ իջավ անցյալ դարի 90-ական թվականներին։ Այդ տասնամյակը բավական ուշագրավ է հայ գյուղի տնտեսական աթագ փլուզման տեսակետից։ Բավական է թեկուզ թռուցիկ կերպով աչքի անցկացնել գյուղի իրական վիճակը պատկերող հայկական գավառներից ստացված այդ տարիների թղթակցությունները ու հոդվածները, որպեսզի ակնհայտ դառնա, թե ինչպիսի թշվառ և տնտեսական ծանր կացության մեջ

է դրված եղել հայ շինականը անցյալ դարի վերջին տասնամյակում։

Սարգիս Տեր-Զաքարյանը իր «Գյուղական հողային հանդամանքները» հոդվածում, խոսելով Զանգեզուրի գավառի պարսկական սահմանապահին եղող գյուղերի մասին (այդտեղ է նաև Մեղրի գյուղը) գրում է. «Անցա ամբողջ Զանգեզուրը, ոչ առաջին անգամ տեսա շատ գյուղեր, և տպավորությունները, որ ստացա, ուղղակի ճնշող էին. ճնշող այնքան, որ նրանց տակ երկար մնացողը կարող է դժվել»։ Ընդհանուր տպավորություններից անցնելով գյուղերից մեկի գյուղացու հողային ունեցվածքի հարցերին, Ս. Տեր-Զաքարյանը շարունակում է. «Այդ գյուղը ունի երկու հարյուր տուն բնակիչ և երկու հարյուր դեսյատին հող ոչ հավասարապես բաժանված բնակիչների վրա... բնակիչների մեծամասնությունը հաշվի առնելով, ծուխը կես դեսյատին հող ունի. կան և այնպիսի ծխեր, որ ունեն մեկ քառորդ դեսյատին հող»[15]։

Հայտնի է, որ հայ գյուղացու պանդխտության պատճառներից մեկը հանդիսացել է հողատակավությունը, ուստի և թղթակիցը խորը կսկիծով է խոսում գյուղը քայքայող այդ երևույթի մասին.

«Աղքատության գավազանը քշում է դեպի օտարություն տասներկու տարեկան մանուկից սկսած

---

15 Ս. Տեր-Զաքարյան, Գյուղական հողային հանդամանքներ, «Մուրճ», 1893, № 5, էջ 784։

մինչև հիսուն տարեկան մարդը, զրկելով մեկին հոր, մոր և քրոջ սիրուց, մյուսին նշանածի, կնոջ և երեխաների սիրուց»[16]։

Ղարաքիլիսայից Մ. Տեր-Հարությունյանը «երկրագործ փամբակեցու դրությունը» հոդվածում գրում է. «Վերջին պատերազմից հետո գյուղացու դրությունը պարբերական դառնության մեջ է անցնում. էլ չկա անցյալ անհոգ և խաղաղ նահապետական կյանքը. այսօր նա մի կերպ կյանքը քարշ է տվել, մտածում է վաղվա համար։ Չկա «ռանչպար», որ մինչև կոկորդը թաղված չլինի պարտքի մեջ, ուստի, եթե ցանում է, վաշխառուինն է, եթե կթում է իր մի կամ երկու կովը, նույնպես, եթե խուզում է իր մի կամ երկու տասնյակ ոչխարը (իսկապես ոչխար պահելը բացառություն է), եթե դրանց կաթից պանիր է պատրաստում, դարձյալ վաշխառուինն է, եթե չարքաշությամբ ձեռք է բերում մի քանի ռուբլի, նրանով էլ տերության հարկն է վճարում, եթե միայն բավականացնում է. հակառակ դեպքում կծախվի նրա «վերմակ» կարպետը կամ միակ կաթսան. միով բանիվ շատ ուրախ և անտրտունջ կլինի, եթե իր գերդաստանին «ցամաք» հաց միայն հայթհայթի»[17]։

---

[16] Ս. Տեր-Ջամարյան, *Գյուղական հողային հանդամանքներ*, «Մուրճ», *1893*, № *5*, էջ *785*։

[17] Մ. Տեր-Հարությունյան, *Երկրագործ փամբակեցու դրությունը*, «Մուրճ», *1893*, № *5*, էջ *812*։

Խոսելով գյուղացու տնտեսական քայքայման և աղքատության դուռը հասցնող վաշխառուների մասին, Մ. Տեր-Հարությունյանը շարունակում է. «Այսպիսի անտանելի դրության մեջ դրամատերը, անգութ դրամատերը, թումանին (տասը ռուբլի) ամսական 20—30 կոպեկ պակաս տոկոս չէ վերցնում և տալիս է ոչ առանց գրավականի... ինչ կարծիք, որ գրավականն էլ կես գին հաշվելով, գյուղացին իր մի քանի մանեթանոց իրերը գրավ դնելով, դեռ մինչ վերջին օրերս ապրել է. բայց ինչ կանի մի քանի օրից կամ մի քանի շաբաթից հետո, երբ ծախելու, գրավ դնելու ոչ մի բան չի ունենա։ Բայց երևակայեցեք, այսպիսի տագնապի ժամանակ վրա է հասել և հարկը. ինչպես պետք է վճարվի,— Ամբողջ ժողովուրդը մնացել է շվարած»[18]։

Եվ վերջապես «Մուրճ» ամսագրի խմբագիր Ավետիք Արասխանյանը «Հայ քաղաքացին հայ գյուղացու առջև» առաջնորդող հոդվածում գրում է. «Եվ սակայն, մեր գյուղերը հեծծում են պարտքերի տակ. գյուղական ամբոխը կատարելապես ճորտ է տեղական «կուլակների» անագորույն ձեռքերում. նույնիսկ տարեկան հունձը մեծ մասամբ գյուղացունը չէ և նա չի կարողանում օգտվել հաջող գնե-

---

[18] Մ. Տեր-Հարությունյան, *երկրագործ փամբակեցու-դրությունը, «Մուրճ», 1893, № 3, էջ 814։*

րից,— և այդ բոլորը գյուղական ամբոխի ինքնաուրույնից, որի գոյությունը ապատարար է հռչակվում, իբրև ամենագլխավոր ապացույցը ազգի առողջ կազմի, փրկիչ հայ անվան, իբրև ազգի»[19]:

Մենք սահմանափակվում ենք միայն «Մուրճ» ամսագրի մի քանի ինքնակենսագրություններից և հոդվածներից վերցված մեջբերումներով: Հայ գյուղի և հայ գյուղացու տնտեսական ծանր վիճակի մասին կարելի է բազմաթիվ այլ վկայություններ բերել: Հայկական բազմաթիվ պարբերականներ, պերճախոս փաստերի և թվերի լեզվով պատմում են մեզ 90-ական թվականների հայ գյուղի բացարձակ փլուզման կենսագրականը և ուրվագծում նրա ծանր վիճակի պատկերը: Հողազրկություն, տնտեսական քայքայում, պանդխտություն, ցավատանջ սարսափ վաղվա օրվա նկատմամբ, բարոյական հին կռվանների փլուզում. ահա հայ գյուղի անցյալ դարի 90-ական թվականների իրական պատկերը, երբ Անդրկովկասում կապիտալիզմը արագորեն իր զարգացումն էր ապրում:

Հայ գյուղացու ցավատանջ կյանքի գեղարվեստական ընդհանրացումը տվել է Հ. Թումանյանը «Հառաչանք» պոեմում, որը լույս է տեսել «Մուրճ» ամսագրում հենց այդ տարիներին:


---

19 Ա. Աբասխանյան, *Հայ քաղաքացին հայ գյուղացու առջև*, «Մուրճ», 1897, № 9, էջ 1150:

Թև որ ձեռքներս էլ մի բան է ընկնում
Չենք կարողանում բերան հասցընենք...
Էսքան տանջվելով քրտինք ենք անում,
էլ էն սևերեսն, էլ էն սուվածն ենք[20]:

---

[20] Հ. Թումանյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1953, էջ 157:



ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

1894 թվականին, «Մուրճ» ամսագրի օգոստոսյան համարում լույս տեսավ Ադելյանի «Ներհակ Առաքելը» պատմվածքը։ 22-ամյա երիտասարդ արձակագրի առաջին գրական ելույթն էր հայ առաջավոր պարբերականներից մեկում, որի հետ Ադելյանը կապեց իր հետագա գրական ամբողջ գործունեությունը։ «Ներհակ Առաքելը» պատմվածքի թեման 90-ական թվականների հայ գյուղում առաջ եկած ներհակ ուժերի պայքարն է, մի կողմից գյուղական հասարակության շահերի պաշտպանությամբ տոգորված առաջավոր մարդկանց, իսկ մյուս կողմից այդ նույն հասարակության շահերի դեմ ուղղված և իրենց անձնական բարօրության մասին հոգացող մարդկանց միջև։

Սակայն Ադելյանի պատմվածքը առանձին նշանակություն և հետաքրքրություն էր ներկայում,

որովհետև հայ գրականության գեղջկական դպրոցի կողմից բազմիցս շոշափած այդ թեման տվյալ պատմվածքում պատկերված է սոցիալական բախման իր սուր հետևանքներով՝ ձգտելով փաստարկել գյուղի աշխատավորական խավերի տնտեսական և բարոյական կովանների պաշտպանության անհրաժեշտությունը։ Պատմվածքը լավագույն հավաստումն էր այն բանի, որ հայ գրականության դեմոկրատական ավանդները ոչ միայն գեղարվեստական, այլև հրապարակախոսական պաշտպանություն են գտնում Ադելյանի այդ ստեղծագործության մեջ, մի տենդենց, որը մնաց ուղենշող նրա բովանդակ գրական գործունեության համար։ Պատմվածքի սյուժեն պարզ է։ Գյուղ է վերադարձել Ներսիսյան դպրոցն ավարտած Սմբատ Մխիթարյանը՝ ոգեշնչված գյուղին օգնելու և գյուղացուն օգտակար լինելու ջերմ ցանկությամբ։ Առաջին գործը, որին նա ձեռնամուխ է լինում արտակարգ եռանդով, երեխաների ուսուցման կազմակերպման հարցն է, իսկ առաջին հերթին՝ դպրոցի շենքի կառուցման գործը։ Բացատրական աշխատանքով Մխիթարյանը կարողանում է համոզել գյուղացիներին՝ դպրոց բացել, և տնտեսությունից 3 ռուբլի ուսումնահարկ դանձելով, ձեռնամուխ լինում դպրոցական շենքի կառուցման գործին։ Սակայն Մխիթարյանի լուսավորչական գործունեությունը հանդիպում է գյուղի ներհակ ուժերի համառ դիմադրությանը։

Ադելյանը ցույց է տալիս, որ այդ ներհակ ուժերի դիմադրությունը պայմանավորված է ոչ թե նրանց հետամնացության կամ բարոյական այլ շարժառիթներով, որքան նրանց տնտեսական շահագրգռություններով։ Դպրոցի կառուցումը ինչ-որ չափով նյութական վնաս է հասցնում գյուղի ներհակ տարրերին։ Գյուղի ներհակ անձնավորություններից է մղդսի Մոսին, որը տեր-Թոդիկյան դասեղ տիպերից է, ունի մասնավոր դպրոց, որը նրա համար ապրուստի միջոց է հանդիսանում։ Հասկանալի է, որ Մխիթարյանի գործի հաջողության դեպքում, մղդսի Մոսին պետք է կորցներ իր աշակերտներին, հետևապես և իր ապրուստի միջոցը, ուստի նա ամեն կերպ ձգտում է խափանել դպրոցի շինարարությունը։ Գյուղի մյուս «ներհակը» միջակ տնտեսության տեր գյուղացի Առաքելն է, որը Մխիթարյանի ձեռնարկումների հետևանքով վտանգված է տեսնում իր քեռուց սպասվելիք ժառանգությունը, որովհետև Մխիթարյանը համոզել է նրա անժառանգ քեռուն իր ունեցվածքը կտակելու դպրոցին։ Ադելյանը ցույց է տալիս, որ միայն գյուղի «ներհակ ուժերը» չեն, այլ գյուղացիներից շատերը, որոնք դարձել են ծայր եսապաշտներ, նեղ ու չնչին հաշիվներից կուրացած մարդիկ, որոնք ընդունակ են դիմելու ամեն մի ծայրահեղ միջոցի։ Ներհակ Առաքելը սպանում է Մխիթարյանին։ Ճիշտ է, պատմվածքի մեջ դեղարվեստորեն և հոգեբանորեն թույլ է պատճառաբանված Առաքելի կատա-

րած սպանությունը, սակայն Ադելյանի համար կարևոր է ընթերցողին համոզել մի բանում, որ հարստություն կուտակելու ճանապարհին գյուղական դորբանները միջոցների մեջ խտրություն չեն դնում: Մխիթարյանի սկսած գործը՝ դպրոցի կառուցումը, ավարտվում է, թեպետև ընթերցողը մնում է տարակուսած այդ գործի հաջող ելքի նկատմամբ: Ադելյանը խոսում և պրոպագանդում է լուսավորչական ձեռնարկումների անհրաժեշտությունը և կարևորությունը, սակայն որպես զգաստ ռեալիստ, չի հավատում, որ լուսավորչական ձեռնարկումներով կարելի է գյուղի սոցիալական հակամարտությունները վերացնել: Գյուղական կյանքի ճշմարտացի նկարագիրը բերում է ընթերցողին այն համոզման, որ լուսավորչական և բարեկործչական ամեն կարգի ձեռնարկում դատապարտված է ձախողման, ոչ թե մարդկանց կամայականության պատճառով, այլ գյուղում ստեղծված սոցիալական սուր շերտավորման և խորը հակասությունների հետևանքով:

Ահա մի պատկեր գյուղական համայնքի ժողովից, ուր գյուղացիները քննության են առնում դպրոցի շինարարության խնդիրը:

«Բարձրացել էր մի մեծ աղմուկ, որի մեջ լսվում էին վեճեր, բացականչություններ, բարձր ծիծաղ և այլն:

— Է՛հ, դժվար գլուխ գալու բան է,— խոսում էին մի խմբում:

— Ինչո՞ւ, տնաշենի մարդ, դժվարը սկսելն է։

— Փող շատ կգնա, փո՛ղ... դա իսկի մի տարում գլուխ գալու բան է՞[1]։

Իսկ ներհակ Առաքելի համախոհների բանակից կարելի է լսել հետևյալ բացատկանչությունները։

«Չենք ուզում, չե՛նք ուզում, զոռի բան է՞. ով իրա որդուն տալու է ուսումնարան՝ նա թող թղթին ձեռք քաշի... մենք ոչ ուսումնարան ենք ուզում, ոչ էլ երեք մանեթ կտանք։ Դա էլ թափավորական հարկ է, ի՞նչ է...»[2]։

Ադելյանը այդ պատմվածքում ցույց է տալիս նաև գյուղական կյանքի մեջ ծնունդ առած մի շարք հոռի երևույթներ, ինչպիսիք են գյուղացու տնտեսական կարիքը, սակավահողությունը, չրպակասությունը և այլն։ Պատմվածքը նշանակալից է այն տեսակետից, որ պատկերում է ոչ միայն հայ, այլև ադրբեջանցի աշխատավորների ծանր կացությունը։ Ադելյանը ցույց է տալիս, թե ինչպես ադրբեջանցի արհեստավորը, որին կարիքը և պարտքատերերը քշել են պանդխտության, կորցնում է իր երկու տարվա վաստակը։ Ահա մի պատկեր այդ հուզիչ տեսարանից։

«Փինաչին վաղուց էր, որ չափչփում էր հայ գյուղերը։

Վերջին երկու տարիներում նա մնում էր Հ. և Տ. գյուղերում, որովհետև նա բավարար գործ էր

[1] Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, Երևան, 1950, էջ 35։

[2] Նույն տեղում, էջ 38։

գտնում։ Ամեն օր սոխ ու հաց ուտելով էր նա հետ դցել այդ 70 մանեթը։ Այժմ պատրաստվում էր, որ տուն գնա, պարտքը վճարի, տան համար ցորեն առնի և կրկին դիմե պանդխտության, բայց ահա այդ ամենը մի րոպեում տակն ու վրա էր եղել... խե՜ղճ փինաչի, չափչփիր դեռևս գյուղերը, նստիր էլի գոմերում, բիղն ու թելը ձեռդ առ և ցամաք հաց ու սոխ կեր...»[3]։

Փինաչու հետ գցած այդ գումարը գողացել է իր հետ բնակվող Հյուսեյնը, որը փող է պարտք ներհակ Առաքելին և գողացել է ընկերոջ տարիների վաստակը։

Այսպիսով, Ադելյանի առաջին պատմվածքը գյուղական կյանքի ռեալիստական նկարագրի լայն ընդգրկում ունի, գյուղի սոցիալական և ազգային տարբեր խավերի վիճակի պատկերացումից մինչև փողի կուտակման ենթդով վարակված դրամատեր զորբաների նկարագիրը, գյուղական աղքատության պատճառների տնտեսական մեկնաբանությունից մինչև հասարակական կյանքի հոդի երևույթների հրապարակախոսական մերկացումը,— այդ ամենը անպայման պատմվածքի էական արժանիքն են կազմում։ Սակայն պատմվածքի մեջ առանձնակի ուշադրության է արժանի նրա հերոսը, Սմբատ Մխիթարյանը, որը իր գաղափարական նպատակադրությամբ պատմվածքում կարևոր նշանակություն ունի։

[3] Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 50։

Նախ Ադելյանը գյուղ է ուղարկում իր պատմվածքի հերոսին՝ նրան դաղափարապես նախապատրաստելուց հետո, ցույց տալով նրա իդեական զարգացման ընթացքը։ Ադելյանը կամենում է ցույց տալ ոչ թե սոսկ լուսավորական գործունեությամբ տոգորված երիտասարդի, որ գյուղ է եկել միայն կրթություն սերմանելու ցանկությամբ, այլ մի մարդու, որ ունի լայն և հեռաթափանց ծրագրեր։ Սմբատ Մխիթարյանի գործունեության և հայացքների մեջ դժվար չէ նկատել, որ իր լուսավորական ձեռնարկումների ժամանակ նա ձգտում է իրականացնել մի շարք պատվիրաններ, որոնք նա ժառանգել է 60-ական թվականների ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների դաղափարական դինանոցից։ Պատահական չէ, որ Ադելյանը առանձնապես ընդգծում է իր հերոսի մտավոր զարգացումը ռուս առաջավոր մտքի ազդեցության ներքո։ Ահա թե ինչպես է ներկայացնում Ադելյանը իր հերոսի պատանեկությունը, որը, ի դեպ, ինքնակենսագրական տարրեր ունի իր մեջ։ «Դա մի լուրջ և մտածող տղա էր։ Դպրոցում նա աչքի էր ընկնում իր շատ կարդացած լինելով և զարմացնում շատերին իր շարադրություններով»։ Ուշագրավ է այն, որ Մխիթարյանը թողնում է Ներսիսյան դպրոցը և տեղափոխվում ռեալականը նրա համար, որպեսզի «կարողանա ուսումնասիրել ռուսաց լեզուն և նրանց գրականությունը և ապա շարունակել ուսումը բարձրագույն դպրոցներում»։ Ուսումնարանը ա-

վարտելուց հետո «Մխիթարյանը հետևում է լրագրական բանակռիվների, որոշ կուսակցական ուղղություններին»։

Որպեսզի ընթերցողը կարողանա կռահել «կուսակցական ուղղությունների» բնույթը, որին հետևում է Մխիթարյանը, Ադելյանը փորձում է հասկացնել, թե գաղափարական որ պինանոցից է օգտվում իր հերոսը։ «Ուսումնարանում Մխիթարյանը ծանոթանում է ռուսաց հայանի հեղինակների հետ, որոնց անունները ուսումնարանում չէին լսվում»։ Այդ դեռ քիչ է «Նրա ընկերները նրա համար բերում էին քննադատական գրվածքներ, որոնք առաջադիմական ուղղություն ունեցող, հեղափոխության են ենթարկում ընթերցողի ուղեղը»։ Այդ շատ որոշակի ակնարկները խոսում են այն մասին, որ Ադելյանը բնութագրում է իր հերոսին որպես ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների գաղափարական ոլորտում մկրտության ստացած անձնավորություն։ Կարելի է որոշակի ասել, որ Ադելյանի հերոսը մշտապես գաղտնի օգտվում է Չերնիշևսկու, Գերցենի գաղափարական պինանոցից, անուններ, որոնք ուսումնարանում չէին լսվում և որոնց գրվածքները «հեղափոխության էին ենթարկում ընթերցողների ուղեղը»։

Աճելով ռևոլյուցիոն դեմոկրատների գաղափարական ոլորտում, Մխիթարյանը, բնականաբար, պետք է հանդես գա որպես գործելու և պայքարելու ընդունակ մարդ։

«Այդ գրքերը կարդալուց հետո, ամեն անգամ նրա մեջ տիրում էր ոգևորություն և գործելու եռանդ»— շարունակում է լրացնել իր հերոսի բնութագիրը, ցույց տալով նրան որպես որոշակի համոզմունքների տեր անձնավորություն, որին նա հասել է «ռուս հայտնի հեղինակների գրվածքների ընթերցանությունից»: Ադելյանը ցույց է տալիս, թե դյուղում գործելու նախապատրաստված իր հերոսը ինչ է անում:

Մխիթարյանը մի քանի տողերով առաջ է քաշում այն հարցը, թե ի՞նչն է կազմում անհատի կոչումը: Պատահական հարց է այդ, թե ինչ-որ ձևով առնչվում է Չերնիշևսկու հարցադրմանը, մանավանդ որ «ինչ անելը» Ադելյանը նույնպես վերցնում է չակերտների մեջ:

Իր ընկերոջ գրած նամակում Մխիթարյանը բաժանում է իր մտորումները և փորձում պատասխանել, թե ինչ խնդիրներ են դրված նոր սերնդի առջև: «Արդյոք մեկ անգամ իսկի հարցրել ես քեզ, թե ինչո՞ւ ես սովորում, ի՞նչ բանի է պետք ուսումը, որը ձեռք ես բերում և որը գուցե դեռ շարունակես բարձրագույն ուսումնարաններում ևս: Եթե դրա մասին չես մտածել, կամ մտածել ես, բայց պատասխանը չես գտել, ես օգնեմ քեզ գտնելու: Այդ բոլորը մենք ձեռք ենք բերում հասարակությանը, ուրեմն և մեր կյանքը օգտակար դարձնելու նպատակով: Առանց այդ միջոցի մենք անկարող կլինենք մի նշանավոր օգուտ բերել և դրանում է կայանում անհատի կո-

չումը։ «Ի՞նչ պիտի անել» հարցին այդ տեսակետից պիտի պատասխանել»[4]։

Դժվար չէ կռահել, որ Չերնիշևսկու էթիկական ուսմունքը ևս իր որոշակի արտահայտությունն է գտել Ադելյանի առաջին իսկ պատմվածքում։ Անհատը իր կյանքը օգտակար դարձնելու համար պետք է նկատի ունենա հասարակական շահը, քանի որ վերջինով է պայմանավորված անհատի երջանկությունը։ Անհատի «բնական էգոիզմը» ըստ Չերնիշևսկու չի բացասում հասարակական ալտրուիզմը։ «Ես ոչ ոքի, բացի ինձնից չեմ սիրում»,— հայտարարում է Չերնիշևսկու հերոսը՝ Լոպուխովը, սակայն նույն Լոպուխովը հրաժարվում է իր գիտական կարիերայից ամուսնանալով Վերա Պավլովնայի հետ, որպեսզի փրկի նրան կործանումից։

Չպետք է կասկածել, որ ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների հասարակական կյանքի վերափոխող պատվիրանները իրենց բարերար դերն են կատարել Ադելյանի աշխարհայացքի ձևավորման գործում։ «Բարձրացրեք անհատին—կբարձրանա նաև հասարակությունը». սա է Մխիթարյանի համոզմունքը։ Ադելյանը համոզված է, որ լուսավորությունը հասարակական կյանքի վերափոխության հիմնական ֆակտորն է։ Պատահական չէ, որ կրթության և լուսավորության գործոնը նրա հերոսի ծրագրի հիմնական մեխն է կազմում։ Ուշագրավ

4 Ա. Ադելյան, Ընտիր երկեր, էջ 27։

է Մխիթարյանի ծրագրերը գյուղում կատարելիք ձեռնարկումների մասին:

Իր երազանքներում Մխիթարյանը տեղափոխվում է գյուղ, ծավալում բացատրական աշխատանք, մոտենում մարդկանց, բացատրում նրանց պակասությունները ու նրանց առաջացման պատճառները, թե բարոյական, մտավոր և թե տնտեսական տեսակետից: Մխիթարյանը չի բավարարվում միայն բացատրական աշխատանքով: Նա օգտագործում է նաև գրավոր պրոպագանդան իր ասելիքը գրելով և այն գյուղի քահանայի միջոցով ևկեղեցում կարդալով: Նա պայքար է սկսում գյուղում տեղ գտած սրատավոր երևույթների դեմ: «Գյուղացիք լսում, կարմրում են և գլուխները քարշ գցում, այնուհետև համերաշխության ոգին կամաց-կամաց մուտք է գործում գյուղագիրների մեջ, բոլորն էլ սկսում են սիրով և փոխադարձ օգնությամբ ապրել»:

Սակայն որպես զգաստ ռեալիստ, Ագելյանը իր պատմվածքով ցույց է տալիս, որ լուսավորչական այդ ծրագրերի իրագործման համար ժամանակակից գյուղում կենսական հող չկա: Սոցիալական խորը հակասություններ ունեցող գյուղը, ուր տիրապետում էին տնտեսական հակամարտությունները, մարդկանց միջև եղող երկպառակությունները, նեղ եսական շահագրգռությունները, ոչ մի պայման չեն թողնում այդ ծրագրերի իրականացման համար:

Չնայած Գերցենի, Չերնիշևսկու գյուղացիական համայնքի վրա կառուցված սոցիալիստական ուսմունքի համայքին, որի մասին Վ. Ի. Լենինը գրում է, թե «նրա մեջ գիտական սոցիալիզմից մի գրան անգամ չկա», 90-ական թվականներին նրա ուտոպիական բնույթը գեղագետ Ադելյանի համար տարակույս չէր թողնում: Կյանքի խորը ճանաչողությունը և ճշմարտացի պատկերումը համոզում էր ընթերցողին լուսավորչական ձեռնարկումների ապարդյուն լինելը կամ ավելի ճիշտ մերժելու անհատի փրկարար դերը հասարակական կյանքի զարգացման գործում, որը ինչպես հայտնի է նարոդնիկական ուսմունքի հիմնաքարն է հանդիսացել: Այդ առաջին իսկ պատմվածքով, որպես գեղագետ, Ադելյանը ցույց տվեց, որ գյուղական ոլորտում վճռական դեր են կատարում օբյեկտիվ գործոնները, որոնց հանդեպ անհատը անօգնական է և անզոր:

Դպրոցի կառուցումը Մխիթարյանի գյուղափրկիչ ծրագրի առաջին կետն էր, որը ձախողվում է, իսկ ինքը դառնում նրա առաջին զոհը:

Ադելյանը հետագայում ազատագրվում է իր լուսավորչական աշխարհայացքից և մոտենում հասարակական կյանքի վերափոխության ճշմարիտ ուղիների ըմբռնմանը: Իր հետագա ստեղծագործություններում մատծողը և գեղագետը արդեն փոխադարձաբար լրացնում են միմյանց, ստեղծելով գաղափարական տեսակետից նշանակալից գործեր:

Երկրորդ պատմվածքը, որը լույս է տեսել 1895 թվականին «Մուրճ» ամսագրի 3—4-րդ համարներում, նվիրված է հայ գյուղի ավերիչ երևույթներից մեկի՝ պանդխտության և նրան ծնող պատճառների նկարագրին։

Պատահական չէ, որ պանդխտության թեմային նվիրված այդ պատմվածքը կրում է «Նրա ցավը» վերնագիրը, որն, ինչպես հայտնի է, եղել է գյուղի աշխատասեր գյուղացիության հավաքական ցավը։ Պատմվածքը տրված է առաջին դեմքով, որը առանձին համոզչականություն է տալիս սյուժեին։ Հեղինակը քաղաքում առիթ է ունենում հանդիպելու մի ծերունու, որի արտաքինը խոսում է նրա ծանր և դառը զրկանքների մասին. «Ծերունին հագել է ռեալիստի մի հին և գունատ վերարկու, որի մետաղյա կոճակներից տեղ-տեղ պակաս է, իսկ մի քանիսը փոխարինված են ոսկորե սև կոճակներով։ Վերարկուն մեջքատեղից կապան չունի, որի պատճառով հետևից ցցված է կանգնած։ Այդ հնամաշ և այդ տարազի հագուստի մեջ ծերունին ծիծաղելի էր երևում, բայց դրա հետ միասին նայողի մեջ նա զարթնեցնում էր խիղճ ու կարեկցություն»[5]։

Ծերունուն քաղաք է քշել կարիքը։ Նա աշխատում է «կոնտորում» ամսական 15 ռուբլով, ավլում է գրասենյակը, լամպեր վառում, թղթեր դես ու դեն տանում և կատարում իր տարիքին անպատշաճ աշխատանք։

[5] Ա. Աղեյան, Երկերի ժողովածու, էջ 68։

Ներունու պատմածից հայտնի է դառնում, որ ինքը զանգեզուրցի է և այն գյուղից, «որտեղ մշակում էին բամբակ և պահում շերամ, մի գյուղ, որի տնտեսական դրությունը վերջին տարիներս բավական վատթարացել էր գլխավորապես, հողի պակասության, եղած բերքերի արտահանելու միջոցների բացակայության, սերունդների անհամեմատ աճման և նորանոր պահանջների զարգացման շնորհիվ»[6]:

Գյուղացու այս ծանր վիճակը դառը խոհերի առիթ է տալիս:

Ադելյանը ցույց է տալիս գյուղացու տնտեսական-բարոյական անկման հանգամանքները և փորձում բացատրել նրա պատճառները: «Անձնական ամենաչնչին շահի համար նրանք ոտնատակ էին տալիս ամեն մի սրբություն, խիղճ, ազնվություն, մարդասիրություն, արդարություն և այլն»:

Հեղինակը միջանկյալ ձևով պատմում է իր հորեղբոր հետ կապված դեպքերը, և ցույց տալիս, որ նա ևս մարդկային էգոիզմի զոհ է: Ներունու երկու որդիները օտարություն են գնացել և մոռացության տվել իրենց հորը: Թշվառ ծերունու ողբերգությունը ոչ այնքան նյութական զրկանքներն են, որքան հարազատ զավակների բարոյական անկումը, իրեն, հարազատ հոր նկատմամբ ունեցած քար անտարբերությունը:

Սակայն պատմվածքի հերոսը Սահակ ապերը

---

6 Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 71:

զոհ է գյուղում տեղ գտած մի այլ կարգի շահամոլության։ Նրա ցավը միայն այն չէ, որ 25 տոկոս շահով պարտք է վերցրել և կուտակված 150 ռուբլի պարտքը նրան քաղաք է քշել «կոնտորում» ծառայության անելու, և այլ այն, որ նա զոհ է դարձել շնորհիվ բարերարի դիմակի տակ թաքնված գյուղական ինտելիգենտի, մարդիկ, որոնք նոր են ասպարեզ եկել և իրենց խարդախ միջոցներով կործանման դուռն են հասցնում հայ շինականին։ Ներունին պատմում է, թե ինչպես պարտքերի մեջ խրված նա դիմում է իր եղբոր փեսայի օգնությանը, որը քաղաքից է եկել և «ձեռքում զալամ ունի», փեսան «վրդովված է» վաշխառուի խայտառակ արարքից, որը կամենում է Սահակ ապոր 150 ռուբլի պարտքի դիմաց իր ձեռքը գցել 400 ռուբլի արժեք ունեցող նրա այգին։ Քաղաքից եկած նոր «բարերարը» հանձն է առնում փրկել Ներունուն իր անտեսությանը սպառնացող վտանգից։ Այդ «բարերարը» իր անունով եկեղեցուց գումար է վերցնում և Ներունու պարտքը մարում։ Սահակ ապերը ընկնում է նոր թակարդի մեջ։ Փեսան նրան խորհուրդ է տալիս օտարություն գնալ, իսկ այգին գրավ դնել իր մոտ, իսկ մինչև պարտքը մարելը Ներունուց պահանջում է այգու եկամուտի կես։

Այսպիսով, Ադելյանը մեր առջև կանգնեցնում է անօգնական մի գյուղացու, որը զոհ է ինտելիգենտի դիմակի տակ թաքնված նոր կարգի վաշխառուի։ Ներունին գյուղից նամակ է ստանում և տե-

դեկանում, որ փեսան տիրացել է արդեն այգուն, իսկ ընտանիքը մնացել կիսաքաղց վիճակում։

Ծերունին այդ լուրը առնելով կաթված է ստանում։ «Ջա՜ն բալիքս, ձեր ճարը ի՞նչ է լինելու... էլ մի հողի կտոր չենք ունենալու, որով ուրախանաք ու ասեք՝ էս էլ մեր հողն է։ Երկու կողմից էլ որբ ենք մնացել հիմա. հորից զրկված, հողից զրկված»[7]։

Օտարությունն դնալը քայքայում է գյուղացու տնտեսությունը, զրկում աշխատավորին հողից, կանդնեցնում նրան տնտեսական և բարոյական կործանման առաջ։ Այս է Ադելյանի այս գողտրիկ պատմվածքի գաղափարական եղրահանգումը և պատահական չէ, որ հողի աշխատավորի ողբերգական կացության կենդանի նկարագիրը ավարտվում է հրապարակախոսական մերկացնող տողերով ուղղված «չար, անխիղճ և անգութ մարդկանց», որոնք խլում են գյուղացու վերջին նեցուկը՝ նրա հողը։ «Խե՜ղճ, խեղճ, Սահակ ապեր։ Սիրում էիր հողդ ու տունդ անսահման սիրով, նա էր քեզ եռանդ ներշնչողը ծերության այդ հասակում, նա էր քեզ հույս տալիս, թե անշուշտ կգան և պայծառ օրեր, վերջապես նա էր քո կյանքի միակ նեցուկը։ Բայց չար, անխիղճ և անգութ մարդիկ, որոնց սրտերում որդեր են պտտվում, որոնց ամբողջ ներքին աշխարհը նեխած ճահիճ է պատկերացնում

---

7 Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 90։

գարշելի զեղումներով լի, ան·գթաբար խլեցին քնդանից այդ վերջին նեցուկը ևս վերջ տալով կյանքիդ, որպեսզի փոքր ինչ կշտանան իրենց ծակ աչքերն ու անկուշտ փորը, որպեսզի մութ անկյուններում առիթ ունենան դիվային ժպիտներ ու քրքիջներ արձակել»[8]։

Այս պատմվածքով ևս Ադելյանը ցույց է տալիս գյուղում ասպարեզ եկած նոր ցեցերին, ինտելիգենտի դիմակի տակ թաքնված կեղեքիչների, որոնք քայքայում են գյուղացու տնտեսությունը, խլում նրա հողը և նոր դուռ բացում պանդխտության համար։

Ստոր և խարդախ միջոցներով հարստանալու «ղոշաղ» գյուղացու համբավի ձգտումը շատ հաճախ ընդունել է ծայրահեղ, նույնիսկ ախտաբանական արտահայտություններ, որը և դառնում է Ադելյանի «Հիվանդոտ խիղճը» պատմվածքի նյութը։ Անկողնին գամված Սահակ ապերը մահամերձ է, սակայն մերժում է բժշկի օգնությունը, որովհետև «հիվանդ է ոչ թե մարմինը, այլ՝ հոգին»։ Նա բժշկից պահանջում է բուժել իր մեղսագործ հոգին։ Պատմվածքը հանցագործ մարդու խոստովանություն է մի ոճիրի մասին, որը նա կատարել է համագյուղացի մղդահ Ակոփի հետ, սպանելով մի օտար մարդու, որը փող է ունեցել, սակայն որի մասին գիտեին, որ ունի կին, և երեխաներ, որոնք

[8] Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 91։

սպասում են նրան։ Երկու ոճրագործները ուղեկցում էն իրենց վերին անցնելու սահմանը։ Չնայած օտարականը համաձայնվում է գումարը տալ, բայց նրանք սպանում են նրան, որովհետև կասկածում են, որ կարող է մատնել իրենց։ Ադելյանը այդ պատմվածքով նկարագրում է գյուղական այն ղոչաղներին, որոնք ձգտում են փողի տեր դառնալ, կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ։ Սահակի հայրը, մայրը, ընտանիքը նույնպես գյուղական այդ ավանտյուրիստի զոհն են, որովհետև նա չի կարողանում հաղթահարել փող ձեռք բերելու իր այդ կեղտոտ մոլուցքը։

Գյուղում ծնունդ առած այդ կարգի հիվանդոտ երևույթների նկատմամբ Ադելյանը հետևյալ մտքերն է արտահայտում. «Կյանքի պայմանները ընկած են, կյանքն էլ լճացած։ Ամենուրեք տիրում է կատաղություն, ավերմունք»[9]։

Այդ ամենը հիմք է տալիս հեղինակին ենթադրելու, որ գյուղացին կորցրել է իր բարոյական դեմքը, քանի որ «խիղճը բացակայում է և, մաքուր սրտեր չկան»։

«Ծանր խնդիր» պատմվածքում Ադելյանը գյուղացու բարոյական անկման նորածնունդ երևույթները գնահատում է որպես նոր տնտեսական քայքայման հետևանք, հասարակական մի միջավայր, ուր «մուտք էր գործել էգոիզմի ամենածայրահեղ,

[9] «Մուրճ», 1896, № 3—4, էջ 347—366։

դզվելի և ատելի ձևը»։ Գյուղի դժոխային մթնոլորտում» Ադելյանը տեսնում է մարդկային հարաբերությունների մեջ որակ կազմող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են «խաբեբայություն, ուրացողություն, սուտ երդում, երեսին սուտ խաչ անել, խարդախություն, գողություն, կաշառակերություն, բռնություն, ծեծ, որոնք ապրուստի միջոցնե՛ր հայթհայթելու համար դարձել են սովորական միջոցներ»։ Գյուղացու տնտեսական դրությունը վատթարացել է ոչ միայն սակավահողության, այլև սերնդի անհամեմատ աճման հետևանքով, որը նոր հոգսերի դուռ է բացում գյուղացու համար, և «շատերին գայլեր է դարձրել»։

Սակայն գյուղացու տնտեսական քայքայման պատճառները Ադելյանը փորձում է բացատրել նոր հանդամանքներով։ Ադելյանը այդ պատմվածքում ձգտում է ապացուցել, որ գյուղացու տնտեսական պայմանների վատթարացման պատճառներից մեկը հանդիսանում է սերնդի դերաճը, որ կարիքի նոր դուռ է բացում աշխատավոր գյուղացու համար։ Այդ թեզի դեղարվեստական լուսաբանությունը նա տվել է կարճլիկ Սահակի դերպատանի պատմության մեջ, որը կազմում է պատմվածքի սյուժեն։

Սահակը, որ «խեղճ, միամիտ, բարի մարդկանցից էր» դառնում է գյուղական ղորբանների զոհը և կորցնում իր արտը։ Նա կուլ է գնում գյուղական կեղեքիչներին, որովհետև «չարության առաջ նա

կհուզվեր, բայց նրան չէր դիմադրիլ, այլ վիրավորված զգացմունքով և ատելությամբ մի կողմ կքաշվեր, հաղթանակը չարության թողնելով։ Դա խեղճերի առանձնահատկությունն է»։

Ադելյանը, այդ պատմվածքում, առաջին անգամ զգուշորեն ակնարկում է դիմադրության անհրաժեշտության մասին, թեպետ և ընդվզման համար գյուղական իրականության մեջ կենսունակ ուժեր չի տեսնում։

Տնտեսական քայքայման եղրին հասած Սահակը մեռնում է, իսկ նրա որդին Օվին տնտեսության գլուխ է անցնում ավելի դժվարին պայմաններում։ Օվին և նրա կինը աշխատավոր մարդիկ են, սակայն նրանց աշխատանքը չի կերակրում բազմանդամ ընտանիքը, որովհետև Օվու կինը յուրաքանչյուր տարի նրան մի երեխա է պարգևում։ Օվին արդեն չորս տղա և երեք աղջիկ ունի, որոնցից մեծը տասներկու տարեկան է, իսկ փոքրը մեկ։ Բազմանդամ ընտանիքը կարիքի և զրկանքի դուռ է բացում գյուղացու համար։ Օվու երեխաները մեծանում են անխնամ կիսաքաղց և, բնական է, որ նրանք «իսկական գողեր են» դառնում։ Այդ երեխաները «շարունակ այգիներում ասպատակություններ էին անում, իսկ գոմերից ձու գողանում։ Բռնում, թակում էին, բայց էլի շարունակում էին իրենց փեշակը»։

Օվու երեխաներից մեկը մեռնում է, և նա չի կարողանում նույնիսկ երեխայի թաղման վճարը

տալ տերտերին, մինչդեռ կինը կրկին երեխա է պարգևում նրան։ Կնոջ առատաբերությունը գյուղացու համար դառնում է ցավ ու պատիժ։ Օվին մտածում է, թե ումնից կարող է պարտք վերցնել երեխայի մկրտության համար, որովհետև «երկրորդ անգամ տերտերն էլ չէր ընդունիլ ապառիկ վարձով կարգ կատարել։ Դա նրա կանոններից մեկն էր»։

Այս փոքրիկ պատմվածքում ճշմարտացի նկարագրված է տնտեսական քայքայման եղրին կանգնած բազմանդամ չքավոր գյուղացու վիճակը։ Պատմվածքը ընթերցողին բերում է այն եզրակացության, որ Օվու, ինչպես և նրա սերնդի վաղվա օրը պանդխտությունն է կամ ֆիզիքական կործանումը։

1897 թվականից սկսած Ադելյանը հանդես է գալիս նոր պատմվածքներով, որոնց մեջ բացահայտ երևում է նրա գաղափարական հասունությունն ու գյուղում տեղի ունեցող տնտեսական երևույթներին պատմական բացատրություն տալու ձգտումը։ «Երկու կրակի մեջ» պատմվածքում տրված են գյուղացու խոհերը «լուսավոր դարի» քայքայող ազդեցության ու դրա հետ մեկտեղ այդ ազդեցության օրինաչափ և անխուսափելի լինելու հանգամանքների մասին։

Գյուղական վաշխառուի խանութը հեղեղում է գյուղը նոր ապրանքներով, առանց որի գյուղացին հին ժամանակներում լավ էր գնում, իսկ այժմ

հնարավորություն չունի խուսափել նրա գայթակղությունից։ «Դե որ հողե հասարակ ամանը դեն ձգեմ, գնամ չինի տարեվկներ առնեմ, փայտե գդալը հերիք չհամարեմ, գնամ չանգալ, դանակ ու արծաթաջրած գդալներ առնեմ, էն էլ ոչ թե նրա համար, որ ինքս բանեցնեմ, այլ որ խալխին ցույց տամ, հարևանից հետ չմնամ»— ասում է ծերունի Ակոպենց Դավիթը։

Գյուղացու և ուսուցչի զրույցից պարզորոշ երևում են գյուղական կենցաղի մեջ տեղի ունեցող փոփոխությունները, իսկ այդ ամենից արվում են միայն դառը հետևություններ։ Ժամանակակից գյուղում «գյուղական համայնական կյանքի բոլոր հանգամանքները գումարված կազմում էին մի խոշոր աններդաշնակություն։ Մի կողմից ուսումնարանը, որ գիտության լույսի շողքեր էր տարածում գյուղում և պիտի նպաստեր գյուղացուց բարոյական զարգացման, մյուս կողմից նորանոր պահանջները, այն կողմը տնտեսական անկամ շնորհիվ այդ պահանջներին սեփական միջոցներով լուծություն տալու անզորությունը»։ Այդ պատմվածքում կարևորը այն է, որ ուսուցիչը հասկանում է «որ այդ ամենը քաոս չէր ներկայացնում ինձ համար, այլ որոշ պայմանների անխուսափելի հետևանքներ։ Եվ երբ մի խումբ գյուղացիներ գյուղական խանութի դիմաց նստած խորհում են գյուղական կյանքում ստեղծված դժվարությունների մասին և անիծում խանութպանին, զրույցի մեջ է մտնում ար-

հետաքրքիր փականագործը, որը բացատրում է, որ ստեղծված հանգամանքները խանութի գոյության պատճառով չէ, քանի որ «նա չլիներ, մի ուրիշը դուրս կգար» և գյուղացիք էլ մեղավոր չեն «որ էդ պահանջները ունեն»: Նա բացատրում է, որ եթե «մենք գյուղացիք դրանում մեղավոր են, էն ժամանակ պիտի պանդխտություն չլիներ, իսկ որ պանդխտություն կա, գյուղացիք ի՞նչ մեղավոր են»:

Պատմվածքում փականագործ-արհեստավորին հրապարակ բերելու հանգամանքը և վերջինիս հիմնական պատճառաբանությունները ինքնին հատկանշական են Ադելյանի ստեղծագործության մեջ նոր մոտիվների և նոր գաղափարախոսության առկայության տեսակետից: Փականագործը միանգամայն ճիշտ և տեղին մտքեր է հայտնում: «Սակայն նրանք ինչով են մեղավոր,— ասում է փականագործը,— որ քաղաքի կյանքը նրանց վրա ազդում է, և եթե այդ ազդեցության ենթարկվելը տգիտություն անվանենք, ինչով են մեղավոր գյուղացիք, որ տգետ են. լուսավորությունը ամեն տեղ և ամեն ժամանակ էդպես է առաջ գնացել, այսինքն մարդ առաջ արտաքինն է ընդունել և հետո ներքինը, էականը, և էդ բնական է»: Փականագործը հասկանում է լուսավորության (իմա՝ կապիտալիզմ) զարգացման օրինաչափությունը և հաստատում, թե որքան առաջ գնա կյանքը, այնքան լայն են լինելու նրա ազդեցության շրջանակները:

«Մեր հարևան գյուղերն էլ մեր ճանապարհով են գնում և մի օր էլ նրանք են էս օրն ընկնելու»։

Հայ գյուղի անմխիթար վիճակի համահավաք նկարագիրը Ադելյանը տվել է «Ճար չկա» պատմվածքում։ Այստեղ հերոսը դարձյալ ուսուցիչ է, որը տոգորված է գյուղում լուսավորության սերմանելու ցանկությամբ։ Նա գյուղ է մեկնում դպրոց կազմակերպելու միտումներով, սակայն ի տարբերություն «Ներհակ Առաքելը» պատմվածքի, որտեղ, չնայած հերոսը կործանվում է, բայց մասամբ իրականացվում է նրա լուսավորչական ծրագրերը և դպրոցը կառուցվում, «Ճար չկա» պատմվածքում Ադելյանը ուսուցչին գյուղ է ուղարկում ապացուցելու, որ գյուղացու անտեսական ներկա վիճակը հնարավորություն չի տալիս լուսավորչական որևէ գործունեության համար։

Որպես ղգաստ ռեալիստ, Ադելյանը ցույց է տալիս, որ ժամանակակից գյուղը ոչ մի նախապայման չունի բարենորոգչական գործունեության համար, և դրանով իսկ ցրում նարոդնիկական պատրանքները գյուղափրկիչ ծրագրերի նկատմամբ։ Պատմվածքը առաջին նախանշանն է հանդիսանում իր նախկին պատմահայեցողությունը վերագնահատելու տեսակետից։

Այն գյուղը, ուր մեկնում է ուսուցիչը դպրոց կազմակերպելու, կոչվում է Հացաղուրկ, սակայն դա մի սիմվոլիկ անուն է, որ կարող են կոչվել բոլոր գյուղերը, որովհետև «Հացաղուրկից աջ և

ձախ մի վերստաչափ հեռավորության վրա, բնակած են երկու այլ գյուղեր՝ նույն մեծությամբ և նույն վիճակին մատնված»։ Հացաղուրկը դառնում է հայ գյուղի տնտեսական ծանր վիճակը ընդհանրացնող անուն։ Ահա թե ինչպես են ապրում Հացաղուրկի բնակիչները. «Հացաղուրկի գյուղացիք տարեկան հարկը վճարում էին պանդխտությունից եկած փողից, իսկ իրանց գոյությունը պահպանում էին մի կերպ... տարվա մի մասը գետնախնձորով էին կառավարվում, մյուս մասը՝ լոբիով. ամառը՝ պտուղներով, կանաչիով. միայն ձմեռն էին հացի երես տեսնում։ Տարվա այդ ժամանակին նոցա սովորական սեղանը ցամաք հացն ու սոխն է», սակայն պատմվածքի նշանակությունը չի սպառվում միայն հայ գյուղի ծանր վիճակի պատկերումով։ Ադելյանը ավել է նաև հայ գեղջկուհու ստրկական կացության նկարագիրը, որը դիտում է որպես նրա տնտեսական անապահով վիճակի հետևանք։ Ուսուցիչը ներկա է տանուտերի մոտ երեք երիտասարդ գյուղացիների վեճի լուծմանը։ Ահա թե ինչ է պատմում նրանցից մեկը։

«Սուրիա Գրիգոր, դե քեզ հայտնի է էս գործը, բայց պարոն վարժապետը չի իմանում։ Վարժապետ, անցյալ տարի էս երեք հոգիս և մի ընկեր էլ ունեինք, ողորմած հոգի Դուլենց Ռոստամը, էս ամառը մեռավ, միասին հունձ էինք անում։ Վճռեցինք, ամոթ չինի ասելը, պսակվենք։ Մեր էս ողորմած հոգի Ռոստամը վեր կենա ասի, թե՝

տղե՛րք, պսակվելը պսակվելու ենք, ամա էնպես աննենք, որ էստեղ մեզ համար մի օգուտ լինի, միմյանց ձեռք հասցնենք, աղքատ մարդիկ ենք։ Ի՛նչ աննենք, ի՛նչ չաննենք, թե՝ եկեք էսպես աննենք. ես, ասում է, Վարդաղարի քրոջը տանեմ, Վարդաղարը Սահակի քրոջը տանի, Սահակը Մեսրովբի, իսկ Մեսրովբն էլ իմ քրոջը տանի։ Էստեղ ասում է, չհասույթյուն չկա և լավ գործ է։ Փույրեր ունենք, ասում է, տանը առանց էն էլ չենք կարողանում լավ ապրել, կնիկ էլ որ տաննենք, էլ ինչպե՞ս կկառավարվենք։ Համ էլ էդ հասած աղջիկը ինչպե՞ս տանը պահես և ինքդ գնաս պսակվես. էդ ամոթ բան է, և աղջկա սիրտը կկոտրվի, բայց էսենց ասում է, համ քույրներս մարդու տված կլինենք, նրանց համար բարություն արած, մեզ համար թեթևություն, համ էլ ինքներս կարող ենք կնիկ տանել։

Ռոստամը, պարոն վարժապետ, մի շատ լավ, շատ խելոք տղա էր։ Էս բանը որ ասաց, ամենքս էլ տեսանք, որ օգուտ է. նրա խոսքը ընդունեցինք, և խոկույն մեր մեջ պայման կապելով, նշանվեցինք։ Մի տարվա նշանվածներ ենք։ Ամա դե ի՞նչ աննենք, աստված քյասիբի բախտը որ քոռացնում է, էլ ամեն կողմից է քոռացնում։ Էս ամառ Ռոստամը վեր ընկավ, մեռավ։ Աշունքվա սկզբին, երբ որ պատրաստություն էինք ուզում տեսնել հարսանիքի համար, Վարդաղարը մի օր վեր կենա ասի թե՝ ես Սահակի քրոջը չեմ տանելու, որովհետև

Ռոստամը ասում է, մեռել է, և իմ քույրը գետնին է մնում. քույրս տանը—մի բեռ, կնիկ էլ որ տանեմ—կդառնա երկու բեռ. հիմար խոմ չեմ: Քրոջս համար փնտա գտնք, ասում է, էն ժամանակ ես էլ Սահակի քրոջը կտանեմ: Սահակը որ տեսավ բանը էդպես է, վեր կացավ, թե՝ ես էլ Մեսրովբի քրոջը չեմ տանիլ. ես էլ վեր կենամ թե՝ Ռոստամի քրոջը չեմ տանիլ: Ամեն ինչ տակն ու վրա եղավ: Տվեցինք մի օր իրար հետ կռիվ արեցինք: Սաղ գյուղը գլուխներիս հավաքվեց: Էլ ի՞նչ թակ-մահակ, էլ ի՞նչ յախա պատռել, հայհոյանք, էլ ինչ իրար գլուխ ճղել... Սաղ գյուղում խայտառակ եղանք,— և մինչև օրս էլ հլա սաղ չենք ևկել»[10]:

Ուսուցչի այն խոսքին, թե «աղերը, ապա դա լավ՞ծ բան է՞. այդ աղջկերքը տավար են, թե՞ ոչխար, որ այդպիսի առևտուր եք անում: Ախր այդ տեսակ ամուսնությունը վայրենություն, անարդություն է». երիտասարդ գյուղացին պատասխանում է. «Խի, մենք չենք իմանում, որ էդ վատ բան է, իհարկե, մարդ ու կնիկ սիրով պիտի լինին, սաղ դան իրար, կամ թե աղջկա ու տղի կամքը պետք է հարցնեն, այսինքն՝ թե աղջիկը, տեսնենք, յուր հոժա՞ր կամքո՞վն է գնում. բայց դէ չի լինում. ճա՞ր չկա. քյասի՞բություն է», իսկ մյուսը ավելացնում է.«Որ քյասիբ չլինեինք էդպիսի պայման չէինք կապիլ, կամ թե աղջկան կհարցնեինք. բայց հեշտ բան չի, մի կերպ պիտի տեղ անենք»:

[10] Ա. Աղեյան, Երկերի ժողովածու, էջ 137:

Մեր բոլոր գյուղագիրները Պ. Պռոշյանից սկսած հայ գեղջկուհու ստրկական վիճակի բազում նկարագրերն են տվել, սակայն այն ինչ պատկերել է Ադելյանը գյուղացու այդ անպաճուճ ըրույցի մեջ իր ցնցող դրամատիզմով, գերազանցում է հայ գեղջկուհու մասին եղած բոլոր նկարագրությունները: Այդ անօգնական կացությունը Ադելյանը բացատրում է կնոջ տնտեսական կախյալ դրությամբ, ուստի և պատահական չէ, երբ կինը ենթարկվում է բռնություններին և կամայականությունների ու չի համարձակվում բողոքել իր վիճակի դեմ: «Սահակի նշանածը սկզբում մի քիչ տրտնջացել էր, թե ես նրան չեմ գնալ, թե նրա երեսին մազ չկա, ոտքը սփրթնած է, ուրիշները նրան մասխարա են անում, էսպես-էնպես, ամա հետո կամաց-կամաց խելքի եկավ, երբ որ հասկացավ իրանց տան դրությունը, երբ որ տեսավ, որ եթե չգնա, եղբայրն էլ իր պատճառով կնիկ չպիտի տանի, էլ ոչինչ չխոսեց»:

Գեղջկուհու «ոչինչ չխոսելու» հանգամանքը նրա անմխիթար վիճակի պերճախոս վկայությունն է:

Գյուղացիների և ուսուցչի ըրույցից ակնհայտ է դառնում, որ կնոջ նկատմամբ եղած անմարդկային ամեն մի արարք այն ծանր տնտեսական պայմանների հետևանք է, որի մեջ գտնվում է գյուղացին, ծանր մի վիճակ, որը պարփակվում է «ճար չկա» դառը ճշմարտության մեջ: «Դժվար է մեզ նման մարդկանց համար կնիկ տանելը, մանավանդ եթե

տանը քույրեր ունենք,— ասում է գյուղացիներից մեկը,— չտանել էլ չի լինում... ի՞նչ անենք. խի՞, չե՞նք հասկանում, որ քո ասածը լավ բան է, բայց դե չի լինում, ճա՞ր չկա, աղքատություն է»: Ուսուցչի այն հիշեցումը, թե անցյալ տարի հենց իրենց գյուղում մի աղջիկ իրեն խեղդել է, գյուղացի Մևսրովբը պատասխանում է. «Իհարկե, անցյալ տարվա էն աղջկա իրան խեղդելը մեզ խրատ պիտի լինի, և մենք շատ ափսոսեցինք, զարհուրեցինք, աղջկա ծնողներին անիծեցինք, որ իրանց զավակին իրանց ձեռքով տարել կրակի մեջ են գցել, բայց դե ի՞նչ արած, սովոր ենք, էնքան սովոր ենք էդպես աղջիկ մարդու տալուն, որ էդպիսի դեպքերի լուրը մի ականջներովս մտնում, մյուսով դուրս է գալիս: Ամեն մեկս չարանում ենք, մարդիկ ենք, սիրտներս ցավում է, բայց որ գործը մերն է ընկնում, մոռանում ենք ամեն բան: Ի՞նչ արած. ուրիշ ելք չկա՞»[11]:

Գյուղացու այդ դառը խոստովանության մեջ Ադելյանը դրել է հայ գեղջկուհու դառը կյանքի ցնցող ողբերգությունը:

Ուսուցիչը Հացաղուրկից վերադառնում է ձեռնաթափ և հուսալքված, իսկ դպրոցի կազմակերպումը տապալվում է, որովհետև «ամեն ինչ հիմնահատակ փլված է և ոչինչ չի կարելի անել»:

1898 թվականին տպագրվում է Ադելյանի «Նոր հոգսի հետևից» պատմվածքը, որի մեջ նա կրկին

[11] Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 143:

հերքում է «դեպի ժողովուրդը գնալու» նարոդնիկական պատրանքները։ Ժողովրդին լուսավորելու, գյուղացու տնտեսական վիճակը բարվոքելու գաղափարը ոգևորում է Ներսիսյան դպրոցի շրջանավարտ Հարությանին, որը գյուղ է մեկնում իրականացնելու իր դավանած ծրագրերը։ Հարությանը ոգևորված է Լավրովի գաղափարներով, որովհետև խորապես համոզված է, որ «պատմությունը և առաջադիմությունը շարժում են անհատները»։ Անհատը,— ասում է Հարությանը,— հանդես գալով պիտի պատռե տգիտության սև վարագույրը, պիտի նպաստե համայնական ղգացումների ազնվացման և գյուղացոց մեջ վերականգնե համերաշխ հարաբերությունները։ Հարությանը գյուղում հանդիպում է մի աղնիվ մարդու՝ Մարությանին, որը նոր է վերադարձել քաղաքից և այն համոզումը ունի, որ «Հողագործական աշխատանքը, գյուղի աղքատիկ կյանքը, առողջարար օդը, ջուրը և գեղեցիկ բնությունը պետք է գերադասել քաղաքի կյանքից, գործնական կամ այլ միապաղաղ աշխատանքից, որը բանվորին դարձնում է ավտոմատ մեքենա՝ բթացնելով նրա միտքը, զգացմունքները, ընդունակությունները»։ Քաղաքը (իմա՝ կապիտալիզմ) Մարությանը անվանում է «դժոխային, ավերիչ, դեպի կորուստ տանող կյանք, իսկ գյուղի ազատ և բազմակողմանի աշխատանքը—երջանկություն»։ Այն ակնարկը, թե «Մարությանը իր աշխարհայեցողության համար պարտական է մի ուսուցչի»

կասկած չի թողնում, որ նա նույնպես իր գաղափարները քաղել է նարոդնիկության տեսական դիտանոցից։ Հարությանի առաջին գործը, որին ձեռնամուխ է լինում արտակարգ եռանդով, դա աշակերտների բարոյական դաստիարակության հարցերն են, սակայն շուտով նա համոզվում է, որ իր ջանքերը ապարդյուն են անցնում։ Նա տեսնում է, որ չի կարողանում արմատախիլ անել երեխաների մեջ «ստախոսությունը, հայհոյանքը, նեղ եսասիրությունը, չար նախանձը, կեղծավորությունը, չարամտությունը, փոխադարձ օգնության բացակայությունը»։

Հարությանը հասկանում է, որ այդ մեղքերի աղբյուրը ընտանիքն է, ծնողներն են, որոնցից և վարակվում են երեխաները։ Հարությանը ձեռնամուխ է լինում ծնողների շրջանում բարոյախոսական-դաստիարակչական աշխատանքների, սակայն շատ շուտով գալիս է այն համոզման, որ իր ջանքերը ապարդյուն են։ Նախ գյուղացին կռվում է գյուղացու հետ, նրան խեղդելու, նրա ունեցվածքն խլելու համար։ Երկրորդ. գյուղացին զոհ չէ այն նորամուծություններից, որը բերում է նրան լուսավորության դարը, երրորդ. «գյուղական նոր սերունդը նույնպես վարակված է այն ախտերով, ինչ գյուղական համայնքը» վերջապես «գյուղական ընտանիքը արատավոր է ու պահպանավոր»։

Գյուղական համայնքի ժողովում գյուղացիներից մեկը ասում է. «Մենք աղքատությունից է, թե ին-

չից է, վատացել ենք, սիրով չենք, միմյանց վնաս տալու համար ենք ապրում: Դրա պատճառով մեր տղերքն էլ վատ են: Հիմա դու որ մեզանից մեկին շարունակ ասես՝ սուտ մի խոսար, մի՛ գողանար, մի՛ հայհոյիր, բան է դառնալո՞ւ: Ո՛չ. առաջինը ես չեմ կարող սովորությունս թողնել... Մենք արմատից ենք հիվանդ, վարժապետ. աղքատ ենք, ապրուստներս դժվարացել է. ճար ունես սրա համար՝ արա, թե չէ գլուխդ փաթաթիր գնա ուսումնարան, երեխաներին լավ կարդացուր, խրատիր, թակիր, առանց հացի թող, ինչ որ խելքդ կտրում է՝ արա: Մեզանից ի՞նչ ես պահանջում. մենք ինչացու ենք...»[12]:

Հարությանը համոզվում է, որ բարոյախոսությունը չի կարող դործոն լինել տնտեսական կյանքի առաջադիմության համար, քանի որ գյուղացիների բարոյական անկումը հենց տնտեսական դրության հետևանք է:

Ցրելով նարոդնիկական պատրանքները գյուղացիական կյանքի «հիմքերի մասին» Ադելյանը այդ պատմվածքում անց է կացնում արտադրական ուժերի զարգացման անհրաժեշտության գաղափարը:

Հարությանի մոտ հյուր է գալիս նրա ընկերը, Մուրադյանը, որը «արտասահման է գնացել ուսումնասիրելու քաղաքատնտեսությունը և քիմիան»: Նա դոկտոր է և շրջելով հայկական գյուղե-

---

[12] Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 171—172:

րը, գավառները, ուսումնասիրում է «երկրի ընդերքում անձեռնմխելի հարստությունները»։

Մուրադյանը, լսելով ընկերոջ դասը խոստովանության իր գործունեության մասին, հայտարարում է. «ժամանակն է հասկանալու, որ լոկ մտքի զարգացումը, բարոյագիտական խրատները և դյուղացու տգիտության դեմ խոսքով մաքառելը անկարող են ցանկալի դրություն առաջ բերել, անզոր են դյուղացուն բարեկարգ վիճակի մեջ դնելու»։

Մուրադյանը գտնում է, որ «տնտեսական հանգամանքները կազմում են կյանքի բազմաթիվ և խոշոր երևույթների հիմքը։ Դա մի մթնոլորտ է, որի փոփոխմանը չափազանց զգայուն է հասարակական կյանքի ծանրաչափը»։ Ավելին, Մուրադյանը հայտնում է, որ «մի քանի քաղաքատնտեսներ նույնիսկ կյանքի ամբողջ էվոլյուցիան բացատրում են տնտեսական տեսակետից և տնտեսական հանգամանքներն են ընդունում իբրև առաջադիմության միակ ֆակտոր»[13]։ Դժվար չէ կռահել, որ այդ թափանցիկ ակնարկները վերաբերվում են Մարքսի տնտեսական ուսմունքին։

Ի՞նչ պրակտիկ խորհուրդներ է տալիս Մուրադյանը իր ընկերոջը գյուղի տնտեսական կյանքի բարելավման և զարգացման համար։ Նա առաջարկում է Հարությանին՝ դպրոցը դարձնել գյուղատնտեսա-

---

[13] Ա. Աղելյան, *Երկերի ժողովածու*, էջ 177—178։

կան դպրոց, գյուղատնտեսական կադրեր ստեղծելու համար, որոնց միջոցով «բամբակագործությամբ և շերամապահությամբ զբաղվող տնտեսությունները ազատագրվեն սերմնավաճառներից», «որոնք կարողանան բարձրացնել բերքատվությունը բուսական հիվանդությունների դեմ կռվելով»:

Մուրադյանը այցելում է գյուղի մոտ գտնվող կավե հանքը, ուսումնասիրում է «պղնձե անգործ հանքերը» և, բաժանվելով ընկերոջից, ասում է. «Գուցե կյանքը նույնիսկ բերե և մեզ այստեղ նորից կապե միմյանց հետ»:

Ադելյանը այդ մարդուն անվանում է «հազվագյուտ հյուր»: Նորագյուտ քաղաքատնտեսության գիտակ մարդը դառնում է մարքսիզմի առաջին առաքյալներից մեկը հայ գրականության մեջ: Թեև Հարությանի և Մուրադյանի կերպարներով Ադելյանը ցույց է տալիս նարոդնիկական ջանքերի ապարդյուն լինելը, ապա Մուրադյանը իր գաղափարներով փորձում է համոզել, որ իրական պրոգրեսը կարելի է ապահովել միայն արտադրական ուժերի զարգացման պայմանով:

«Դառը խոստովանանք» պատմվածքը շարունակում է զարգացնել նախորդ պատմվածքի թեման: Բարձրագույն գյուղատնտեսական կրթություն ստացած երիտասարդը հաստատվում է հայրենի գյուղում և նպատակ է դնում իր գյուղատնտեսական գիտելիքները ի սպաս դնել գյուղացիների տնտեսական բարելավման գործին: Պատմվածքի

այուժեն նախկին գյուղատնտեսի դառը խոստովանությունն է գյուղում գործադրած իր ապարդյուն ջանքերի մասին։ Մորմոքյանը մեծ եռանդով ու հավատով սկսում է գյուղատնտեսական գիտության ավյալների հիման վրա վերակառուցել սեփական տնտեսությունը, որպեսզի օրինակ դառնա գյուղացիների համար։ Սակայն նրա բոլոր նորամուծություններին գյուղացիները նայում են ծուռ աչքով ու հեգնանքով։

Մորմոքյանի գյուղում աշխատելու դեմ դժգոհում է հարազատ հայրը, որն իր պրակտիկ խելքով հասկանում է, որ որդու ձեռնարկները պետք է անհաջողությամբ վերջանան. «Հիմա գյուղում մնալուդ ի՛նչ ասեմ։ Ասում էի կավարտես և կգաս կամ էս կողմերի անտառների վրա «մեշաբեգ» կդառնաս, մեր հողերը կշատացնես և կամ քաղաքում մեծ ռոճիկով մի պաշտոն կգտնես ու մեզ էլ օգնություն կհասցնես։ Գյուղում ի՞նչ պիտի անես դու. էլ ինչի՞դ էր հարկավոր էդքան ուսումը, եթե վերջ ի վերջո գյուղ էիր գալու, ի՞նչ գործ կա էստեղ քեզ համար»[14]։

Մորմոքյանի գործունեության դեմ բողոքում է նաև իր կինը, որը մտածում է քաղաք տեղափոխվելու մասին երեխաների կրթության համար։ Սակայն ինտելիգենտ գյուղատնտեսի հոգեմաշ դժվարությունները և դառը հիասթափությունը սկսվում

[14] Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 191։

է այն պահից, երբ նա փորձում է պրոպագանդել գյուղատնտեսական գիտելիքները։ Այսպես, օրինակ, նա համոզում է գյուղացիներին խաղողը ուշ քաղել, որպեսզի կարողանան քաղցր գինի պատրաստել։ Գյուղացիները հեշտությամբ համաձայնվում են նրա առաջարկին, սակայն խաղողը դեռ չհասած քաղում են։ Մորմորքյանի այն հարցին, թե ինչու են նրանք այդպես վարվում, գյուղացիները պատասխանում են. «Ինչպե՞ս կարելի է և ի՞նչ միտք ունի. մենք գինի չենք ծախում, որովհետև ծախելու տեղ չկա. պատրաստում ենք մեզ համար, շատ լավ գինին ինչներիս է պետք. միայն թե շատ լինի։ Եթե խաղողաքաղը ուշացնենք, էն ժամանակ մեր բաղերում խաղող չի մնալ. տանեցիք մի կողմից կուտեն, համբորդն էլ մյուս կողմից կդողանա. էլ ի՞նչ կմնա գինու համար»։

Մորմորքյանը քաղաքից շշեր է գնում և իր ստացած լավ գինին լցնում այդ շշերի մեջ։ «Դե, շատ լավ,— ասում են գյուղացիները,— բայց դե ո՞վ կարող է շշեր բերել տալ և քո ասածով պահել»։ Մորմորքյանը ստիպված է համաձայնվել, որովհետև գյուղացիները իրոք արտահանելու տեղ չունեին, ուստի չէին կարող լրացուցիչ ծախքեր անել։ Նույն կարգի դժվարություններ են ծագում Մորմորքյանի առջև հողի պարարտացման և այլ մի քանի նման կարգի հարցերի շուրջը, երբ նա փորձում է խոսքից-գործի անցնել։

Հավատարիմ մնալով նարոդնիկական դավա-

նանքին, նա իր ուժերը, գիտելիքները, իր եռանդը և միջոցները ի սպաս է դնում բարելավելու գյուղացու տնտեսությունը, սակայն նրա բոլոր ձեռնարկումները ձախողվում են և նրան բերում այն համոզման, որ այդ ամենը «ցնդաբանություն է»:

Մորմոբյանը անպայման նարոդնիկ է, ոգևորված Տոլստոյի, Զլատովրատսկու քարոզած գաղափարներով, այն համոզումը ունի, որ եթե ապահովված լինեն մի քանի պայմաններ, ապա գյուղացուն կարելի է փրկել իր ծանր վիճակից: Այդ պայմաններից մեկը նա համարում է ամբողջությամբ գյուղին նվիրվելը կամ ավելի ճիշտ «գյուղացի դառնալ»:

«Եթե դուք նվիրվելու եք գյուղացուն, պիտի ազատեք ձեզ այն բոլոր բարիքներից, որոնցից զուրկ է և գյուղացին. այդ բարիքների հետևից ընկնելը ձեզ իսկույն հեռացնելու, բաժանելու է գյուղացուց, խորթ է դարձնելու ձեզ նրան»: Գյուղացիական կյանքին մերվելու թեզի մեջ տոլստոյական քարոզի արձագանքն է զգացվում: «Ձափավորեցեք ձեր եսասիրական պահանջները,— ասում է Մորմոբյանը,— կոմֆորտի հետևից մի ընկեք, սովորեցեք գյուղացու նման ապրել, նրա նիստ ու կացը ունենալ և ես կհավատամ, որ դուք կիրագործեք ձեր ասածները»:

Սակայն Ադելյանի հերոսը իր գործունեությամբ համոզում է մեզ այդ գաղափարների վերացական և անիրականանալի լինելու մեջ:

Մորմոբյանը տեսնում էր, որ «քննադատորեն մտածող մարդիկ», որոնք կոչված են դյուղ գնալու, դարձել են կարիերիստներ, անձնական բարօրության մասին մտածող մարդիկ։ «Մեր ժամանակ ուսանողության մեջ հաճախ էր պատվում դյուղին ծառայելու գաղափարը։ Այժմ էլ նույն երևույթը նկատելի է, կարծեմ։ Շատերն էին ոգևորված Լև Տոլստոյի, Գլեբ Ուսպենսկու և Զլատովրատսկու քարոզած գաղափարներով։ Նարոդնիկների այդ երեք հսկաները հրավեր էին կանչում ինտելիգենտ ուժերին գյուղ գնալու՝ «մուժիկ»-ին ծառայելու համար։ Մերոնք խոսքով արձագանք էին տալիս այդ կոչին և ուխտում էին նվիրվել այդ գործին։ Վերջում, իհարկե, ոչ ոք իր ուխտը չկատարեց. համալսարանը թողնելուն պես՝ ամենքը «հացի հոգսի հետևից ընկած՝ մոռացան ամեն ինչ և վերջը դարձան կարերիստների կատարյալ տիպարներ»[15]։

«Իսկ ի՞նչ է ներկայացնում մեր այժմյան ինտելիգենցիան,— շարունակում է Մորմոբյանը,— եթե ոչ շահամոլների մի ամբողջ դասակարգ։ Ամենը միմյանց առաջ աշխատում են ձևանալ, թե գործ են կատարում ժողովրդի օգտին, ֆրազներով և կեղծ հոգատարությամբ միմյանց են խաբում, իսկ ներքուստ իրենց բաներն են դրստում, իրանց փորին, իրանց կաշվին են միայն ծառայում»։

Մորմոբյանը զեղեցիկ բպցառություն է և գյուղ է մեկնում աղնվորեն ծառայելու գյուղացուն, բայց

[15] Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 189։

բարոյալքված ու հիասթափված գալիս է այն համոզման, որ «չկա պահանջվելիք միջավայրը» և իր գործունեությունը ավարտում վաճառականությամբ:

Նարոդնիկական գաղափարներով տոգորված ինտելիգենտին վաճառական դարձնելու հանգամանքը անսքող ծաղր է հայ իրականության մեջ նարոդնիկական մտայնության արտահայտություններին, ոչ միայն այդ գաղափարախոսությունը մերկացնելու իմաստով, այլև նրա կրողների նկատմամբ:

Ադելյանի պատմվածքների շարքը ավարտվում է «Ուսանողի հիշատակարանից» դեղարվեստական ակնարկաշարով, որոնցից մեզ հասել է միայն երկու ակնարկ: Առաջին դեղարվեստական ակնարկը վերնագրված է «Ճանապարհին», իսկ երկրորդը՝ «Յուցակը», որով, հավանորեն պետք է ավարտվեր այդ ցիկլը: «Յուցակը» տպագրված է «Մուրճ» ամսագրում հեղինակի կենդանության օրոք, իսկ «Ճանապարհին» ակնարկը առաջին անգամ տպագրվել է 1950 թվականին հրատարակված «Երկերի ժողովածու»-ի մեջ:

«Յուցակը» ակնարկում նկարագրված է Ռիգայի Պոլիտեխնիկումը ուսման մեկնած երիտասարդության ընդունելության քննությունները, երբ նրանք սպասում են ընդունելության արդյունքներին՝ ցուցակի հրապարակմանը, որը պետք է ազդարարեր, թե ով է ընդունված և ով մերժված: Դա մի կեն-

դանի պատկեր է, որտեղ նկարագրված է ուսանողական կյանքի շեմին կանգնած երիտասարդության ապրումները, նրանց կենդանի և աշխույժ դիալոգները և, մանավանդ, չընդունված երիտասարդների հոգեկան վիճակը: «Մի կողմ ուրախություն, մյուս կողմ արտասուք... Որպիսի դառն և սրտաճմլիկ տեսարան, երբ ընկերներից ոմանք իրանց զգում են երջանկության գագաթնակետին, մինչ մյուսների առաջ սևացած է աշխարհը, և որոնց կուրծքը պատռվում է հուսահատությունից... Ուրախները, ինչպես յուղը ջրից բաժանվում, հեռանում էին մի կողմ. վշտահարները վշտահարներին մոտենում միմյանց մխիթարելու, և փախչում էին երջանիկներից իրենց վիշտը չկրկնապատկելու համար»[16]:

Ուշագրավ է Մի՞րանյանի հոգեմաշ տառապանքները, որը չբավեր ծնողների զավակ է և մտածում է, թե իր անհաշողությունը ինչպիսի մեծ վիշտ է պատճառելու հորը, որը զրկել է ընտանիքը ամեն ինչից, միայն թե կարողանա որդուն կրթություն տալ: «Ես անբախտ եմ,— մրմնջաց Մի՞րանյանը՝ դառնագին հեկեկանքի միջից,— հիմա ես ի՞նչ անեմ... խեղճ հայրս. Բալախանու նավթ ու մուրը կուլ տալով, հազար ու մի զրկանքներ կրելով, իր ամբողջ ընտանիքի բողազից կտրելով ինձ ուսում է տվել, որ գամ բարձրագույն դպրոց մտնեմ,

---

16 «Մուրճ», 1900, № 3, էջ 319:

ավարտեմ և, վերադառնալով հայրենիք, ազատեմ բոլորին դժոխային կյանքից. իսկ այժմ... խեղճ հայր... ես մեռած եմ քեզ համար... ի՞նչ միտք կա ավելս ապրելու. մահը ամենափրկարար ուժն է այս րոպեին... Աա՜խ...»[17]:

Այդ փոքրիկ ակնարկում Ադելյանը կարողանում է ցույց տալ սոցիալական տարբեր խավերի երիտասարդության ներկայացուցիչներին, համոզված լինելով այն բանում, որ չքավորների զավակները մշտապես զրկված են մնում լուսավորության բարիքներից:

«Ճանապարհին» ակնարկը Ադելյանը գրել է 1901 թվականին, սակայն ինչպես վերը նշեցինք, հեղինակի կենդանության օրոք չի տպագրվել: Գեղարվեստական ակնարկի թեման պանդխտությունն է: Մի քանի պատմվածքներում այդ թեման արծարծել է Ադելյանը, սակայն ի տարբերություն նախորդ պատմվածքների, այս ակնարկում նա տվել է գյուղացիության մասսայական պանդխտության նկարագիրը: «Ճանապարհին» ակնարկում Ադելյանը պատկերել է գյուղից պանդխտություն գնացող, ինչպես և պանդխտությունից գյուղ վերադարձող շինականներին, դիտելով երևույթը իր սկզբնավորության և եղրափակման փուլերում: Այդ ակնարկը առանձին կարևորություն է ստանում այն տեսակետից, որ ցույց է տալիս դեպի օտարու-

---

17 «Մուրճ», 1900, № 3, էջ 321:

թյուն գնացող հայ պանդուխտներին և օտարությունից հայրենիք վերադարձող պարսիկ շինականներին։ Այդ երևույթը տեղի է ունենում ոչ միայն ազգային շրջանակներում, այլև հարևան ժողովուրդների կյանքում՝ որպես սոցիալական չարիք հայ և ադրբեջանական աշխատավոր գյուղացիության կյանքում։

«Մեր օտարությունն գնալը կատարյալ հուղարկավորության էր նման»— այսպիսի համեմատությամբ է բացվում ակնարկը։ Ադելյանը նկարագրում է, թե ինչպես ծնողների և հարազատների սուվար մի խումբ ճանապարհ են դնում պանդուխտներին և նրանց թվում 10—12 տարեկան երեխաներին։

— Ահա դեպի գետակն իջնող ճանապարհով ընկած է տղամարդկանց և կանանց մի շղթա։ Նա շարժվում է ծանր և տխուր։ Օտարությունն գնացողների են ճանապարհ գցում։ Ամենքն այդ ժամին համակված են վշտով ու թախիծով, և առօրյա գործերի ու հոգսերի շուրջ պտտվող խոսակցությունն էլ հնչում է տխո՜ւր, մելամաղձո՜տ... կարծես մեռելների են գերեզման ճանապարհում... Արտասվում է զավակին ուղևորողը, թաշկինակը աչքերին տարած, և զգացվում, տխրում է կողմնակի համագյուղացին, որը իր պարտքն է համարում օտարականին ճանապարհելու գնալ. չէ՞ որ մի օր էլ կամ ինքը, կամ որդին պիտի օտարության դիմեն։ Եվ ահա այս տնից, այն տնից դուրս են գա-

լիս տղամարդիկ, կանայք ու երեխաներ և միանում ձգված շղթային»[18]։

Ահա հայ պանդուխտների խումբը ճանապարհին հանդիպում է Բաքվից հայրենիք վերադարձող պարսիկ շինականների։

«Մի քանի րոպեից հետո քարավանը մոտ էր ինձ արդեն։ Պարսկաստանցի թուրքեր էին, որոնք գալիս էին հեռվից։ Նրանց հաղիվ շարժվող քայլվածքի մեջ աչքի էր ընկնում սարսափելի հոգնածությունն։ Ամենքը ոտից մինչև գլուխ ցնցոտիների մեջ էին։ Ոմանց գլխին ոչխարի հասարակ մորթուց կարած փափախ կար, իսկ ոմանց վիճակված էր բավականանալ քրտինքի մեջ եփված փալասով։ Երեսները սևացել էին արևից ու աշխատանքից, և սրունքներից ցածր մերկ ոտների կաշին ընդունել էր շագանակի գույն։ Նրանք երևի գալիս էին Բաքվից»[19]։

Պանդխտության այդ մասսայական նկարագրից բացի, Ադելյանը տալիս է նաև պանդուխտ շինականների անհատական դիմանկարները։ Ահա պանդուխտների բազմությունից հետ է մնացել համագյուղացիներից մեկը՝ Ահմեդը։

«Այդ միջոցին մեր առաջ ընկած զառիվերի գլխին երևաց Ահմեդը։ Քիչ հետո իմ առաջ կանգնած էր մի դեղնած, կմախք դարձած տղամարդ։

---

18 Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 250։

19 Նույն տեղում, էջ 263։

Նա գլուխը փաթաթել էր թաշկինակով, իսկ ուսերին առել նավթի մեջ սևացած վերմակը: Նա մոտեցավ խմբին, մեկնվեց ու հառաչեց.

— Վա՜յ, մեռա՜...

Ընկերները հաց առաջարկեցին, բայց նա մերժեց: Պառկեց գետնին և սկսեց տնքտնքալ:

— Մեռա, մի քիչ սառը ջուր... մի կտոր սառույց. ջիգյարս այրվեց, տապակվեց... Նա այժմ տենդի մեջ էր: Նրա փափագը չարժանացավ ոչ ոքի ուշադրությանը: Այդ տոթին, այդ չոր հանապարհի վրա որտե՞ղ գտնվեր սառը ջուր կամ սառույց, իսկ Ահմեդը շարունակում էր հառաչել ու հառաչել... Մոտ մի ժամ հանգիստ առնելուց հետո, քարվանը վեր կացավ տեղից և գործի գցեց իր դադրած ոտները: Ահմեդը վեր չկացավ. նա դեռ հանգստի էր կարոտ: Պառկած նայում էր ընկերների հետևից: Երբ սրանք բավականաչափ հեռացան, հիվանդը ստիպված եղավ վեր կենալ և քարշ գալ նրանց հետևից...»[20]:

Սակայն հանապարհորդը անտարբեր դիտողի դերում չէ: Ժողովրդական այդ ղրկանքի ծանր պատկերներից նա համարձակ հետևություններ է անում, մի հանդամանք, որ Ադելյանի նախկին պատմվածքներում հազիվ էր շոշափվում: Ճանապարհորդը փորձում է համոզել ընթերցողին, որ ժողովրդի այս ծանր վիճակը անփոփոխ կմնա,

---

20 Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 264:

եթե ժողովուրդը անտարբեր մնա այդ զրկանքների նկատմամբ։ «Խե՜ղճ Ահմեդ. այդ կմնա քո և քեզ նմանների վիճակը, քանի որ շարունակեք վաշխառուի և կապիտալիստի ճորտը մնալ, քանի որ բանվորական կյանքում կապիտալիզմի առաջ բերած երևույթների վերաբերմամբ մնաք անտարբեր և լոկ գրաստի դեր կատարող արարածներ...»[21]։

Ճանապարհորդը համոզմունք է ներշնչում, որ ժողովուրդը անտարբերությունից դուրս բերելու համար անհրաժեշտ են պայքարի առաջամարտիկներ, իսկ վախկոտները արժանի են արհամարհանքի. «Ես գիտեի, որ կյանքը, մանավանդ ցավով լի մեր ժամանակներում, մեծ նախատինք է դնում շատ ընկճվողների վրա և որ այժմ ժողովուրդը ավելի ևս կարոտ է անձնվեր, անվհատ և ժայռի պես դիմացկուն գործիչների»[22]։

Ադելյանը փորձում է տալ պայքարող անհատի բնութագիրը, մարտնչող առաջամարտիկի հասարակական-բարոյական դիմանկարը. «Կան մարդիկ, որոնք թե՛ իրանց և թե՛ ընդհանուր հոգսերը շալակած, անվհեր և անընկճելի հոգով կռիվ են մղում կյանքի անհարթությունների դեմ, որպես քաջամարտիկ դինվորներ։ Նրանց չէ վհատեցնում հետ մնացած սիրելիների ախն ու վախը, նրանց չեն տատանում կյանքի բուքն ու բորանը, իսկ ան-

---

21 Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 265։

22 Նույն տեղում։

հաջողությունները, անառիկ պատնեշները միայն կրկնապատկում են նրանց գործելու և կռվելու եռանդը: Իդեալներին ծառայելու սիրով տոգորված, անընդհատ առաջ են գնում, հարթելով առաջադիմության ճանապարհը: Նրանցը չէ վհատությունը և հիասթափությունը»: Այդ թեզը հաստատելու համար Ադելյանը վկայակոչում է Շիլլերի հետևյալ տողերը. «Ես սիրում եմ կենսալի կյանքը և բախտի վեր ու վար ելնող ալիքների վրա հավիտենական երերումը, տագնապն ու շարժումը. պարապ հանդիստը առնական հոգու գերեզման է: Իսկ պայքարի մեջ՝ արտահայտվում է ուժ. պայքարն է առաջացնում ամեն արտասովոր բան և նույնիսկ վախկոտին արիասիրտ դարձնում»: Ճանապարհորդը հավատում է, որ այդպիսի առաջամարտիկներ կան, և նրանք արդեն ասպարեզի վրա են և այդ հանգամանքը, չնայած ակնարկի մռայլ տոնին, գունավորում է այն աշխույժ տրամադրությամբ: «Իմ մեջ արթնացած հասարակական հույսերը մի տեսակ թեթևություն և աշխուժություն առաջացրին»— ասում է ճանապարհորդը: Ժողովրդական շահերի պաշտպանության գաղափարը դառնում է նրա համար «խրախուսանքի և ոգևորության աղբյուր, երբեք չհուսահատվելու, երբեք չընկճվելու և կյանքի բարելավության օգտին մինչև մահ գործելու...»:

Ակնարկի մեջ զգալի տեղ է հատկացրած պեյզաժային նկարագրություններին: Եթե նախկին

պատմվածքներում պեյզաժը սահմանափակ տեղ ունի, ասպա այստեղ Ճանապարհորդի խոհերը տրված են հայրենի բնաշխարհի լայն կտավի վրա։ Մեղրու շրջանին ծանոթ անձնավորությունը, Արաքսի ափերով ձգվող մերկ լեռների նկարագրությամբ, կարող է ճանաչել Մեղրու և Օրդուբատի միջև ընկած բնանկարը։ «Մեր շուրջը բարձրանում էին բնական բանտի հսկայական պատեր։ Որ կողմը նայում էիր—խանձված, անբույր լեռնե՛ր ու լեռնե՛ր... Եվ մեկը մյուսից բարձր, սիրտպանծ, մեկը մյուսից դոռոզ, ահռելի... Ձորի աջ ու ձախ կողմում ժողովվել է հսկայական քառաժայռերի բազմություն։ Ուս-ուսի տված կամ միմյանց գրկած ու խառած՝ նրանք շտապով ամբառնում են դեպի վե՛ր ու վե՛ր... Այդ մանր ու մեծ ապառաժների խճճված բազմության ուսերին նստել են լեռնաշղթաների գագաթները, որոնք, ասես, իրենց հուժկու բազուկները օդի մեջ տարածած, ձգտում են ավելի բարձր ու բարձր վերանալ, բայց հանդիպելով օդային անհենակետ տարածության, մնում են կանգնած, հայացքները շարունակ դեպ երկինք ուղղած»[23]։

Սակայն բնության նկարագիրը Ադելյանի համար ինքնանպատակ չէ։ Նա սերտորեն կապում է այն Ճանապարհորդի խոհերի և մտորումների հետ։ Ահա Մասիսի նկարագիրը, որը դառնում է լավատեսա-

---

23 Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 254։

կան տրամադրությունների դրսևորման միջոց. «Մշուշապատ հեռավորության մեջ, որպես թույլ կապտագույն շղարշի հետևից, բարձրանում է Ձյունապատ Մասիսը։ Նրա առաջ տարածվել էր Արաքսը, որը շարունակ համբուրելով դարդերից զառամած, բայց դեռ կենսունակ ծերունու փեշերը, կարծես մխիթարում, խրախուսում է նրան... Ականջ է դնում ծերուկը այդ ձայնին և սեգ ու հպարտ հայացքն իր շուրջը ուղղած, կարծես, ասում է. ես իմ կյանքում շատ սև օրեր եմ տեսել, իմ գլխին շատ որոտ ու կայծակ է թափվել, բայց հույսն ու եռանդը փրկել են ինձ կորուստից...»[24]։

Եվ, վերջապես, ակնարկը հարուստ է գյուղացու դառը կյանքի, նրա անօգնական վիճակի մասին հրապարակախոսական մտորումներով և իմաստալից խոհերով։ Նույնիսկ ճանապարհին հանդիպած հեղեղատը կամ բնության պատահարը առիթ է տալիս այդ կարգի խոհերի։

«Միայն բնության պատահարները չեն, որոնք մի րոպեում կլանում են նրա ամբողջ տարվա աշխատանքի արդյունքը։ Գյուղական ներքին կյանքի անշարժությունից պակաս չէ տառապում գյուղացին։ Մի կողմից սակավահողությունը, մյուս կողմից հաղորդակցության ճանապարհների ու արդյունաբերության բացակայությունը համարյա անշարժության են մատնել գյուղացու տնտեսական և

---

[24] Ս. Աղեյան, Երկերի ժողովածու, էջ 266։

մտավոր կյանքը։ Գյուղը շարժվում է դանդաղ, շատ դանդաղ։ Ոչ մի նոր, օգտակար նորամուծություն նրա կյանքի մեջ. ամեն ինչ հին է ու փտած. շարունակ նույն արորը, նույն կամը, շարունակ նույն ստորերկրյա, լույսից ու մաքրությունից զուրկ խոռոչները, գյուղացու մաքրության, նրա բժշկության անօգնական դրությունը և այդ ամենի հետ տգիտությունը, դժար ճեղքվող տգիտությունը։ Արդյո՞ք զուրկ է գյուղացին լուսավորվելու, քաղաքակրթվելու և մտնեսապես զարգանալու տենդենցիայից։ Ո՛չ. միայն շատ են այն պատնեշները, որոնք արգելք են լինում նրա ազատ զարգացմանը և նույնիսկ բթացնում են նրա ամենալավ հակումները։ Եվ այս պատնեշները խորտակել է հարկավոր...[25]։

«Սկեսուրը» վիպակը Ադելյանի վերջին գործերից է և անպայման նրա գրական հասունության անհերքելի վկայությունը։ Եթե մինչ այս վիպակը, նրա պատմվածքների նյութը գերազանցապես եղել է հրապարակախոսական լուսարձակի տակ, ապա «Սկեսուրը» վիպակում գրողի հրապարակախոսական դիտավորությունները անցնում են հետին պլանը և տեղի տալիս իրականության ճշմարտացի նկարագրին։ «Տգիտության զոհեր» վեպի համեմատությամբ «Սկեսուրը» նույնպես առաջընթաց է իր գեղարվեստական արժեքով։ Եթե «Տգիտության

---

25 Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 263։

գոհեր» վեպը կոմպոզիցիոն առումով հավաք չէ և վեպի բազմապլանայնությունը խանգարել է տիպականացնելու երևույթները, ապա «Սկեսուրը» կուռ է իր մասերի մեջ՝ կիզակետում ունենալով միայն սկեսրոջ կերպարը: Վիպակի վերնագիրը արդեն իսկ հուշում է նրա թեման: Դա գյուղական ընտանիքի ոլորտում հին սերնդի հարսի նկատմամբ ունեցած հասկացողությունների, հնադավան նախապաշարումների մերկացումն է: Թամամը նահապետական անցյալի ընդերքից վերցրած իրական կերպար է՝ խորապես համոզված, հայրերից ժառանգած օրենքների ճշմարտացիության մեջ: Նոր հասկացողությունները, որոնք մուտք են գործել գյուղը և խարխլում են իր ընտանիքի հին կենցաղի հիմքերը, հանդիպում են Թամամի համառ դիմադրությանը: Իհարկե, Թամամը մոայլ, խևատուտ այն անձնավորությունը չէ, որի մոտ ամեն ինչ գունավորված է հիվանդագին—մաղձոտ տրամադրությամբ: Ընդհակառակը, Թամամը սովորական կին է, իր սերնդի շարքային ներկայացուցիչը: Թամամը այրիացել է, իսկ նրա միակ որդին մոր պահանջով օտարությունից գյուղ է վերադառնում, որովհետև մայրը կամենում է ամուսնացնել որդուն: Գևորգը, որը «աշխարհ տեսած» մարդ է, նախընտրում է իրեն կին առնել գյուղի աշքաբաց, գրագետ աղջիկներից՝ Սաթենիկին, սակայն հանդիպում է մոր դիմադրությանը: Մայրը գտնում է, որ հարսը պետք է իր ընտրությամբ լինի, որով-

հետև այդպես է կարգը և, բացի այդ, նա արդեն ունի իր ընտրած և հավանած աղջիկը: Մոր համար Սաթենիկը լավը չէ, որովհետև «համարձակ աղջիկ է, մեծի պատիվը չի հասկանում, ամեն մարդու հետ համարձակ-համարձակ խոսում է, տանը գլխաբաց է լինում, կուր է դուրս գալիս գլխաբաց...»: Որպես դարերով սրբագործված սովորույթների մոլի պաշտպան, Թամամը պահանջում է, որ հարսի ընտրությունը իր կամքով և ցանկությամբ լինի. «Հարսը իմն է, իմ տան համար է, տղան կարող է էս աղջիկա, էն աղջիկա վրա աչք ունենալ, բայց ջոկողը ես պիտի լինեմ»: Թամամի կարծիքով այդ հարցում նույնիսկ որդին պիտի իրեն հնազանդ լինի: «Եթե տղան իմն է, ինձ պիտի հնազանդ լինի, իսկ եթե չէ, ինքը գիտի»:

Սակայն Ադելյանի նկարագրած գյուղում առկա են արդեն հին գյուղի նահապետական կարգերը խարխլող բազմաթիվ գործոններ: Գյուղում արդեն սերմեր է ցանել ուսուցիչը, արդեն ասպարեզ են եկել գրագետ աղջիկներ, կան կանայք, որոնք «տղամարդկանց հետ նստում, վեր են կենում»: Տիկին Դերձակյանը գրագետ կանանց և աղջիկների շրջանում գրքի ընթերցանություններ է կազմակերպում:

Թամամի ընտանիքում նույնպես զգացվում է նոր ժամանակների շունչը, և սկեսուրը, որը հնի ցայտուն ներկայացուցիչն է, ստիպված է հետզհետե տեղի տալ: Սկեսրոջ կերպարով Ադելյանը ավել է

հոդեբանական հետաքրքիր դիմանկար, որը, թեպետ նորի նկատմամբ ստիպված է զիջումներ անել, սակայն իր էությամբ մնում է հնի համոզված պաշտպանը: Այսպես, օրինակ, նրան համոզում են հարսանիքին հարսի գլուխը քաղքի ձևով կապել, կամ ժամանակից շուտ հարսին չխոսկանության հանել և այլն: Սակայն այն նոր հասկացողությունները, որոնք մուտք են գործում ընտանիքը և խարխլում ավանդական սովորույթները, սկեսուրը մեղսակից է համարում իր հարսին:

Սաթենիկը դառնում է քավության նոխազ սկեսրոջ համար:

Ընտանիքի այդ եռանկյունու մեջ Ադելյանը արտացոլել է հին ու նոր հասկացողությունների անարյուն պայքարը, ուր ամեն մեկը հավատացած է իր համոզմունքի ճշմարտացիության մեջ: Սկեսրոջ կերպարով Ադելյանը ստեղծել է կենդանի մարդկային բնավորություն: Նա դաժան է և անզիջում, սակայն դրա հետ մեկտեղ նա սիրող մայր է, որը խորապես համոզված է, թե դրանով նա երջանկացնում է որդուն: Երբ սկեսրոջ պատճառով Սաթենիկը թողնում է իր տունը և փախչում ծնողների մոտ ու մահանում, Թամամը ողբում է հարսի մահը, որովհետև հասկանում է, որ որդին դժբախտացավ: «Մայրն այլևս լուռ էր կացել և միայն առատ արտասուք էր թափում: Նա մնացել էր քարացած անսպասելի ազեսի առաջ և չէր կարողանում ոչ օրի երեսին նայել»:

«Սկեսուրը» հայ նահապետական գյուղի հին հասկացողությունների վրա խարսխված ընտանիքի հին ու նոր ուժերի բախման գեղարվեստական վավերագիրն է: Վիպակում Գևորգը և Սաթենիկը այն նոր ուժերն են, որոնք, ճիշտ է, թույլ ու կարկամ, բայց այնուամենայնիվ փորձում են ըմբոստանալ հնամենի սովորույթների և հասկացողությունների դեմ:

«Սկեսուրը» լույս է տեսել «Մուրճ» ամսագրում և ջերմ ընդունելություն է գտել ընթերցասեր հասարակության կողմից: Նույն թվականին «Սկեսուրը» լույս է տեսնում առանձնատիպ հրատարակությամբ: 1904 թվականին «Ծաղիկ» թերթը արևմըտահայերենի է վերածում «Սկեսուրը» պատմվածքը և տպագրում իր էջերում, ինչպես և հրատարակում առանձին գրքույկով:

Վիպակը աննկատ չի մնացել արևմտահայ գրական քննադատության կողմից: «Բազմավեպը» գրում է. «Հեղինակի այս երկը ճշմարիտ և կրնանք ըսել իրական պատկեր մե այն հանապազօրյա տեսարաններուն, որ տեղի կունենան սկեսրոջ և հարսի միջև: Պ. Ադելյանը ճարտար նկարագրած է սկեսուրի անտանելի բնավորությունը և հարսին չափազանց համբերությունը: Վիպասանը, գուցե, դեռ ավելի հաջողված պիտի համարվեր, եթե իր պատմած դեպքերն կրկնութենե զերծ լինեին»[26]:

---

[26] «Բազմավեպ», 1899, № 6, էջ 7337:

«Տգիտության զոհերը» Ադելյանի անդրանիկ վեպն է, որը նա, հավանորեն, գրել է 1896 թվականին առաջին կիսամյակում և հանձնել «Մուրճ» ամսագրին, ուր հուլիս—դեկտեմբեր ամսվա համարներում տպագրվել է։ Եթե «Մուրճ»-ի գրախոսը իր քննադատական հոդվածում նշում է, որ չի անդրադառնալու երկի գեղարվեստական արժանիքներին, «որովհետև հեղինակը հայտնել է խմբագրությանը, որ այն պետք է վերամշակվի» խոսում է այն մասին, որ վեպը գրելու ժամանակամիջոցը եղել է բավականին կարճ և հրատարակել է առանց լուրջ վերամշակման։ Պետք է նկատել, որ ոչ միայն «Տգիտության զոհերը», այլև Ադելյանի մյուս պատմվածքները իրենց վրա կրում են շտապողականության դրոշմը և դրանով հաստատում նաև մեր գյուղագիրների նկատմամբ Պլեխանովի այն դիտողությունը, որը նա արել է ռուս նարոդնիկ բելետրիստներին, թե «նրանց ստեղծագործություններում երևում է գեղարվեստական մշակման անփութությունը»։

Իրոք, այդ անփութությունը, որը շտապողականության հետևանք է, երևում է, ինչպես հայ գյուղագիրների, այնպես էլ Ադելյանի երկերում։

«Տգիտության զոհերը», այլև Ադելյանի մյուս ծավալուն ստեղծագործությունն է իր ընդգրկած ժամանակաշրջանով՝ սոցիալական տարբեր խավերի պատկերումով և գործող անձերի բազմաքանակությամբ։ Դա սոցիալական վեպ է՝ նվիրված

90-ական թվականների հայ գյուղին, նրանում ծնունդ առած զոռբաների սոցիալական բնութագրումներով, եկեղեցու հոգևոր հայրերի դիմակազերծումներով, ինչպես և ցարական արդարադատության մերկացումով։ Այդ իսկ պատճառով վեպը նախասովետական գրական քննադատության կողմից գնահատվել է որպես «նշանավոր գրական երևույթ, որը նյութ է ներկայացնում զանազան տեսակետներից քննելու համար»[27]։

Եթե վեպի վերնագիրը խոսում է զոհերի մասին, ապա կարելի է ասել, որ դրանք ոչ այնքան տգիտության, որքան սոցիալական պայքարի զոհեր են։ Համենայն դեպս, եթե վեպի մեջ խոսվում է տգիտության զոհերի մասին, ապա դրանք ունեն միայն հեռավոր կապ ու նշանակություն։ Այդ առումով վեպի վերնագիրը հեռու է նրա իրական բովանդակությունը դրսևորելուց և կարելի է ենթադրել, որ վերնագիրը միայն քողարկում է վեպի փաստական բովանդակությունը և գաղափարական դիտավորությունները։ Նվ իրոք. Գալուստին ամուսնացնում են 8 տարեկան Նոյզարի հետ, և այդ ամուսնությունը տեղի է ունենում ոչ թե ադաթի կամ սովորույթի պատճառով, այլ միայն աղջիկ ժառանգությունը ձեռք բերելու ակնկալությամբ։ Թեմի առաջնորդը ձգձգում է Գալուստի ամուսնալուծության գործը ոչ թե նրա համար, որ ոտնահարված է տեսնում

---

27 «Մուրճ», 1897, № 9, էջ 1263։

«սուրբ օրենքը», այլ պարզապես ցանկանում է կաշառք առանալ, իսկ դեղչկուհին 25 ռուբլով հանձն է առնում սպանել ցնորված նոյդարին: Վիպակի սյուժեի զարգացման շարժիչը ոչ թե տրադիցիաների կամ հնադավան սովորույթների համար տարվող պայքարն է, այլ բացառապես նյութական շահադրդռւթյունները, փող կուտակելու և հարըստանալու ակնկալությունները, որը ձեռք բերելու համար նրանք մտնում են պայքարի մեջ կանդ չառնելով և ոչ մի արդելքի կամ զոհի առաջ:

Կուտակման տենդով բռնված գործող անձանց տգիտության զոհ անվաննելու հանգամանքը տարակուսանքների առիթ է տվել անցյալի մեր գրական քննադատության էջերում: «Տգիտության զոհեր» վեպին նվիրված հոդվածում «Մուրճ»-ի քննադատը իրավացիորեն հարցնում է. «Մի՞թե Գալուստը տգիտության զոհ է, գյուղի կյանքում երկու գործոն մեծ դեր են խաղում. կամքի թուլությունն և դռչաղության պահանջներ, և նա հենց այդ երկու գործոնների զոհն է որ կա»:

Ադելյանի այս վեպի ամենակարևոր արժանիքներից մեկն այն է, որ նա նկարագրում է գյուղական ցեցերին իրենց գոյացման և զարգացման մեջ և ցուցադրում այդ ուշագրավ պրոցեսը «Սինոդ-Ղուկասի գերդաստանի երկու սերնդի» միջոցով: Սինոդ-Ղուկասը պատկանում է այն «դռչաղ, գյուղացիների թվին, որոնք բռնված փողի կուտակման տենդով, օժտված են դիշատիչ վաշխառուի բոլոր

հատկություններով։ Իր երկու որդիներին նա խրատում և մշտապես խրախուսում է խաբել, գռփել և կեղեքել։ «Ղոչաղ կացեք, ուրիշին խաբեցեք, ունեցածը խլեցեք, ինքներդ վայելեցեք, որ ասեմ տղա եք»։ Խրատում է Ղուկասը իր զավակներին։ Ղուկասի մոտ ամեն ինչ կառուցված է հաշվի և օգուտի վրա։ Անգամ իր որդուն նա ամուսնացնում է այն ժամանակ, երբ հայտնվում է ցանկալի հարսնացուն, այսինքն՝ գտնվում է լավ օժիտ և հող ունեցող աղջիկ։ Ղուկասը նույն խրատներն է կարդում իր հարսին. «Հիմա էնպիսի ժամանակներ են, որ որքան կարող ես դեպի քեզ քաշիր»։ Իսկ ավագ որդուն, որի մեջ նա տեսնում էր իր դավանած սկզբունքների հաստատուն արդարացումը, ասում է. «Դու ղոչաղ ես, դեռ փող հետ գցիր... առուտուրի մասին ես հարցնում, դրանից էլ լավ բա՞ն։ Ջթեղեն ու ուրիշ մանր-մունր ապրանքներ ա՛ռ, էժանանոց, գիտե՞ս, և տար, գյուղերում «ցրիվ տուր»։ Հավատա, մեկին տասը կաշխատես. ի՞նչ են հասկանում, էշ մարդիկ են»[28]։

Սինոդ-Ղուկասը տիրապետել է խարդախելով փող վաստակելու արվեստին և այն ցանկանում է ուսուցանել իր որդիներին։ Ճիշտ է, վեպում նա այնքան գործող չէ, որքան խրատատու, սակայն նրա հանձնարարականները ելնում են գյուղական նոր հարաբերությունների իմացությունից։ Պատա-

[28] Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 276։

հական չէ, որ Ղուկասը օրինակներ է բերում գյուղում առաջ եկած ղոչաղներից. «Տեսնում ես Համբարձումենց Ազատին, մի խորամանկն է, որ... համ իր սաղ ընտանիքն է պահում, համ էլ փող է հետ գցում: ... քանի անգամ եմ լսել, թե Համբարձումենց Ազատը վաճառականների համար բամբակ ու բոժոժ է առել մեր գյուղացիներից, խաբել է, սովորական գնից պակաս գնով է առել և էդպիսով, իհարկե, բավական փող է աշխատել: Պա դա ղոչաղ մարդու բան չի՞: Որտեղ մի վիճելի, կամ դատարան ընկնելու գործ կա, տեսար Ազատը իսկույն մեջ մտավ, մի բան կամ կշինի, կամ չէ, բայց միջումը անպատճառ կաշառք կվերցնի... բանվորներ կբանեցնի, առաջ սիրով կվարվի հետները, իսկ վերջը սիլի-պիլի անելով վարձները կկտրի... Որդիք, դուք էլ էդպես ղոչաղ կացեք, որ սոված չմնաք, առաջ գնաք, փող հետ գցեք»[29]:

Ղուկասի աղդեցության այդ ոլորտում են աճում նրա երկու որդիները՝ Համբարձումը և Գալուստը: Եթե ավագ որդին Համբարձումը, գործում է հոր կողմից ստուգված հնարներով և կատարելապես արդարացնում հոր հույսերը դառնալով ղոչաղ մարդ, ապա կրտսեր որդին՝ Գալուստը, նրա հույսերի բացասումն է: Ուր էլ լինի Գալուստը, օտարության մեջ թե որևէ գործ ձեռնարկելիս, նա մշտապես «անհաջողության է հանդիպում, որովհետև չի կարողանում խաբել, գողանալ, ստել և

[29] Ա. Աղելյան, *Երկերի ժողովածու*, էջ 275:

ստորանալ»։ «Չգիտեմ, էս գյադեն ումն է ընկել էսպես խեղճ,— մտածում էր Սինոդը միայնակ,— էսպես հիմար։ Համբարձումը որտեղ սա որտեղ։ Երևի ընկել է դեպի մայրենիքը, դրա մայրենիք պապն էլ ախր մի հիմար ու խեղճ մարդ էր... մի խոսքով Գալուստն ինձ համար տղա չի դառել, այլ ցավ ու կրակ»[30]։

Վեպի ամենագունեղ և հետաքրքիր կերպարներից մեկը Համբարձումն է։ Ադելյանը կարողացել է ստեղծել գիշատիչ վաշխառուի կենդանի մի տիպ իր կազմավորման և զարգացման մեջ, ջանասեր աշխատավորից դարձնելով նրան գյուղական վաշխառուներից և տիպիկ ցեցերից մեկը։ Վեպի սկզբում նա, բացի դաշտային աշխատանքներից, հոր ցուցումներով «զբաղվում է նաև առևտրական մանր գործերով», սակայն կարճ ժամանակից հետո կարողանում է լայնացնել իր առևտրական գործերը, սահմանի վրայով Թավրիզից գաղտնի ապրանքներ փոխադրել և, սահմանապահների հետաձգումներից խուսափելով, կարողանում է ապրանքները—«սարի գյուղերում ապառքով սաղացնել»։ Կարճ ժամանակից հետո Համբարձումը հավաքում է շրջակա գյուղերը իր բուի մեջ՝ խլելով իր ձեռքը ընկած գյուղացու վերջին կաթսան կամ կարպետը։ Համբարձումի տան նկարագիրը խոսում է գյուղերում կատարած նրա ավերածությունների մասին։

[30] Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 283։

«Տեսեք թե նա ինչպես է հարևան գյուղերի հարստությունը բերել յուր տունը լցրել: Մի րոպե ներս մտեք նրա մեծ տունը, և ձեր առաջ ահա թե ինչ կպատկերանա. մի կողմում դարսված են պղնձեղեններ, մեծ-մեծ կաթսաներ, սինիներ, պղնձե կժեր և այլն: Դռցանից որն անասելի տոկոսի, որն էլ անվերջ պարտքի տեղ է վերցված: Մյուս կողմում նույն աղբյուրից ստացված ղենքեր են. մի մեծ կապոց ասիական հրացաններ, որի լավ մուշտարիները թուրքերն են հանդիսանում. այնքան էլ դաշույններ և ատրճանակներ: Անկյուններից մինում կանգնած է սև բրդի դեղը, իսկ մյուսում սպիտակ բրդինը, որից նա ահագին օգուտ պիտի վերցնի: Ծալքատեղերում դարսված գորգերի, կապերտների ու ջեջիմների բարձրությունը մոտ մի սաժենի է հասել: Բայց արեք Համբարձումի սնդուկը. արծաթե գոտիներ, մատանիներ և կանանց գլխի զարդարանքներ:

Մտեք նրանց ընդարձակ գոմը. քանի եղներ, քանի կովեր, որքան ոչխար, այծ, ջորի: Տներում մեկ այնքան էլ մթերքներ կան. մեծ-մեծ և լիքը կճուճներով յուղ, պանիր ու ահագին տակերով մոթալ: Եվ այդ բոլոր բարիքները Համբարձումը գյուղերից է ստացել: Գյուղացին նրա ուժեղ ճանկերից այն ժամանակն է կարողացել ազատվել, այն ժամանակն էլ նրա աչքի առաջ պատռել, կրակի մեջ ձգել պարտամուրհակը, այդ անիծված թղթի կտորը, որ շարունակ մաշում է գյուղացու հոգին ու մարմինը,

երբ Համբարձումը խլել, տարել է գյուղացու բոլոր ունեցածը։ Տկլոր մարդուց էլ ի՞նչ ուզենաս»[31]։

Ադելյանը ցույց է տալիս, թե ինչպիսի ճիգերով, ուժերի և եռանդի ինչպիսի լարումով Համբարձումին հաջողվում է «կոպեկը ռուբլի դարձնել» և այդ ջանքերի շնորհիվ դառնալ գյուղի ազդեցիկ առևտրականը՝ իր ցանցի մեջ առնելով ոչ միայն գյուղի, այլև շրջանի աշխատավորությանը։ Ադելյանին հաջողվել է ստեղծել վաշխառուի ուշագրավ կերպարը բացահայտված բնավորության ցայտուն գծերով։ Նա ժլատ է մինչև գծուծ դառնալու աստիճանը, մի մարդ, որը չի կարողանում անտարբեր մնալ, երբ հարևանը փոխարինաբար որևէ բան է խնդրում, նա հաշվենկատ է, որը չի խնայում սեփական անձը՝ կոպեկը հետ գցելու համար։ Նա իր բուժումը թերի է թողնում Թավրիզում, որովհետև ստիպված է ծախսեր անել։ Նա մեկնում է Բաքու, աշխատում նավթահանքերում, սակայն ղրկում է իրեն անհրաժեշտ աննդից, որպեսզի կարողանա փող կուտակել կրկին ոտքի կանգնելու համար։ Արդյունաբերական այդ քաղաքում Համբարձումը կարկամում է փողի կատարած հրաշքների դիմաց. «Տունդ չքանդվի, փո՞ղ, էդ ի՞նչ ուժ, էդ ի՞նչ զորություն ունիս դու։ Ինչ՞եր ասես չես անում դու։ Փող որ կա, ամեն ինչ էլ կլինի»[32]։

Ադելյանը ցույց է տալիս, թե ինչպես գյուղ վե-

---

[31] Ա. Ադելյան, Երկերի ժողովածու, էջ 297։

[32] Նույն տեղում, էջ 347։

բադառնալով, նա նորից փորձում է միջոցներ գտնել վերականգնելու համար իր կորցրած հարստությունը: Նա իրագործում է 30-ամյա եղբոր և 8-ամյա Նոյտարի անհավասար ամուսնությունը, որպեսզի կարողանա աղջկա հողերը իր ձեռքը գցելով վերականգնել տնտեսությունը: Վեպի հիմնական սյուժեն կազմում է այդ անհավասար ամուսնության պատմությունը իր ողբերգական հետևանքներով: Սակայն Համբարձումը չկարողացավ վայելել այդ աճուրդի հետևանքով ձեռք բերած հարստությունը: «Ծանր ու զարհուրելի հիվանդությունը վերջ տվեց Հավիտյան նրա խավար կյանքին: Յավում էր Համբարձումը, որ անկարող եղավ վայելել նոր ձեռք բերած կարողության բարիքները, բայց միևնույն ժամանակ մխիթարում էր ինքն իրեն, որ եղբորը ու որդոցը բախտավորեցրեց օժիտավոր հարս ձեռք բերելով»[33]:

Համբարձումի կերպարով, գյուղական միջավայրի լայն ֆոնի վրա, Ադելյանն ստեղծել է գյուղական վաշխառուի հյութեղ կերպար, որով նա դառնում է նոր հարաբերությունների տիպական ընդհանրացումը:

Համբարձումի հակապատկերը նրա կրտսեր եղբայրն է՝ Գալուստը, որը աղնիվ և անխարդախ մի անձնավորություն է: Նա օժտված չէ իր եղբոր պրակտիկ խելքով, նրա եռանդով և համարձակությամբ: Նա չի կարողանում խաբել, կեղծել, քծնել:

33 Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 441:

Նա օտարության է գնում փող վաստակելու, սակայն տուն է վերադառնում դատարկաձեռն և արժանանում եղբոր պարսավանքին: Նա օժտված չէ մարդկանց ճանաչելու հմտությամբ, ուստի, երբ նա կրկին օտարության է մեկնում, կողոպտվում է ընկերոջ կողմից և ձեռնունայն վերադառնում է գյուղ: Այդ չափահաս դարձած մարդը կամենում է ամուսնանալ իր հավանած և սիրած աղջկա հետ, սակայն տեղի է տալիս եղբոր պահանջին և ամուսնանում 8 տարեկան Նոյզարի հետ, հանուն օժիտի: Նա դառնում է իր եղբոր հլու-հնազանդ գործիքը, նրա կամակատարը, և երբ վերանում է եղբոր զորավոր ձեռքը, ընկնում է որոգայթների ցանցի մեջ և ի վերջո բռնում Սիբիրի ճանապարհը:

Վեպի հիմնական սյուժեն գյուղական նոր պայմանների մեջ խճճված անշահախնդիր և ազնիվ մարդու կործանման պատմությունն է, որը չի կարողանում հասկանալ, որ մարդը-մարդու համար գայլ է: Նա կամենում է բաժանվել կնոջից, սակայն չի կարողանում կռահել, որ ինքը զոհ է դառնում եկեղեցու սպասավորների սարքած բանսարկությունների: Առանց ապրուստ հարպան տանելու, նա գաղտնաբար կրկին ամուսնանում է, չմտածելով, որ առանց թեմի առաջնորդին կաշառելու, ոչինչ չի կարող ստացվել: Եվ վերջապես, հուսահատության հասած, նա, դարձյալ ուրիշի թելադրանքով, սպանել է տալիս իր կնոջը՝ Նոյզարին և մերկացվում իր կատարած հանցանքի մեջ:

Վիպական լայն կտավի վրա, գյուղական մի դերդաստանի պատմության մեջ, Ադելյանը կարողացել է վեր հանել հոգևորականության, վաշխառուների, ինչպես և ցարական չինովնիկության իրական պատկերը ու դրա հետ մեկտեղ նաև այլ խավերի դեմ ընդվզման առաջին փորձերը։ Գյուղում գործող ինտելիգենտ ուժերի ջանքերը, գյուղական չքավոր երիտասարդության Համբարձումի դեմ ըմբոստացման, նույնիսկ նրան ծեծելու փաստերը, խոսում են այն մասին, որ Ադելյանը առաւափսի այդ իրականության մեջ կարողանում է նշմարել նաև այն ուժերը, որոնք փորձում են հակադրվել ու պայքարել հակաժողովրդական տարրերի դեմ։ Այդ տեսակետից դժվար է համաձայնվել ակադեմիկոս Տերտերյանի այն պնդման հետ, թե «ռուս գյուղագիրները տվել են ռուս գյուղացիների խմբական ընդվզման փաստեր, հայ գյուղագիրների մոտ նման փաստեր չկան, կամ թե կան ու կրում են անհատական բնավորություն»[34]։

Չի կարելի համաձայնվել, որովհետև Ադելյանի այս վեպը խմբական ընդվզման ցայտուն հիմքեր է տալիս։

Բացի գյուղական տեսերից, Ադելյանը մերկացնում է նաև հայ հոգևորականությանը՝ սկսած գյուղական քահանայից մինչև թեմի առաջնորդը։ Վե-

---

34 Հ. Ս. Խ. Հ. պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Երևան, 1927, № 2—3, էջ 300։

պում ուշագրավ ձևով է տրված Տեր-Սահակի և Տեր-Գրիգորի զրույցը Գալուստի նշանադրության առթիվ.

— Առաքել,— ասաց Տեր-Սահակը,— որ էդպես է, լսիր թե ինչ եմ ասում. դու էլ գիտես, որ ձեր էդ նշանդրեքը դժվար գլուխ գալու բան է. ութ տարեկան աղջկան ոչ կնշանեն և ոչ կպսակեն...

— Պա մենք ուզում ենք էդուց էլ պսակել տանք,— ընդհատեց Առաքելը բացականչելով։

— Հասո՛, լավ, բայց ասում եմ, որ շատ վտանգավոր բան է. մեր փիլոնը դրա համար, որ իմանան, կարող են վեր առնել։

— Այ հերիք է, էնպես խամ-խամ բաներ ես ասում որ...

— Կարգս վկա, սուտ չեմ ասում... հա՛, դե որ մի էդպիսի գործ է, էն ժամանակ մի բան մեզ պիտի հասնի ախր, որ մենք էլ դժվարությունը կարողանանք տանել։

— Դե դուք խոմ ձրի չեք նշանը օրհնելու, պա ձեզ փող չեն տալո՞ւ։

— Տալը տալու են, բայց թե որքան են տալու, էդ հայտնի չէ։

— Էդ ինձ էլ չի հայտնի, տերտեր,— պատասխանեց Առաքելը փոքր ինչ կարմրելով և վիրավորական եղանակով։

— Բայց որ հայտնի լիներ, շատ լավ կլիներ.

տարաձայնություն, կռիվ չէր ընկնիլ. սուս ու փուս ամեն բան կվերջացնեինք»[35]։

Գյուղական քահանաները հանձն են առնում տասը ռուբլով կատարել այդ ապօրինի նշանադրությունը, բայց վախենում են կատարել պսակը, թեպետ հասկանում են, որ իրանց ձեռքից բաց են թողնում մի յուղալի պատառ։ Սակայն այն, ինչ չեն համարձակվում կատարել գյուղական քահանաները, հանգիստ խղճով կատարում է հաջորդը՝ վերդնելով քսանհինգ ռուբլի կաշառք։ Նույն հաջորդը, որը պետք է լուծեր Գալուստի ապահարզանը, կրկին կաշառք է պահանջում, բայց որովհետև Գալուստը միամիտ է և չի կռահում հաջորդի ցանկությունը, ուստի ապահարզանի գործը ձգձգվում է։ Բավականին ուշագրավ է նրանց միջև տեղի ունեցող զրույցը.

«— Հայր սուրբ,— խոսեց Գալուստը,— դե ես էսօր գնալու եմ տուն, քեզ մատաղ, դու էլ քո կողմից աշխատիր, որ ես կարողանամ էս թալաքից դուրս գալ։

— Շատ լավ, որդի, միամիտ կաց, կաշխատեմ. ինչո՞ւ, ես չգիտե՞մ, թե ինչքան ծանր է քո դրությունը։

Գալուստը վեր կացավ չոքած տեղից, մոտեցավ հայր սուրբին, համբուրեց նրա աջը և կամենում

---

[35] Ա. Աղեյան, Երկերի ժողովածու, էջ 412։

էր դուրս գալ, որ հայր սուրբն ասաց. — Գալուստ, էս անգամ քեզ վրա մի թեթև պարտք եմ դնում. եթե բան է, մեկել եկար եստեղ, ինձ համար մի քիչ գինի բերես. լավ գինի լինի.

— Լա՞վ, այսինքն քանի՞ մանեթանոց, հայր սուրբ:

— Փողով չեմ ասում, օրհնած, լա՛վ, պա դու չե՞ս կարող ինձ համար մի բեռ գինի փեշքեշ բերել:

— Շատ լավ, հայր սուրբ, որ եկա՝ կբերեմ»[36]:

Երկար ժամանակ ապահարզանին սպասելուց հետո, Գալուստը որոշում է գաղտնի ամուսնանալ, որը գլուխ է գալիս հարևան գյուղի քահանային կաշառելու միջոցով: Եվ երբ նրա գաղտնի ամուսնության լուրը տարածվում է գյուղում, գյուղի երկու քահանաների միջև կռիվ է սկսվում: Տեր-Սահակը կասկածում է Տեր-Գրիգորի վրա, որ նա չպսակը կատարել, իսկ վերջինս Տեր-Սահակի վրա: Եկեղեցու պաշտոնյաների այդ կռիվը հայ դասական գրականության լավագույն էջերից մեկն է կազմում:

. — Գեհինը մտնես դու,— ասաց Տեր-Սահակը,— էդ ի՞նչ գալաթ ես արել. գնացել ես ապօրինի պսակ կատարել, հա՞... Պա չե՞ս ամաչում, պա մյուռոն չկա քո ճակատին... պա դու կարգի տեր չե՞ս:

---

36 Ս. Աղեյան, *Երկերի ժողովածու*, էջ 483:

— Աղվեսություն մի՛ արա,— պատասխանեց Տեր-Գրիգորը,— չես կարող ինձ խաբել. ուզում ես էսքան մարդու աչքին թոզ փչել... Ամեն ինչ ծածուկ արել ես, հարյուր մանեթը չեքդ դրել, հիմա ուզում ես խալխի առաջ հարա-հրոց անելով մեղքդ ինձ վրա գցե՞ս: Ամոթ է, ամոթ...

— Էս լիրբին, էս լիրբին տեսեք, ինչեր է գլխիդ դուրս տալիս... Ես եմ 100 մանեթը կերել, հա՞... Պա անցած օրին դու Գալուստի հետ էն ի՞նչ էիր քխխիխի անում... ես եմ նրա հետ խոսո՞ղը...

— Լավ, պա դու էս գիշեր մեր փողոցն ի վեր ո՞ւր էիր գնում, ի՞նչ գործ ունեիր գիշերվա կեսին. հըը՞, ասա, ի՞նչ ունեիր:

— Սուտ խոսա, փեշակդ պա ի՞նչ է... դու ես պսակել, դո՛ւ, որ մեռնես էլ, դո՛ւ ես պսակել:

— Դու ես պսակել որ ճղլաս, ճաքվես, տրաքվես, դու ես պսակել:

Ըհը, հարյուր մանեթը ինձ տայինՙ ես էլ կպսակեի:

— Ով որ սուտ է ասում, քահանայական կարգը նրա գլխին խոով կենա:

— Ամեն, ամեն:

— Անամոթ, լիրբ. սուտ էլ երդում է ուտում»[37]:

Վեպի մեջ մերկացված է նախ ցարական պաշտոնեության գործունեությունը, նրա արդարադատությունը: Գավառապետի ապօրինի արարքների

---

[37] Ա. Աղեյան, *Երկերի ժողովածու*, էջ 498:

նկարագիրը, նրա դատաստանը Գալուստի նկատմամբ, այս ամենը հիշատ է, սեղմ շրջանակի մեջ, սակայն ցայտուն ձևով վեր է հանում ցարական չինովնիկության ապօրինությունները։ Մերկացնելով հոգևորականության և ցարական աստիճանավորների հակաժողովրդական էությունը, Աղելյանը վեր է հանում նաև այն ուժերին, որոնք արդեն գիտակցում են պայքարի անհարժեշտությունը և փորձում մերկացնել ու հակադրվել այդ ուժերի դեմ։

Երբ Համբարձումը փորձում է իր պարտքի դիմաց խլել գյուղացու վերջին անասունը, գյուղի երիտասարդությունը ծեծում է նրան և ճանապարհ դնում գյուղից։ «Իսկ ջահելները շարունակում էին հարվածել, որը գլխին բռունցքով, որը մեջքին դանակով, որը կողքին աքացիով։ Մեկն էլ մի մեծ դանակ հանած, շարունակ դռռում էր, «թողեք, խրեմ նրա բողազը, մի սիրտս հովանա։ Մեր տունը քանդողներից մեկն էլ դա է»։

Գյուղի առաջավոր երիտասարդներից Մովսեսը գյուղական քահանային հետևյալն է ասում. «Շահամոլությունը ձեզ հրեշներ է դարձրել. դուրկ լինելով մի որևէ դրական արժանավորությունից, դուք հանուն շահամոլության գործում եք ամեն տեսակ սրբապղծություններ, որ դեմ է թե՛ ձեր կոչմանը և թե՛ ընդհանրապես մարդուն. դուք ժողովրդի մեջ եք մտնում, սրա նրա դեմ հողային պանազան վեճեր եք բարձրացնում, ձեր անձնական շահերի

համար հասարակության մեջ խռովություններ ու թայֆայություններ եք առաջացնում և այդպես ձեր դոյությամբ միայն վնաս բերում մեզ։ Քանի՜ ցս անգամ գանգատներ եմ լսել, որ ձեր կատարած արարողությունների վարձը գյուղացու վրա ապառիկ թողնելով, սկսել եք այնուհետև նրան նեղել, հարստահարել և վաշխառուի նման մեկի տեղը տասը առել։ Քանի՜-քանի՜ անգամ ինձ գանգատվել են, որ դուք հաճախ ձեր վարձը ապառիկ չեք թողնում գյուղացու վրա և խեղճի բողազին չոքելով, յասաուլի նման գոչում եք. «Տուր էս րոպեին։ տուրք»։ Դու Տեր-Սահակ, որ ուսման պատառից մի քիչ կորել ես, գյուղացու համար դարձել ես ավելի անտանելի, քան բոլորովին տգետ Տեր-Գրիգորը»[38]։

Հոգևոր դասի դեմ ուղղված նմանօրինակ մերկացնող խոսք սակավ կարելի է գտնել հայ գրականության մեջ, սակայն բոլորից ուշագրավը վեպի վերջաբանում ասվածն է։ Երբ աքսորի դատապարտված Գալուստը Սիբիր է գնում, Մովսեսը, գյուղի այդ առաջավոր երիտասարդը, հետևյալ խոսքերն է ուղղում անանուն չարագործների հասցեին. «Մենակ դրանց չի հարկավոր կախել, նրանց էլ պիտի կախ տալ, որոնք էսքան տարի պապանձված մնացին, չուզեցին նրա մեղքը քավել, էդ խեղճ Գալուստի գործին մի լուծում չտվին և վերջը էսքան

---

[38] Ա. Աղեյան, *Երկերի ժողովածու*, էջ 432։

զոհերի պատճառ դարձան. նրա ամուսնանալուց դեսը ինչեր ասես չի եղել... նրանց էլ պիտի կախել»[39]:

«Նրանց էլ պիտի կախել» դարձվածքով Ադելյանը կամենում է ասել, որ հասունացել է արմատական միջոցառումների, պայքարի ժամանակը: Ժառանգելով հեղափոխական նարոդնիկության պայքարի տրադիցիաները, Ադելյանը հայ գրականությանը բերեց ոչ միայն գյուղական ցեցերի ճշմարտացի նկարագիրը, այլև հաստատեց այդ ցեցերի դեմ ուղղված պայքարի անհրաժեշտության գաղափարը, փորձելով պատասխանել ռուս մեծ հեղափոխական-դեմոկրատ Չերնիշևսկու «Ի՞նչ անել» հարցին:

Կարևորն այն էր, որ այդ վեպում Ադելյանը շատ ցայտուն ձևով վեր է հանում գյուղի շահագործող տարրերի դեմ կանգնած նոր ու թարմ ուժերին, որոնք թե իրենց մերկացնող խոսքով, և թե այդ խոսքից գործի անցնելու գիտակցությամբ գինված հաստատում էին պայքարի և ընդվզման անհրաժեշտության գաղափարը:

---

[39] Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 524:

ԱԴԵԼՅԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

Ադելյանի գրական ժառանգության մեջ զգալի արժեք են ներկայացնում նրա երկու հրապարակախոսական հոդվածները, որոնք, ցավոք, մինչ օրս հրապարակված չեն։ Հայկական ՍՍՌ գրականության և արվեստի թանգարանի արխիվում է գտնվում Ադելյանի «Գրական փաշայություն» և «Լրագրի սորուկներ» հոդվածները։ Վերջինը հայտնաբերել է թանգարանի գիտական աշխատող Գ. Աղնավուրյանը «Մուրճ»-ի արխիվում։

Կարված լինելով հայ իրականությունից, Ադելյանը, որը շուրջ յոթ տարի եղել է Ռիգայի Պոլիտեխնիկումի ուսանող, բնականաբար չէր կարող ակտիվորեն մասնակցել մեր իրականության մեջ տեղի ունեցող հասարակական-քաղաքական պայքարին, կուսակցական բանավեճերին ու բախումներին։ Սակայն Ռիգայում ուսանելու տարիներին իսկ, նա հնարավորություն է ունեցել հետևելու հայկական մամուլին հատկապես գյուղացիական

դեմոկրատիայի նկատմամբ ունեցած նրա դիրքորոշման։

Ցավոք, մեզ չի հասել Ադելյանի անձնական արխիվը, որը նրա մահվանից հետո իր հարազատների ձեռքով հանձնվել է կրակի, որպես թոքախտավոր մարդու նկատմամբ գյուղում կիրառվող պրոֆիլակտիկա։

Նրա անձնական թղթերը, նամակները հավանորեն շատ շահական նյութեր ու փաստեր կարող էին տալ պարզելու համար նրա ունեցած դիրքը բազմաթիվ հարցերի նկատմամբ։

Ադելյանի գեղարվեստական ակնարկները և պատմվածքները ընթերցելիս, դժվար չէ նկատել գրողի հրապարակախոսական դիպուկ խոսքը և արգասավոր ու համարձակ միտքը։ Ավելին. նրա առողջ և մերկացնող դատողությունները ներթափանցված են գեղարվեստական ստեղծագործությունների հյուսվածքում, որոնք առանձին սրություն և հրատապություն են մտցնում գյուղին նվիրված հարցերի լուծմանը։

Ադելյանի հրապարակախոսական հիմնական թեման բուրժուական մամուլի և նրա գրչակների մերկացումն է, գյուղացու հոգսերի նկատմամբ բուրժուական լիբերալների ցուցաբերած անտարբերությունը։ Պատահական չէ, որ կոոպերացիային նվիրված հոդվածում, որտեղ նա պրոպագանդում է կոոպերացիայի կազմակերպման անհրաժեշտությունը Ադելյանը մերկացնում է բուրժուազիայի

«սովորական դարձած ֆրազիորությունն ու ճոռոմաբանությունը» կամ «կիսաբուրժուական մըրմունջները»։ «Ժամանակ է,— գրում է Ադելյանը,— թողնել այդ ձանձրալի, ականջ ծակող և զահլա տարած բարոյախոսությունը, դրա փոխարեն տվեցեք մեզ ուսումնասիրություն։ Ձեր տվածը ուսումնասիրություն չէ, այլ աչքի հարևանցի դիտողություն, պաֆոսական «պետք է» ներով համեմած»։

Ադելյանը մերկացնում է բուրժուական կիսատպռատ ռեֆորմիստական պրոեկտները, պահանջելով գյուղացու ըրկանքների պատճառները որոնել պատմա-տնտեսագիտական հանգամանքների մեջ. «քրքրեցեք հանգամանքները, վերլուծեցեք դրանց, մի առ մի զննեցեք վերլուծած տարրերը»։

«Գրական փաշայություն» հոդվածը, որը հավանորեն գրված է 1900 թվականին, ամբողջությամբ ուղղված է «Մշակ»-ի և մշակականների դեմ։ Հոդվածը, որը նա ուղարկել է «Մուրճ»-ի խմբագրությանը հավանություն է գտել տպագրության համար, որովհետև տետրի շապիկի վրա կարդում ենք (հավանորեն խմբագրի ձեռքով գրված)՝ «Տպել լավ է» և ապա փակագծերի մեջ՝ «իբրև առաջնորդող»։ Հոդվածը խմբագրված է ամբողջությամբ, որը նույնպես հաստատում է տպագրելու որոշումը, սակայն, թե ինչո՞ւ չի տպագրվել, մնում է մեզ անհայտ։ Խմբագրի նույն մատիտը խնամքով ջնջել է հոդվածի այն տողերը, որտեղ Ադելյանը քննադատում է «Մուրճ» ամսագիրը։ Ուշագրավ է մի հան-

գամանք ևս. Ադելյանը այդ հոդվածում խոսում է ոչ միայն իր անունից, այլև Ռիպայի հայ ուսանողության, հավանորեն համախոհ հատվածի անունից։

«Գրական փաշայությունն» հոդվածում Ադելյանը ղարգացնում է այն միտքը, թե «մեր ազատամիտ կուսակցությունը չունի մի լուրջ, իր կոչմանը համապատասխանող օրգան։ Եղածը՝ «Մշակ»-ը, դադարել է այն դերը կատարելուց, որովհետև նրանում բուն դրած թայֆան շահագործում է այդ լրագիրը հանուն իր թայֆայական շահերի, ինարիդների և այլն»։

Ադելյանը գտնում է, որ այժմյան «Մշակ»-ից դժգոհների թիվը օր-օրի բազմանում է։ Մենք լսել ենք,— գրում է Ադելյանը,— որ արտասահմանի հայ ուսանողությունը վճռել է պահանջել «Մշակ»-ից, որ նա փոխի խմբագրության ներկա կազմը, ամենից առաջ հեռացնելով գույնից զուրկ և ամեն թուլություններով հարուստ խմբագիր պ. Քալանթարին։ Մենք կոչ ենք ուղղում «Մշակ»-ից դժգոհ բոլոր շրջաններին, որ նրանք իրանց դժգոհությունը չխեղդեն իրանց մեջ, այլ առանց վախենալու հրապարակ հանեն բողոքներով։ Միայն այսպիսով կարելի է բարձրացնել մեր վայր ընկած գրական սայլը... այդ յուրաքանչյուր մարդու բարոյական պարտքն է, եթե նրա սրտին մոտ են ազատամիտ կուսակցության, մեր մամուլի և հասարակության շահերը։ Մենք սպասում ենք»։

Իր հոդվածում Ադելյանը պահանջում է անպայման զբաղվել «Մշակով», քանի որ այդ թերթի ունեցած թերությունները «մեր կյանքի և գրականության մեջ խոշոր չարիքներ են առաջ բերում»։ Նա կոչ է անում պայքարել այդ չարիքների դեմ, որովհետև «պետք է ճանապարհ հարթել մեր գրականության ազատ զարգացման համար և ազատել այն թերություններից, որին ենթակա է նա վերջին տարիները»։ Ադելյանը մեջ է բերում Բյորնեի խոսքերը հաստատելու համար այն միտքը, որ անհրաժեշտ է զբաղվել կյանքի կենսական հարցերով, քան թե բարոյախոսական դատողություններով. «Եթե մենք ցանկանում ենք նպաստել մարդկային երջանկության տարածման, այն ժամանակ ամենից առաջ պիտի խոսենք կյանքի երևույթների, քան կանոնների վրա»։

«Մշակ»-ի բարքերը մերկացնելու համար Ադելյանը վկայակոչում է Մեսրոպ քահանա Մելյանի բանակռիվը «Մշակ»-ի հետ, ցույց տալու համար թերթում տիրող անթույլատրելի բարքերը— «Այդ բանակռվի ժամանակ «Մշակ»-ի այլանդակ պատկերը երևան եկավ իր ամբողջությամբ,— գրում է Ադելյանը,— խմբագրության մեջ նստած մարդիկ, մեկը մյուսից անկախ գրում են այն, ինչ իրենց քեֆն է տալիս։ Այդ թերթը լի է հակասություններով, ուստի անհրաժեշտ է հեռացնել պ. Քալանթարին, որովհետև թերթի կաստայականությունը, կուսակցական անհամբերությունը, նրա բոնած

դիրքը անտանելի է»: Ադելյանը ցավով է նկատում, որ «մենք չունենք մի լրագիր, որի շուրջը խմբվեր Գրիգոր Արծրունու վերջին օրերից առաջ եկած և այժմ արագությամբ բազմացող հերձվածողների խումբը» և խնդիր դնում ստեղծելու նոր թերթ: Այսպիսի մի լրագրի պահանջը օր-օրի վրա ղգալի է դառնում,— գրում է Ադելյանը և ցրելու համար «Մշակ»-ի հետ գոյակցելու հնարավորության հարցը, գրում է. «Մի՞թե չի կարելի մի կերպ հաշտվել այդ լրագրի այժմյան խասիաթի հետ» և պատասխանում. «Մշակը» անկարող է մեր նոր ուժերի արտահայտիչը, նրանց օրգանը լինել, որովհետև այժմյան ղեկավարները պահանջում են մտքի հնազանդություն, նրանք մոլեռանդ թշնամիներ են ամեն մի ինքնուրույնության»:

Քննարկելով այն հարցը, թե դուցե հնարավոր է, որ «Մուրճ»-ը բավարարի վերը նշած պահանջները, Ադելյանը գրում է,— «Նախ, «Մուրճ»-ը լրագիր չէ, և երկրորդ, մենք կարծում ենք, որ մեծ հարայով և թմբկահարությամբ առաջ եկող ամսագիրը «Մշակ»-ի կաստայի շահերը զոհ կբերեն զուտ գրական շահերին, բայց ընդհակառակը դուրս եկավ: Նոր «Մուրճ»-ը դերադասեց նեղ կուսակցական շահերին զոհ բերել գրականը և այդպիսով իրանից ցիրուցան անել շատ ուժեր: «Մշակ»-ի, «Մուրճ»-ի մեջ մենք ոչ մի առանձին նորություն դեռ չենք տեսել, բացի «Մշակ»-ից «Մուրճ» տեղափոխված անուններից: Քննադատության կրակի

տակ առնելով «Մուրճ» ամսագիրը, Ադելյանը, կրկին անդրադառնալով «Մշակ»-ին, գրում է, որ այդ թերթը արհամարհում է հայկական գրականության մեծագույն մասը: Հայհոյանք, հալածանք և մշտական արհամարհանք դեպի նոր գրողները: Խրախուսանք ասած բանը գոյություն չունի նրա համար: «Երես մի տաք գրողներին, մի օգնեք նրանց, մուրացկանության կսովորեն: Գրողը,— ասում է «Մշակ»-ի հակա սյուներից մեկը,— պ. Մամուլյանը,— որքան աղքատ լինի, այնքան բեղմնավոր կլինի»:

Ադելյանը Ռիգայի հայ ուսանողների անունից վրդովմունք է հայտնում «Մուրճ»-ի խմբագրի դեմ կատարած «Մշակ»-ի հարձակումների առթիվ, որոնք նրան համարում է տգետ, անբարեխիղճ, անաղնիվ և դրանով բացատրում «Մուրճ»-ի բաժանորդների քչությունը: «Հասարակական կամ գրական խոշոր երևույթի, ինչպես և ամեն մի հարցի անաչառ, ճշգրիտ, օբյեկտիվ ուսումնասիրությունը մամուլի բարոյական պարտականությունն է,— այդպես է հասկանում Ռիգայի հայ ուսանողությունը մամուլի կոչումը»— գրում է Ադելյանը: Հայ ուսանողների անունից Ադելյանը բողոքում է «Մշակ»-ի այդ անվայել վարմունքի դեմ՝ մի առ մի առաջ քաշելով հիմնավոր փաստարկներ: Բողոքելով, որ «Մշակ»-ը չի տպագրել Ռիգայի հայ ուսանողների բողոքը,— Ադելյանը բացականչում է.

Ах, вы мошеники пера...!

Ի դեպ «Մշակ»-ին հասցեագրած հայ ուսանողության նամակը տպագրված է «Տարազ» շաբաթաթերթում (Տարազ, 1900, № 5)։

«Չէ, «Մշակ»-ը չափազանց երես է առել,— գրում է Ադելյանը,—նա այդ դրության է հասել երիտասարդության ներողամտության և, որ գլխավորն է, նրա անտարբերության շնորհիվ։ «Մշակ»-ը մեր մամուլի մեջ միապետի դիրք է բռնել, նա իրեն թույլ է տալիս ամեն բան խոսել, անել, բայց ուրիշին ոչ։ Մեր ազատամիտ լրագիրը օգտակար է համարում իրեն հակառակորդների վերաբերմամբ տաճկական սուլթանի դեր կատարել։ Նա արհամարհում է այն ամենը, ինչ որ «Մշակ»-ից դուրս է, աշխատում է խեղդել նրանց, որոնք չեն ընդունում «Մշակ»-ի հեղինակությունը, որոնք մի որևէ խնդրում հակառակ են նրա ասածին։ Տիրել, սարկացնել հայկական միտքը, ահա սա է «Մշակ»-ի դևիզը մեր մամուլի մեջ»։

Ադելյանը վկայակոչում է Մեսրոպ քահանա Մելյանի հոդվածը, որտեղ նա քննադատել է արք. Սեդրակյանի «Քահանայական խնդիր» գրվածքը։ Մելյանի հոդվածի կապակցությամբ «Մշակ»-ը կատաղում է և պատժում իր «անբարեխիղճ աշխատակցին» և խաչ քաշում նույնիսկ իր կողմից ազատամիտ ճանաչված հոդևորականի վրա։ «Մշակ»-ը չի տպագրում Մելյանի հոդվածը, որովհետև այդ հոդվածում նա հարձակվում է «մեր կղերականների վրա, մի տարրի վրա, որն իր ամ-

բողջ էությամբ անընդունակ է զգալ ու բուժել ժողովրդի ցավերը։ Մելյանը քահանայական խնդրի լուծման համար դնում է ժողովրդի իրավունքների և ժողովրդի միջամտության անհրաժեշտության հարցը, դրանով իսկ մի նոր ելք ցույց տալիս այդ խնդրի լուծման համար։ Մինչդեռ «Մշակ»-ը խեղդում է այդ ձանյը»։

Ադելյանը գտնում է, որ «Մշակ»-ը ժառանգել է Արծրունու բոլոր թերությունները և ամենայն սրբությամբ ոչ միայն պահպանում է, այլև զարգացնում այդ հատկությունները։

«Գիտեք,— գրում է Ադելյանը,— որ դուք ընդունակ չեք այդ խոսքերը մարսել, մանավանդ, երբ այդ խոսքերը դառը ճշմարտություններ են. գիտենք, որ ձեր փաշայական զայրույթը կամ կատաղի ինդյունով պայթելու է մեր գլխին և կամ գոյն առաջ է բերելու անսահման մեծամտության մեջ օրորվող ինքնագոհ արհամարհանք, որով և դեն եք նետելու մեզ։ Իմացեք, որ սա մի ռումբ է, որ մենք գցում ենք, և մենք սպասում ենք նրա հաջող պայթյունին...»։

Ադելյանի «Լրագրի մարուկներ» հոդվածը գրված է որպես հրապարակախոսական ակնարկ, որի մեջ կենդանի զրույցի ձևով վեր է հանված հայ մամուլի, կամ ավելի ճիշտ մշակականների և նորդարականների անտարբերությունը ժողովրդի կենսական շահերի նկատմամբ, կուսակցություններ, որոնք իրենց մամուլով հանդերձ, մտահոգված չեն դար-

մանելու ժողովրդի ունեցած զրկանքներն ու ցավերը։ Ակնարկը կենդանի զրույց է, որը տեղի է ունենում գավառից եկած ուսուցչի և հեղինակի միջև։ Ուսուցչի արտաքին դիմանկարի նկարագրում երևում է գյուղում նրա կատարած ծանր աշխատանքի դրոշմը։ «Աչքերի շուրջը կնճիռներ էին ժողովել, իսկ երեսի կաշին կորցրել էր իր նրբությունն ու թարմությունը։ Սևորակ ու գեղեցիկ աչքերը ծանրացած հոնքերի տակ մռայլ հայացք ունեին, իսկ լուրջ դեմքի վրա դրոշմված էր անբավականության խոշոր կնիքը»։

Ինչի մասին է խոսում գավառից եկած ուսուցիչը, որի մասին լռում է բուրժուական և կիսաբուրժուական մամուլը։ Գավառներում, որտեղ աշխատել է նա, իր շրջապատում տեսել միայն «մռայլ ամայություն» և դրա պատճառով այժմ «կանգնած է հոռետեսության շեմքին»։

Նրա զրույցից «լսվում էր շարունակ զայրույթի և անբավականության միապաղաղ եղանակ»։ Մխիթարյանը իր գործունեության ընթացքում շատ քիչ մխիթարական բան է տեսել գյուղացու կյանքում. «Հողերի պակասություն, ապրուստի դժվարություն, ընդհանուր աղքատություն, դոցա հաջորդող բարքերի անկում, մարդկանց մեջ տիրող գայլային հարաբերություններ։ Ամեն տեղ անարդարություն, բռնություն, թույլերի և ճնշվածների խուլ վայնասուն, ուժեղի լիրբ ու կատաղի դոռում-դոչում»,

ահա ինչ է տեսնում ուսուցիչը ժամանակակից գյուղում:

Հայ գյուղին տրված հրապարակախոսական այդ սեղմ բնութագրության մեջ տրված են համարյա այն բոլոր թեմաները, որոնք շոշափված են նրա պատմվածքներում:

Ալեքսանդրյան այդում նրանք ականջալուր են մի պրույցի դատարկ բանավեճի, որից մեկը, ինչպես պարզվում է, մշկական է, իսկ մյուսը նորդարական: Նրանց դիալոգի միջոցով Ադելյանը մերկացնում է ինչպես «Մշակ», այնպես էլ «Նոր-դար» թերթերը, որոնք շատ հեռու են գյուղը ավերող վերը նշած վերքերը դարմանելու ցանկությունից: Հատկապես «Լրագրի ստրուկներ» հրապարակախոսական հոդվածում Ադելյանը կարողանում է հրապարակախոսական բնույթի ստեղծագործության կոմպոզիցիայի մեջ օգտագործել գեղարվեստական երկի էլեմենտները, ինչպես և գեղարվեստական երկերի հյուսվածքի մեջ մտցնել իր համարձակ մտորումները և խոհերը: Հրապարակախոսը և գեղարվեստագետը Ադելյանի երկերում միշտ էլ գիրկընդխառն են ընթացել և փոխադարձաբար արգասավորել միմյանց: Ադելյանի պատմվածքների կոմպոզիցիայի մեջ առկա է հրապարակախոսական ներածությունը («Ճար չկա», «Նրա ցավը») կամ հրապարակախոսական ընդհանրացող վերջաբանը («Ճանապարհին»): Որպես հրապարակախոս, գեղարվեստագետ Ադելյանը կարողանում է

իրեն հուզող թեման մատուցել ընթերցողին գրական մատչելի ձևերի մեջ, այն պահելով, ինչպես ընդունված է ասել, հրապարակախոսական «դանակի սայրին»: Հրապարակախոսական միջամտությունները և բացատրությունները նրա երկերում այն միջոցներն են, որով նա փորձում է բացատրել գյուղական կյանքի կնճռոտ հարցերը, ինչպես և օգնում տեսնելու կյանքի իրական հմայությունը:

Հեղինակային խոհը և տրամադրությունը մշտապես առկա են նրա ստեղծագործություններում, որը գունավորում է պատմվածքը մինոր կամ մաժոր տրամադրությամբ: Ահա նրա «Ճանապարհին» ակնարկի վերջաբանը, որը, չնայած մռայլ ֆոնին, ավարտվում է ուրախ և հուսադրող տրամադրությամբ. «Դոռում-դոչում էր սայլակը, բարձրացնելով իր շուրջը ուրախ և աշխույժ դղրդոց: Օրորվելով և ճչալով նա տարածություն էր կտրում և ամեն մի խոչընդոտ ու անհարթություն, որ պատահում էր ճանապարհին, նա յուր անիվների տակ էր թողնում ու առաջ վազում: Կարծես այդ դղրդոցը նրա հաղթության և ցնծության աղաղակն էր...»: Կամ «Ճար չկա» պատմվածքը, որն ավարտվում է մի նոր տրամադրությամբ. «Դա հուսահատության և անկարողության մի ճիչ էր, որ աղաղակ արձակելով իմ հոգու մեջ, ստիպեց ինձ վեր թռչել անկողնուց շտապելով հագնվել և ճանապարհվել դեպի մեր գյուղը»:

ԱԴԵԼՅԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Իր գրական-հրապարակախոսական գործունեության հետ մեկտեղ Ադելյանը հայ իրականության մեջ հանդես է եկել նաև որպես սպառողական կոոպերացիայի առաջին կազմակերպիչներից մեկը և նրա պրոպագանդիստը։ Սպառողական կոոպերացիայի, կամ ինչպես ինքն է գրում, հասարակական խանութների կազմակերպման գաղափարը Ադելյանը առաջ է քաշում ու պաշտպանում որպես մեկն այն միջոցներից, որոնք կոչված են օգնելու գյուղացուն դուրս գալու այն ծանր վիճակից, որը ստեղծել են նրա համար գյուղական վաշխառուները և մանր առևտրականները։ Կոոպերացիային նվիրված իր հոդվածում Ադելյանը մերկացնում է «բարերարի» դիմակի տակ հանդես եկող բուրժուական ռեֆորմատորներին, որոնք գյուղացուն մեղադրում են իր տգիտության և անշարժության համար, փոխանակ պարզելու տնտեսական պատճառները, որի հետևանքով գյուղացին մնում է

տգետ ու անշարժ։ Աղելյանը սպառողական կոոպերացիան դիտում է որպես մեկը այն «կուլտուրական միջոցներից, որոնք կրարձրացնեն գյուղացու տնտեսական դրությունը»։

Աղելյանը խորապես համոզված է, որ գյուղական աղքատությունը, տգիտությունը, նրա հասարակական-բարոյական հարաբերությունները կարելի է փոխել միայն տնտեսական գործոնի շնորհիվ։ «Որոնեցեք պարոններ,— ուղղում է իր խոսքը Աղելյանը բուրժուական հրապարակախոսներին,— այն պատճառները, որոնք գյուղացուց դուրս են և որոնք տանում են գյուղացուն այնպես, որպես հեղեղը մի տերևը։ Գյուղացին իր ցավերում մեղավոր չէ. դուցա հիմքը որոնեցեք պատմական-տնտեսական այն հանգամանքների մեջ, որոնց բարդ կապի շնորհիվ նոքա այդ թշվառ դրության են մատնվել. քրքրեցեք այդ հանգամանքները, վերլուծեցեք դրանց, մի առ մի գնեցեք վերլուծված տարրերը—և երևույթը պարզված կլինի»[1]։

1900 թվականին Աղելյանը «Մուրճ» ամսագրում հանդես է գալիս «Համարակական խանութներ» խորագիրը կրող հոդվածով, որի մեջ նա ցույց է տալիս, որ սպառողական կոոպերացիան կոչված է «համեմատաբար թեթևացնելու գյուղացու վիճակը, որը տառապում է կեղեքիչ մանրավաճառների

---

[1] Ս. Աղելյան, Համարակական խանութներ, «Մուրճ», 1900, № 3, էջ 336։

դյուրության շնորհիվ»: Հասարակական խանութը, Ադելյանի կարծիքով, կազատի գյուղացուն մանրավաճառների ձեռքից, որոնք կլանում են նրա եկամուտի զգալի մասը և, բացի այդ, կմատակարարի գյուղացուն էժան և լավ ապրանքներ, ու տարվա վերջը որոշ տոկոս արդյունք կբերի նրա անդամներին: Այդ հոդվածում Ադելյանը շարադրում է կոոպերացիայի պատմությունը, խոսում է նրա էության և նշանակության մասին: Ընդգծելով այն փաստը, որ կոոպերացիան ստեղծվել է բանվորների ջանքերով, նա տալիս է Ռոշդելցիների պատմությունը, որոնք միավորելով իրենց ջանքերը, ստեղծում են առաջին կոոպերատիվը, որոնց օրինակով շուտով մի ամբողջ ցանց է ստեղծվում ամբողջ Եվրոպայում:

«Ռոշդելյան ընկերության համառոտ պատմությունը մի պատկեր է,— գրում է Ադելյանը,— որ ցույց է տալիս այդ հիմնարկության օգտակարությունը տնտեսական տեսակետից: Եթե այդ ընկերությունները մեզանում անգլիական ընկերությունների հաջողությունը չունենան, դրանք որոշ չափով կթեթևացնեն մեր գյուղական տարրի տնտեսական դրությունը»:

Իր հոդվածը Ադելյանը դիտում է որպես ուղեցույց, որը պետք է օգնի և պարզաբանի գյուղացիներին կոոպերատիվներ ստեղծելու օգտակարությունը: Յանկանալով ընթերցողներին հասկացնել, որ այդ ձեռնարկությունը որևէ հակակառավարա-

կան միտում չունի, Ադելյանը շտապում է ծանուցել իր ընթերցողներին, որ «Հասարակական խանութների կանոնադրությունը հաստատված է ներքին գործոց մինիստրության կողմից և նահանգապետներին իրավունք է տրված հաստատելու այդպիսի ընկերությունները»։ Սակայն կոոպերացիայի նշանակությունը Ադելյանը չի սահմանափակում միայն տնտեսական օգտակարությամբ։ Նա Ռոշդիլդինների օրինակով ցույց է տալիս, թե ինչպես 47 տարվա ընթացքում նրանք կարողացան կուտակել 1,5 միլիոն ղուտ արդյունք և այն օգտագործել կուլտուր-լուսավորական նպատակների համար։ Իր վաստակած գումարներով Ռոշդիլդյան ընկերությունը կազմակերպում է ուսումնարան, գրադարան, ընթերցարան և այլ կարգի միջոցառումներ իրականացնում։

Ադելյանը հանդես է եկել ոչ միայն սպառողական կոոպերացիայի պրոպագանդիստի դերում, այլև գործոն մասնակցություն է ունեցել իր հայրենի գյուղում Մեղրիում, սպառողական կոոպերացիայի հիմնադրման աշխատանքին, մի կոոպերացիա, որը ամենայն իրավամբ համարվում է Հայաստանում առաջինը դեռ գյուղական իրականության մեջ։

Մեղրու սպառողական կոոպերատիվը բացվել է 1901 թվականի հունիսի 1-ին, սակայն նրա հիմնադրումը տեղի է ունեցել 1899 թվականին, երբ Մեղրու գյուղի առաջավոր ինտելիգենցիան երկար

նախապատրաստական աշխատանքից հետո, ձեռնամուխ է լինում կոոպերացիայի հիմնադրման գործին։ Մեղրու կոոպերացիայի պատմությունը մի ցայտուն վավերագիր է այն դժվարին պայքարի, որը տարել է գյուղի աշխատավորությունը տեղի վաշխառուների դեմ և հաղթանակով պսակել այդ պայքարը։ Այն հանգամանքը, որ Մեղրու սպառողական կոոպերացիան առանց ընդմիջումների, իր գոյությունը պահպանեց մինչև սովետական կարգերի հաստատումը, խոսում է նրա կենսունակության և հաստատուն հիմքի մասին։ Հայաստանում այդ առաջին կոոպերատիվն էր, որը ստեղծվում էր գյուղական աշխատավորության, նրա ինտելիգենցիայի ջանքերով, որպես միջոց պայքարելու գյուղում բուն դրած վաշխառուների դեմ։ Կ. Կարապետյանի «Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում» գրքում հարուստ փաստական տվյալներով վեր է հանված այդ կոոպերացիայի ստեղծման և նրա գործունեության պատմությունը, որի մեջ բացահայտորեն երևում է գյուղի սոցիալապես իրարամերժ ուժերի սուր պայքարը, որը տարվում էր հատկապես կոոպերացիայի հարցի շուրջը։

Մեղրի գյուղի աշխատավորական-դեմոկրատական ինտելիգենցիան, որը կրթություն էր ստանում Ներսիսյան դպրոցում և Գևորգյան ճեմարանում ու այլուր, իրենց գաղափարական մկրտությունը ստանում էին ոչ միայն հայ առաջավոր հասարա-

կական մտքի, այլև ռուս ռևոլյուցիոն նարոդնիկության գաղափարական ավազանում, դյուլ վերադառնալով, բերում էին իրենց հետ հասարակական կյանքի վերակառուցման և բարենորոգության նոր և կենսարար գաղափարներ: Իրենց ջանքերը ուղղելով գյուղացու կուլտուր-տնտեսական կյանքի բարելավման հարցին, նրանք կարողացան զգալի գործ կատարել իրենց հայրենի գյուղի զարգացման համար: Այդ ջանքերի լավագույն ապացույցն է Մեղրու դպրոցի հիմնադրումը, որը տեղի է ունեցել 1882 թվականին, ինչպես և՛ գրադարանի, և՛ թատերական ներկայացումների կազմակերպումը:

Ուշագրավ է Մեղրու հասարակության դեմոկրատական խավերի վերաբերմունքը հայ առաջավոր մամուլի նկատմամբ:

«Մշակ» թերթի արխիվում մենք ծանոթացանք 1884 թվականին գրված մի փաստաթղթի, որը ստորագրված է 102 աշխատավոր տնտեսատերերի կողմից և հասցեագրված է Գրիգոր Արծրունուն: Ահա թե ինչ են գրում նրանք.

«Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունուն

Ձեր նյութական անապահովության ու դորա հետևանքով «Մշակ»-ի դադարման տխուր լուրը հասավ մեզ: Անկեղծ սրտից ու բոլոր զգացումներով ցավում ենք: Հայտնելով Ձեզ իր խորին շնորհակալությունը Ձեր 13-ամյա, որքան օգտավետ. նույնքան և ծանր գործունեության համար, Մեղրի

գյուղի հասարակությունը փափագելով փափագում է տեսնել սիրելի «Մշակ»-ի գործչյան շարունակությունը, որքան կարելի է շուտ: Ձեր փշրուտ ճանապարհի վրա ըստ արժանվույն գնահատությունը արդարատատ ապագայից միայն սպասեցեք: Առայժմ ընդունեցեք մեր ջերմ բարեմաղթությունները ու հարգանաց այս թուղթ հավաստիքը:

Մեղրի. 1884 1 օգոստոսի»[2]:

Ուստի զարմանալի չէ, որ մի խումբ երիտասարդ էնտուզիաստների ջանքերով Մեղրիում անցյալ դարի 90-ական թվականների վերջին կազմակերպվում է նաև առաջին սպառողական կոոպերատիվը, որի ստեղծման գործում նշանակալից դեր է կատարել Ադելյանը: Դեռևս Ռիգայում ուսանելու ժամանակամիջոցում Ադելյանը Մեղրի գյուղի իր համախոհ ընկերներին սպառողական կոոպերացիա ստեղծելու մասին խորհուրդներ և հրահանգներ է տվել, ինչպես և «Մուրճ» ամսագրում հանդես է եկել հատուկ հոդվածով: Սպառողական կոոպերացիայի կանոնադրության մշակման համար, որպես ուղեցույց, նա Ռիգայից գյուղ է ուղարկում Ի. Ա. Օզերովի «Что такое общество потребителей» գրքույկը: Ուշադրավ է Ռիգայից նրա գրած նամակը գյուղի ակտիվ գործիչներից Եփրեմ Վարդանյանին.

«Սիրելի Եփրեմ, ստանալով նամակդ անչափ ուրախացա, որ ձեռքերդ ծալած չեք նստել: Քո նա-

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 227, ց. 1, գ. 79, թիվ 1:

մակի բովանդակությունը, երբ հայտնեցի մեր ինստիտուտի քաղաքատնտեսության պրոֆեսորին, նա պահ մի վարանմունքով նայելով վրաս հանկարծ բացականչեց «Боже мой!» այս ի՞նչ եմ լսում. մինչ մենք կարծում ենք, որ Կովկասը հետամնաց մի երկիր է, բայց այսօր պարզվում է, որ այնտեղ մտածողներ կան սպառողական ընկերություն հիմնելու մասին»: Նա իր ուրախությունը հայտնելով հանդերձ, խոստացավ, որ իրա գրադարանից կբերի մի գրքույկ, և մյուս օրը հանձնեց ինձ այդ գրքույկը, որը ուղարկում եմ քեզ: Ես միջոց չունեցա գրքի բովանդակության հետ ծանոթանալու. ամառվա արձակուրդին գալու եմ, կխոսենք: Հաջողություն եմ ցանկանում ձեր ձեռնարկելի լավ գործին: Քո Աղարիան»[3]:

Մեղրու սպառողական կոոպերացիան Ադելյանի և նրա մի խումբ համախոհ ընկերների ներդրած ջանքերի արդյունքն է, մի կազմակերպություն, որը համառ ու տևական պայքարի արդյունք է և այն մինչև սովետական կարգերի հաստատումը դարձավ Մեղրու աշխատավոր գյուղացիության համար վստահելի պատվարներից մեկը գյուղական զորբանների և ցեցերի շահատակումներից պաշտպանվելու համար: Մեղրու սպառողական կոոպերացիայի հիմնադրումը Ադելյանի կարճատև կյանքի փայլուն էջն է կազմում:

[3] Կ. Կարագյան, *Սպառողական կոոպերացիայի ծագումը և զարգացումը Հայաստանում*, Երևան, 1957, էջ 103:

ԱԴԵԼՅԱՆԸ ԵՎ ՆԱՐՈԴՆԻԿ-ԲԵԼԵՏՐԻՍՏՆԵՐԸ

Դեռևս Ադելյանի կենդանության օրոք մեր գրականության քննադատության մեջ այն կարծիքն է հայտնված եղել, թե Գլեբ Ուսպենսկու և Զլատովրատսկու ստեղծագործությունները շատ որոշակի ազդեցություն են ունեցել Ադելյանի ստեղծագործության վրա։ Նմանության եզրեր են նշվել նաև Լ. Տոլստոյի «Власть тьмы» դրամայի և Ադելյանի «Տգիտության զոհեր»-ի միջև։

Սովետահայ գրականության մեջ այդ ազդեցության մասին առաջին անգամ խոսել է ակադեմիկոս Ա. Տերտերյանը իր «Նկատողություններ մեր գյուղագիրների մասին» հոդվածում։ Յուլց տալով հայ-ռուս գյուղի համանման պայմանները և այն համընդհանուր կացությունը, որոնց մեջ գտնվել են 80—90-ական թվականների հայ և ռուս գյուղացին, Տերտերյանը իրավացիորեն նկատում է, որ «մեր և ռուսական կյանքը շատ նման գծեր և զարգացման

նման ուղիներ են ունեցել, որոնք թելադրել են և նման գրական ստեղծագործություններ»[1]:

Խոսելով Պոլենցի, Բալդակի, Ժորժ Զանդի նկարագրած գյուղի և գյուղացու մասին, Տերտերյանը նշում է, որ նրանք շատ կողմերով խորթ են եղել մեզ համար. «Իսկ ռուսական գյուղը ու գյուղացին հարազատ, որովհետև շատ բան մեզ մոտ և Ռուսաստանում նույն հունով է ընթացել գրեթե հարյուրամյա մի շրջանում: Հետևապես հայ և ռուս գրողների նմանություններից շատ-շատերն օբյեկտիվ արժեքի գուգադիպություններ են, քան ենթակա սուբյեկտիվ փոխառություններ»[2]:

Անդրադառնալով Ադելյանի ստեղծագործությանը և խոսելով Ադելյանի և Ագայանի միջև եղող նմանությունների մասին, Տերտերյանը նկատում է. «Մեղրեցի հեղինակը մեր գյուղագրիների մեջ, առաջինն էր, որին մենք չափով գրավիլ և ոգևորել է կոոպերացիայի գաղափարը: Անգամ այդ բաժնում նրա վրա խոշոր ազդեցություն է արել ռուսական հասարակագիտական գրականը, առանձնապես նարոդնիկությունը և Չերնիշևսկու հրապարակախոսությունը»[3]:

---

[1] Ա. Տերտերյան, Նկատողություններ մեր գյուղագիրների մասին, ՀՍԽՀ պետհամալսարանի գիտական տեղեկագիր, 1927, № 2—3, էջ 308:

[2] Նույն տեղում, էջ 306:

[3] Ա. Տերտերյան, Նկատողություններ մեր գյուղագիրների մասին, էջ 288:

Համակարծիք Չերնիշևսկու կրած ազդեցության մասին Տերտերյանը գրում է, թե «Ադելյանի երկերից երևում է, որ Չերնիշևսկու հիշյալ վիպը («Ի՞նչ անել» — Ս. Գ) մանավանդ վերա Պավլովնայի համայնավարական երազը որոշ ազդեցություն է թողել նրա աշխարհայացքի վրա»[4]։

Ս. Տերտերյանը Ադելյանի ստեղծագործության մեջ նարոդնիկական գաղափարախոսության որոշակի արտահայտություններ է գտնում այն մասերում, ուր Ադելյանը խոսում է ժողովրդի հանդեպ ունեցած հայ մտավորականների պարտականությունների «լուրջ և օգտակար աշխատանքի մասին»։

Բացի իդեալներից, կամ գուցե այդ պատճառով,— շարունակում է Տերտերյանը,— Ադելյանը կրել է նաև դեղարվեստական ազդեցություն նարոդնիկական գրականությունից, հատկապես Գլեբ-Ուսպենսկուց»։

Ինչպես տեսնում ենք, նարոդնիկական գաղափարախոսությունը, ըստ Տերտերյանի, սկսած Չերնիշևսկուց և վերջացրած Ուսպենսկիով իրենց ազդեցությունն են ունեցել Ադելյանի ստեղծագործության վրա, թե գաղափարական և թե դեղարվեստական փոխառությունների իմաստով։

Նույն տեսակետն է պաշտպանում նաև գրականագետ Գ. Հովնանը իր «Ռուսահայ գրական կա-

4 Ս. Տերտերյան, Նկատողություններ մեր դյուզագիրների մասին, էջ 306։

պերը XIX—XX դարերում» աշխատության մեջ։ Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի գաղափարները,— գրում է Գ. Հովհաննը,— որոշակի արտահայտություն են գտել Ա. Ադելյանի երկերում։ Հենվելով Ադելյանի «Ներհակ Առաքելը» վիպակի վրա, Գ. Հովհաննը այն տեսակետն է պաշտպանում, որ նրա հերոսը նույնպես տարված է «Ի՞նչ անել» վեպով[5]։

Ցավոք, պետք է նկատել, որ հայ գրականության պատմությամբ զբաղվող բանասերների ուշադրությունից վերջին երեսուն տարիների ընթացքում դուրս մնաց ռուս նարոդնիկական էտապի ազդեցության լուսաբանությունը հայ հասարակական մտքի և մասնավորապես գրականության վրա։ Ավելին. Տերտերյանի կողմից Ադելյանին «նարոդնիկների հետևորդ համարելը ավելի շուտ դռներ փակեց, քան պրպտումների և ուսումնասիրության նոր ազդակ հանդիսացավ։ Եվ այդ շրջանցումը պատահական չէր։ Ոչ միայն հայ, այլև ռուս հասարակական մտքի զարգացման պատմությունը ուսումնասիրողները անտեսում էին XIX դարավերջի 20—30 տարիների նարոդնիկական էտապը։ Ճիշտ է նկատում Բ. Կոզմինը իր «Նարոդնիկությունը Ռուսաստանի ազատագրական շարժման բուրժուա-դեմոկրատական էտապում» հոդվածում, երբ գրում է. «Վերջին քսան տարիների ընթացքում

---

[5] Գ. Հովհան, *Ռուս-հայ գրական կապերը XIX—XX դարերում, Երևան, 1960, Հատ. 1, էջ 255։*

մենք համարյա չունեցանք նարոդնիկության պատմության մասին լուրջ ուսումնասիրություն: Մասնավորապես մենք զերադասում էինք լռությամբ շրջանցել 70-ական և հետագա տարիների նարոդնիկությունը, ընդհատելով հասարակական մտքի և հասարակական շարժման պատմությունը Չերնիշևսկու կամ լավագույն դեպքում Պիսարևի վրա, իսկ նրանցից անմիջապես անցնում էինք մարքսիզմին: Ինչ վերաբերվում է այն աշխատություններին, որոնց մեջ շոշափվում էին 70—80-ական թվականների ժամանակաշրջանը, ապա նրանք ունեին ավելի շատ մերկացնող, քան ուսումնասիրական բնույթ»[6]:

Ինչ խոսք, որ նարոդնիկ բելետրիստներն ևս արժանացան նույն քմահաճ վերաբերմունքին և անտարբերությանը:

Մոռացության է տրվել Վ. Լենինի հայտնի դնահատականները ռուսական ռևոլյուցիոն շարժման մեջ նարոդնիկների ունեցած երախտիքների մասին: «Ինչ են ժողովրդի բարեկամները և ինչպես են նրանք պայքարում սոցիալ-դեմոկրատների դեմ» գրքում Լենինը գրում էր. «Եվ դուք չեք կարողանա կշտամբել սոցիալ-դեմոկրատներին, թե նրանք չեն կարողացել գնահատել իրենց ժամանակի այդ լավագույն մարդկանց պատմական վիճ-

---

[6] „Исторические Записки", Акад. Наук СССР, 1939, стр. 191.

խարի ծառայությունները, չեն կարողացել խորապես հարգել նրանց հիշատակը»[7]:

Ջենք ուզում ասել, որ Ադելյանը մոռացության է մատնվել այն պատճառով, որ տուրք է տվել նարոդնիկական գաղափարախոսության, քանի որ նրա պատմվածքների թուլուկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իր բովանդակ ստեղծագործությամբ նա գալիս էր հաստատելու նարոդնիկական դյուղափրկչական ծրագրերի անիրագործելի լինելու հանգամանքը, այլ, այն, որ Ադելյանը, ինչպես և մեր դյուղագիրները, որոնք բացառապես զբաղվել են հայ դյուղացու բախտի և ճակատագրի հարցերով, դիտվել են որպես նարոդնիկական տրամադրությունների արտահայտիչներ, ուստի և շրջանցել են, թե՛ նրանց գաղափարախոսությունը և թե՛ արվեստը:

Ադելյանի ստեղծագործության արժանիքներից մեկը այն է, որ աշխատել է հիմնավորել նարոդնիկական տեսությունների ուտոպիկ լինելը և ապացուցել, որ այդ գաղափարախոսությունը կորցրել է իր նշանակությունը և որ հայ դյուղում ոչ մի հիմք չկա այդ տեսությունների իրականացման համար:

Իր «Դաստր խոստովանանք»-ի մեջ Մորմոքյանը բանավիճում է Տոլստոյի հետ ինտելիգենցիայի դյուղին ծառայելու գաղափարի շուրջը: «Մեր ժա-

---

[7] Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., Հատ. 1, Երևան, 1941, էջ 326:

մանակ,— ասում է Մորմոքյանը,— ուսանողության մեջ հաճախ էր պատվում գյուղին ծառայելու գաղափարը։ Այժմ էլ նույն երևույթը նկատելի է կարծեմ։ Շատերն էին ոգևորված Տոլստոյի, Գլեբ-Ուսպենսկու և Զլատովրատսկու քարոզած գաղափարներով։ Նարոդնիկների այդ երեք հսկաները հրավեր էին կանչում ինտելիգենտ ուժերին գյուղ գնալու, «մուժիկին» ծառայելու համար։ Մերոնք խոսքով արձագանք էին տալիս այդ կոչին և ուխտում էին նվիրվել այդ գործին։ Վերջում, իհարկե, ոչ ոք իր ուխտը չկատարեց»։

Սակայն Մորմոքյանը պատկանում է ինտելիգենցիայի այն փոքրաքանակ խավին, որոնք գյուղ են մեկնում, ծառայելու գյուղացուն, սակայն իր գործի ու փորձի հիման վրա նա հանգում է այն տխուր եզրակացության, «որ այդ ամենը ցնդաբանություն է»[8]։

«Իմ գործունեությունը,— ասում է Մորմոքյանը,— գլխավորապես պիտի նպաստեր գյուղացոց տնտեսական պայմանների զարգացմանը։ Իսկ դրա համար ես իմ ոտքերի տակ պատրաստի հող չունեի։ Ինչպե՞ս կարող է մի տեղի արդյունաբերությունը զարգանալ, եթե չկան արտահանության և արդյունաբերության պայմաններ»[9]։

Մերժելով «Դեպի ժողովուրդ» նարոդնիկական լոզունգը, Ադելյանի հերոսը ծաղրում է գյուղի իր

[8] Ա. Ադելյան, *երկերի ժողովածու, էջ 189։*

[9] *Նույն տեղում, էջ 198։*

գործունեությունը. «Մնում էր էլի ընթերցանությամբ զբաղվել դյուզացիների հետ, խառնվել համայնական մանր գործերի մեջ, իսկ տանը գինու շշերով կենալ...»:

Նարոդնիկական մտայնության դեմ է ուղղված նաև, «Նոր հոգսի հետևից» պատմվածքը: Քաղաքից գյուղ եկած Մարուքյանը նույնպես քարոզում է Գ. Ուսպենսկու «Հողի իշխանության» առավելությունները. «Հողագործական աշխատանքը,— ասում էր Մարուքյանը,— իր մեջ պարունակում է աշխատանքի համարյա բոլոր բաժինները, և հողագործը, գյուղացին՝ իր ուսերի վրա առած լինելով այդ բոլոր բաժինները, ինքն է իր բոլոր պահանջներին լիուքյուն տալիս: Այդպիսով նա զարգացնում է իր բոլոր ընդունակությունները, աշխատանքի բաժանումը նրա օրգանների մեջ ընդարձակում է և նա դառնում է իր գլխի տեր, ուրիշներից անկախ մարդ: Բացի այդ անկախությունից, բազմակողմանի աշխատանքը հոգեկան և բարոյական բավականությունների անսպառ աղբյուր է: Իսկ ամեն օր մեքենայի կողքին ժամերով կանգնած մնալը ինքնասպանություն է, ինքնասպանություն...»[10]:

Սակայն հենց այդ պատմվածքում, ինչպես և «Ճար չկա», «Նոր հոգսի հետևից», «Դառը խոստովանանք» ակնարկներում և պատմվածքներում

---

[10] Ա. Աղեյան, Երկերի ժողովածու, էջ 156:

Ադելյանը ցույց է տալիս, որ հողագործական աշխատանքի իդեալը դարձել է արդեն անցյալի հուշ և նոր հարաբերություններն են տնօրինում հողի իշխանությունը:

Նույն պատմվածքի հերոսը՝ Հարությանը, նարոդնիկական իդեալներով ոգեշնչված, վեց տարի գյուղում աշխատելուց հետո, գալիս է այն հոգի հետևության, թե «գյուղում դժվարությունների առջև տոկուն գործչի եռանդը և դիմացկունությունը նեցուկ չեն կարող լինել» և բացատրում է իր ընկերոջը «իր աշխարհայացքի մեջ տեղի ունեցած խոշոր փոփոխությունների մասին հայտնի հանգամանքների շնորհիվ»: Գյուղական իրականության ճանաչողությունը ստիպում է Հարությանին վերանայել իր ունեցած նախկին համոզմունքները (իմա՝ նարոդնիկական) և որոնել նոր ուղիներ գյուղացու վիճակի բարվոքման համար:

Որն է Ադելյանի դրական իդեալը գյուղացուն տնտեսական և բարոյական կործանումից փրկելու համար: Երբ կարդում ես «Ճար չկա» պատմվածքը, ապա ակնհայտորեն երևում է, որ հետևությունները հոռետեսական են, որովհետև խավարի և աղքատության տիրակալությունը գյուղում, որը ճշմարտացիորեն պատկերում է Ադելյանը, ոչ մի կասկած չի թողնում շինարար միջոցառման որևէ հնարավորության մասին: Ուսուցչի հետևյալ խոստովանությունը, որով ավարտվում է այդ պատմվածքը, ինքնին հատկանշական է. «Ի՞նչ ելք ցույց

տայի նրանց, բարդ խնդիր էր ինձ համար։ Իսկ հոգնած, ջարդված մարմինս, քնելու սաստիկ ցանկությունս թույլ չէին տալիս գոնե պարզելու հասարակական կյանքի այն ընթացքը, որ այդպիսի դրություն է ստեղծել կամ այն հոսանքը, որ կատաներ դեպ բարելավություն»[11]

Սակայն երբ հաջորդ օրը ուսուցիչը ձեռնաթափ եղած, պատրաստվում է վերադառնալ գյուղից, ստիպված է լինում խոստովանել. «Է՛հ, գնանք,— ասացի ինքս ինձ սաստիկ հուզված,— այստեղ ուր ամեն ինչ հիմնահատակ փլված է, ոչինչ չի կարելի շինել»[12]։

Ադելյանը խորապես համոզված է, որ լուսավորչական միջոցառումները ի վիճակի չեն վերացնելու գյուղում արմատակալած մի շարք հոռի և պակասավոր երևույթները։ Հարությանը «Նոր հոգսի հետևից» պատմվածքում ասում է. «Ինձ թվում է այժմ, որ իմ գործունեությունը ընթացել է սխալ ճանապարհով։ Նա արձագանք չի տվել գյուղի ժամանակակից պահանջներին» իսկ իր սխալը նա համարում է այն, որ անտեսել է «գյուղի տնտեսական բարվոքման խնդիրը»[13]։

Ադելյանը համոզում է ընթերցողին, որ «լոկ մտքի զարգացումը, բարոյագիտական խրատները

---

[11] Ա. Ադելյան, *Երկերի ժողովածու*, էջ 146։

[12] Նույն տեղում, էջ 147։

[13] Նույն տեղում, էջ 177։

և գյուղացու տգիտության դեմ խոսքով մաքառելը անկարող են ցանկալի դրության առաջ բերել, անզոր են գյուղացուն բարեկարգ վիճակի մեջ դնելու»:

Ադելյանը խորապես հասկանում է տնտեսական ֆակտորի վճռական նշանակությունը հասարակական կյանքի զարգացման գործում, մի հանգամանք, որ վկայում է Մարքսի տնտեսական ուսմունքին ծանոթ լինելու փաստի մասին, որովհետև «Նոր հոգսի հետևից» պատմվածքի գործող անձերից Մուրադյանի ակնարկից «Թե մի քանի քաղաքատնտեսներ նույնիսկ կյանքի էվոլյուցիան բացատրում են տնտեսական տեսակետից և տնտեսական հանգամանքներն են ընդունում իբրև առաջադիմության միակ ֆակտորը, ոչ մի կասկած չի թողնում այն մասին, որ Ադելյանը, հավանորեն, Շահումյանի ազդեցությամբ ուսումնասիրել է Մարքսի ուսմունքը և, բնական է, որ այդ ուսմունքի լույսի տակ նա պետք է ճիշտ ուղիներ մատնանշեր գյուղի հետագա զարգացման համար: Մահը ընդհատեց Ադելյանի կյանքը նրա տաղանդի ծաղկման այն պահին, երբ գեղարվեստական նոր ստեղծագործությունները պետք է այդ աշխարհայցքի վկայությունը հանդիսանային:

Ադելյանը ոչ միայն պահպանեց հայ ռեալիստական գրականության լավագույն ավանդները, այլ հանդիսացավ ռուս նարոդնիկ բելետրիստների գաղափարական ժառանգորդը և նրանց գեղագիտա-

կան սկզբունքների իրացնողներից մեկը մեր գրականության մեջ։ Անպայման նարոդնիկ-բելետրիստները և Ադելյանի արձակ ստեղծագործության համընդհանուր գծերը պայմանավորված էին արդյունաբերական կապիտալիզմի պարզացման պայմաններում ռուս և հայ գյուղի նույնանման կացությամբ։ Այդ առումով միանգամայն իրավացի է ակադեմիկոս Տերտերյանը, երբ 90-ական թվականներից ասպարեզ եկած մի շարք գյուղագիրների ստեղծագործությունը համարում է օբյեկտիվ վիճակի արձագանք, քան գրական ազդեցությունների և փոխառությունների հետևանք։ Սակայն դրա հետ մեկտեղ հայ դեմոկրատ ռեալիստը կրել է նարոդնիկ բելետրիստների, մասնավորապես Գ. Ուսպենսկու ազդեցությունը թե գաղափարական և թե արվեստի առումով դառնալով նրա ջերմ հետևորդներից մեկը։

Անցյալ դարի 90-ական թվականներից սկսած, երբ հայ գյուղը ապրում էր իր արագ փլուզման շրջանը, Ադելյանը բնականաբար իրեն հուզող և լուծում պահանջող գյուղական «անիծյալ» հարցերի պատասխանը պետք է որոներ Գ. Ուսպենսկու, Զլատովրատսկու, Կարոնինի, Կորոլենկոյի և մյուս բելետրիստների ստեղծագործություններում, գրական այն հուժկու շարժման մեջ, որը դեռ մի երկու տասնամյակ առաջ ամենայն սրությամբ դրել էր ռուս գյուղի և գյուղացու բախտի և ճակատագրի հարցերը։ Ադելյանը ոչ միայն այդ գրականության

ուշիմ հետևողներից էր, այլև, ինչպես ինքն է գրում, նրա «ուսումնասիրողը»:

Գ. Ուսպենսկուն և Ադելյանին նույնացնում է նախ և առաջ իրականությունը մանրազնին ուսումնասիրելու ձգտումը, փաստի ճանաչողության ցանկությունը, թվերի և փաստարկների դիմելու եղանակը: Ուսպենսկին գրում էր թե «հաճախ եմ դիմում հուշատետրիս, որը իրենից զանազան դիտողությունների, կտրած-հանած տեղեկանքների, քաղվածքների խառնափնթոր մի կույտ է, հավաքած պատահականորեն, թռուցիկ ինչ-որ տեղից, ինչ-որ մի կերպ, գրված ինչպես որ պատահել է, և ձեռքս ընկածով (նույնիսկ մի անգամ ծամկալով, և երկու անգամ լուցկով): Ադելյանը ևս նույն սկզբունքն է դավանում: Իր հրապարակախոսության մեջ պաշտպանած այն թեզը թե «Տվեք մեզ ուսումնասիրություն, այլ ոչ թե աչքի հարևանցի դիտողություն», նա իրացրել է գեղարվեստական երկերում, հարազատ մնալով իրականությանը և փաստերին: Պատահական չէ, որ նրա արձակում գերիշխում է «Ուսուցչի հիշատակարանից» կամ «Ճանապարհորդի հիշողություններից», «Եղելություն», «Պատկեր» ենթավերնագրերը, որոնք նյութի փաստական լինելու հանգամանքն են հաստատում:

Երկու գրողներն էլ գեղարվեստական պատկերների և հրապարակախոսական ընդհանրացումների միջոցով բաժանում են ընթերցողի հետ իրենց ու-

ուսմնասիրության արդյունքները և խոհերը, ձգտելով համոզել իրենց հետևությունների և եզրակացությունների ճշմարտացի լինելու մեջ։ Որպես դեմոկրատ ռեալիստներ նրանք խոսել են գերազանցապես գյուղի կենսական և արդիական հարցերի մասին, իրենց հուզող թեման մատուցելով գրական սեղմ և մատչելի ձևերի մեջ, լինի ակնարկ, կամ պատմվածք, ուղեգրություն թե հրապարակախոսական նոթեր։

Ուսպենսկին և Ադելյանը ժամանակակից գյուղում տեսել են բացառապես հոռի երևույթներ, կամ ինչպես Ուսպենսկին կասեր «сплошь весь неплательщичий мир» և ձգտել են իմաստավորել այդ «անվճարունակ» աշխարհի քայքայման պատճառները։ Կարդացեք Գ. Ուսպենսկու «Ակնարկներ անցողիկ ժամանակների մասին» կամ «Վերաբնակիչների մոտ» ճամփորդական նոթերը, և կտեսնեք կյանքի խորը ուսումնասիրության ձգտումը, թվերի և փաստերի նկատմամբ ունեցած նախասիրությունը։

Պատահական չէ, որ գյուղացիական կյանքից վերցրած աղաղակող և անհավանական թվացող փաստերի նկատմամբ շատ հաճախ Ուսպենսկին դիմում է այնպիսի եզրափակիչ հավաստիացումների, ինչպես, օրինակ, «այդ ես իմ աչքերով եմ տեսել» կամ «այդ մասին ինձ պատմեց Ն.» համոզելու համար ընթերցողին փաստի արժանահավատության մեջ։

Կյանքից վերցրած իրական փաստերով երկու գրողներն էլ գյուղական ոլորտում տեսնում են կործանիչ և ավերող ուժերի տիրակալություն, գյուղական բարքերի վերասերում և քայքայում։ Ուսպենսկու «Նապաստակային խիղճը» ակնարկում, ծերունի բուրմիստրը դառնացած հարցնում է հեղինակին. «Ուր է մարդկային միտքը, պարոն գրող և որտեղ է սահմանը, վերջը, հույսը։ Ես ձեզ եմ հարցնում, պարոն գրող, որտեղ է մարդկային հոգիների կործանման վերջը։ Հանուն ինչի և ում է հարկավոր այդ կործանումը, իսկ, չէ ո՞ր նրա վերջը չի երևում! Էլ ինչի համար է սիրտը, եթե բացի կործանումից ոչինչ չի կարող հայտնագործել։ Չէ՞ որ, տերս, ամեն ինչ այժմ ճանկերով պոկված է, ամեն ինչ հափշտակված, չէ որ այժմ կանոնավոր սայլ անգամ չես տեսնի, չէ որ անասուն անգամ չկա, որով մարդ հիանար, չէ որ այժմ ընդարձակ խրճիթ չի մնացել։ Չէ որ ամեն ինչ սպառվում է, ամեն ինչ փտում, ամեն տեղ ցուրտ, խոնար, առանց հացի և ամեն ոք մեղսագործ։ Ոչ ջերմություն, ոչ ուրախություն, ոչինչ չկա...»։ Ծերունի բուրմիստրը ափսոսանքով է խոսում նախառեֆորմյան ժամանակների մասին, ուր պահպանվում էր անցյալի կարգ ու կանոնը, գյուղացու ապնվությունը, բարոյական մաքրությունը, նրա անխարդախ սիրտը. «Իսկ այժմ,— բացականչում է բուրմիստրը,— սարկություն էլ չկա, և վիշտն է շատ, և չարիքը, և արցունքներ են

շատ, իսկ ճշմարտությունից բոլորն էլ վախենում են»[14]:

Ադելյանի դյուղացին նույնպես բողոքում է դյուղի համար ստեղծված պայմաններից, քաղաքից եկած նորամուծություններից: «Երկու կրակի մեջ» պատմվածքում Դավիթ ապոր մտորումները այն մասին, որ «հիմա սաղ դյուղում տուն չկա, որ պարտք չունենա» կամ «չայը, որ մտել է էս դյուղը, ամեն տեսակ ցավեր ու հոդսեր շատացել են» Ուսպենսկու բուրմիստրի մտքերի ու տրամադրությունների արձագանքն է: Սակայն եթե Ուսպենսկին տեսնում է միայն կապիտալի ավերիչ բնույթը, ապա Ադելյանը հասկանում է տեսնելու նաև կապիտալիզմի օրինաչափ բնույթը, նրա պատմական անխուսափելիությունը:

1883 թվականին գրված «Կովկասում» ակնարկի մեջ, Ուսպենսկին գրում է. «Ախ, այդ քաղաքակրթությունը և երկաթուղինները, ինչպես նրանք հանդարտեցնում են, ջնջում երկրի երեսից ազգային բոլոր գծերը, առանձնահատկությունները»: Տեսնելով բարեկազմ մինդրելացուն, որը բուֆետում սպասավոր է դարձել Ուսպենսկին գրում է. «Հին ժամանակներում այդ մինդրելացուն, ես կարծում եմ թնդանոթով չէին կարող տեղից տեղափոխել, լինելու միրուքավոր դուքանչու սպասավորը, իսկ այժմ ահա

---

[14] Гл. Успенский, собр соч., Гихл, 1957, Москва, т. 8 стр. 134.

քաղաքակրթությունը «երկաթուղիներով» սահիպել է աշխատել 16 ու կես մանեթով և տիրոջ հացով»[15]:

Մի այլ տեղ. «Ահա Մցխեթը: Այստեղ Քուռը և Արագվան միանում են (որտեղ Քուռը և Արագվան, ինչպես քույրեր իրար են գրկած) ահա հենց այն տեղը, որտեղ քույրերը գրկախառնվում են, վարձակալված է, ինչ որ վաճառականի կողմից և արդեն մի այդպիսի ձկնարդյունաբերող վաճառական՝ Ն-ի չարաշահումների վերաբերյալ գործի, ինչպես ասում են «հենթակա է քննության»[16]: Ուսպենսկին ցարական իմպերիայի ծայրամասերում նույնպես տեսնում էր շահագործման դաժան ձևեր և պարոն Կուպոնի գործանարար հետքեր:

Ճիշտ է «երկու կրակի մեջ» պատմվածքում Ադելյանի գյուղացին տրտնջում է ժամանակակից գյուղի վերասերված թարքերից և ուսուցիչը բաժանում է գյուղացու այդ տեսակետը՝ «Գյուղացին կորցրել է ամեն բան, պարզություն, ազնվություն, խիղճ, բարեկամական և ընկերական կապ, մոռացության է տվել նաև եկեղեցին: Ամեն ոք առանձնացել է իր համար միայն ապրելու և ապրելու առանց խղճի»: Սակայն ինչպես ուսուցիչն է եզրակացնում. «Այդ ամենը քաոս չէ ներկայացնում ինձ համար, այլ որոշ պայմաններում անխուսափելի հետևանք»:

---

[15] **Гл. Успенский.** Собр. соч. Гихл. 1957, Москва, т, 8, стр. 169.

[16] *Նույն տեղում, էջ 163:*

Հայտնի է, որ Գ. Ուսպենսկին 1888 թվականին մեկնեց Սիբիր ծանոթանալու Ռուսաստանից վերաբնակվող գյուղացիների պայմաններին հետ։ Անվանի գրողը եղավ Կազանում, Պերմում, Տյումենում, Տոմսկում և ահագին նյութ հավաքեց ծայր աղքատության եղրին կանգնած վերաբնակիչների մասին և տպագրության հանձնեց իր տպավորությունները, ցույց տվեց ցարական կառավարության այդ միջոցառման սնանկությունը, ագրարային ճգնաժամը մեղմելու նրա հակաժողովրդական այդ ձեռնարկումը։ Մեկ տարի անց՝ 1889 թվականին Գ. Ուսպենսկին մեկնեց Բաշկիրիա, ուր վերաբնակված գյուղացիների վիճակը ցնցեց գրողին։ Այդ ուղևորության արդյունքը եղավ «Օրենբուրգից մինչև Ուֆա» ակնարկների ցիկլը, որտեղ դեմոկրատ գրողը հրապարակախոսական համարձակ ընդհանրացումներով փորձում էր ռուսական դեմոկրատիայի ուշադրությունը բևեռել գյուղացիական կյանքի սարսափների վրա։ Երբ կարդում ես Գ. Ուսպենսկու այդ տարիներին գրված ակնարկները և համեմատում Ադելյանի «Ճանապարհին» ակնարկի հետ ապա ակնբախ է դառնում նրանց նմանությունը, նկարագրական եղանակի նույնատիպ բնույթը։ Երկու գրողներն էլ ճանապարհորդական ակնարկներում տալիս են, ոչ թե պանդուխտ գյուղացիների անհատական դիմանկարները այլ պանդխտության մեկնողների կոլեկտիվ նկարագիրը, ընդգծած լինելու համար սոցիալական

այդ չարիքի համատարած բնույթը, նրա չափը։ Նկարագրելով բնավեր եղած գյուղացիական զանգվածը «շարժման» մեջ, դրանով իսկ երկու գրողներն էլ ցույց են տալիս նրանց ֆիզիկական կործանման անխուսափելիությունը։ Եվ, վերջապես, երկու ակնարկներն էլ հարուստ են խոհերով և դատողություններով՝ ձգտելով ընթերցողի մեջ արթնացնել ոչ միայն գութ և կարեկցանք, այլև ատելություն ու պայքարի անհրաժեշտության գյուղացուն կործանող պատճառների նկատմամբ։

Ադելյանի մի քանի պատմվածքները նույնպես գրված են Ուսպենսկու երկերի ներշնչմամբ։ Այսպես, օրինակ, Ադելյանի «Հիվանդոտ խիղճը» պատմվածքը հիշեցնում է Գ. Ուսպենսկու «Անբուժելին»։ Ադելյանի պատմվածքում Սահակ ապերը գամված է անկողնուն, սակայն մերժում է բժշկի նշանակված դեղերը՝ պահանջելով վերջինից բուժել, ոչ թե մարմինը՝ այլ հոգին։ Ադելյանի պատմվածքը դա ծեր մարդու խոստովանանքն է իր հանցանքի մասին, մի ոճիր որ նա կատարել է շատ տարիներ առաջ՝ փողի համար սպանելով, մի անմեղ մարդու։ Ծերունին խնդրում է քուժել իր մեղսագործ հոգին։ Նրա մեջ արթնացել է խիղճը և այժմ նրան տանջում է իր կատարած հանցանքի գիտակցությունը։ Գ. Ուսպենսկու «Անբուժելին» պատմվածքում հայր Ամբրոսիին նույնպես՝ ապրել է առանց խղճի, ապրել է միայն փողի համար, ամուսնացել է նաև փողի համար, ամեն ինչ կյան-

քում չափել է փողով, մի մարդ, որի «խիղճը և սիրտը ծածկված էին դեպի ամենը ունեցած անտարբերության հաստ շերտով»:

«Այժմ արդեն ես իմացա,— ասում էր հայր Ամբրոսին,— որ վարվում եմ անխղճորեն, բայց և այնպես վարվում էի, ուստի ես ինձ զգացի ոչ թե մի հասարակ խոզ մարդ, այլև ծուռ և շիտակի նկատմամբ խաբեբայից-խաբեբա և իմ հոգու վրա այնքան կեղտ էր կուտակվել, որ այդ պատմել ձեզ, իսկապես ոչ մի հնարավորություն չկա...»[17]:

Եվ ահա հայր Ամբրոսիի մոտ արթնանում է խիղճը: Ուսպենսկին ցույց է տալիս նաև շարժառիթը, որ ստիպում է հայր Ամբրոսիին ուշքի գալ իր նողկալի կյանքից: Նա տեսնում է, թե ինչպես հարստության տեր երիտասարդ կինը թողել է ամեն ինչ, թողել է ամուսնուն և եկել է գյուղ և պարապում է չքավոր երեխաների հետ, ապրում խոնավ նկուղում, զրկում իրեն ամեն ինչից և նույնիսկ իր ընչին միջոցներով օգնելով չքավոր երեխաներին շարունակում է իր նվիրական գործը: Խորապես ցնցված այդ դեպքից հայ Ամբրոսիի մոտ արթնանում է խիղճը: Նա հասկանում է, որ իր անցած կյանքը, իր ընտանիքը, իր միջավայրը եղել է սուտ, կեղծ, ահավոր մի խաբեություն: Նրա առաջ բացվում է իր քարոյական անկման ահավո-

---

[17] **Гл. Успенский**, Собр. соч. Гихл, 1957, Москва, том 3, стр 197.

թուիչյունը և նա ցանկանում է իր «խողային հոգին մարդկային դարձնել»: Պատմվածքում բարոյալքված, հարբեցող մարդը բժշկից միջոցներ է խնդրում իր հիվանդ հոգին բուժելու համար: Եթե հաշվի առնելու լինենք, որ Գ. Ուսպենսկու պատմվածքը կառուցված է հերոսի խոստովանանքի վրա, ապա ակնհայտ կդառնա ոչ միայն թեմաների, այլև պատմվածքների սյուժետային նմանությունը: Ժամանակակից մարդու բարոյական անկման թեման հավասարապես հուզել է թե՛ Գ. Ուսպենսկուն և թե՛ Ադելյանին:

Որոշակի նմանություն կարելի է գտնել Գ. Ուսպենսկու «Խնդիրը» և Ադելյանի «Ծանր խնդիր» պատմվածքների միջև: Ադելյանը իր պատմվածքը անվանել է «Նմանողություն»: Եվ իրոք դժվար չէ նկատել, որ պատմվածքը գրված է Ուսպենսկու գործի ազդեցությամբ: Ուսպենսկին 60-ական թվականների վերջերին չինովնիկության կյանքից վերցրած պատմվածքում ցույց է տալիս գավառական մանր աստիճանավորին, որն ապրում է չնչին աշխատավարձով և չի կարողանում ծայրը ծայրին հասցնել: Նա ծանրաբեռնված է մեծ ընտանիքով, որովհետև կինը ամեն տարի մի երեխա է պարգևում նրան: Պատմվածքում կրսկինը հենց նոր վերադարձել է գերեզմանատնից, որտեղ նա թաղել է իր երկու շաբաթական երեխային: Նա երիտասարդ է, սիրում է կնոջը, սակայն իր աշխատավարձով չի կարողանում կերակրել իր մեծացող

ընտանիքը: Յուրաքանչյուր անգամ նա իր երեխայի կնունքին հաստատապես վճռում է ասելով. «Սա արդեն վերջինն է» սակայն մեկ տարի անց նա նոր կնքահայր է որոնում իր նորածին երեխայի համար: Խորհրդակցելով կնոջ հետ, այլևս երեխա չունենալու հաստատ որոշումով նրանք նույնիսկ առանձնացնում են իրենց ննջարանները, սակայն կըսկինի մտքով անցած ցանկությունը այն մասին, թե «Եթե հանկարծ ռոճիկի հավելում լինի» ստիպեն բավական է որպեսզի ամուսիններն լինեն իրար հետ: Կըսկինը դարձյալ իր կնոջ հետ ընկճված վիճակում կրկին խորհրդակցում է, թե ում են կնքահայր հրավիրելու սպասվող նորածնի համար: Ադելյանը իր պատմվածքի թեման վերցրել է գյուղական իրականությունից: Ադելյանը փորձում է ցույց տալ՝ գյուղացու տնտեսական քայքայման պատճառներից մեկը հանդիսանում է բազմազավակությունը, քանի որ ունեցած հնարավորությունները չեն կարողանում երեխաների օրվա հացը հայթայթել: Ադելյանը իր պատմվածքը հարստացնում է սոցիոլոգիական նյութով, ցույց տալիս, որ այդ հանգամանքը ծնում է այնպիսի երևույթներ ինչպիսին է գողությունը երեխաների մեջ, ստեղծում է անմարդկային հարաբերություններ ծնողների և զավակների միջև, որովհետև «ինչպիսի հարաբերություններ ասես չի ստեղծում աղքատությունը մոր և զավակների մեջ»: Օվու երեխաները «աճում էին ինքնագլուխ, վայրենի դրության մեջ:

Նրանք կամ գյուղական սրիկաներ կլինեին կամ մարդալեղու տավարներ, բթացած, քարացած ուղեղով»: Այդպիսի հեռուն գնացող հետևություններով է հարստացնում իր պատմվածքը Ադելյանը: Օվին և նրա կինը, որոնք նույնպես պայմանավորվել էին «բաժանել իրենց ամուսնական անկողինը», սակայն մի քանի ամիս անց Օվին գլխավոր մտածում էր, թե ինչ միջոցներով մկրտություն անի, որ երեխայի թաղման վարձր մնում էր չվճարված:

Ուսպենսկու վերը նշած մի քանի պատմվածքները արդեն իսկ վկայում են նրա ունեցած ազդեցությունը Ադելյանի ստեղծագործության վրա:

* *
*

Ադելյանը իր ամբողջ ստեղծագործությունը նվիրաբերեց հայ գյուղին և հայ աշխատավոր գյուղացուն: Նրա բոլոր պատմվածքները ու ակնարկները, որոնք գրված են տեսածի ու զգացածի անմիջական տպավորություններով, պատկերում են XIX դարի վերջին տապնամյակի հողի աշխատավորի վիճակը, գյուղը ներխուժած կապիտալիստական հարաբերությունների պայմաններում: Դա ռեալիստական գրականություն էր, որ համարձակ մատնանշում էր ոչ միայն հայ գյուղի դարավոր սոցիալական չարիքը, այլև այն նոր վերքերը, որոնք առաջացել

11—97

էին գյուղական կյանքում։ Նրա պատմվածքներն ու ակնարկները ստիպում էին հայ առաջավոր հասարակական մտքին խորհել և հետևություններ անել գյուղացու վիճակի ու նրա վաղվա օրվա համար։

Ադելյանը զերծ մնաց գյուղի նահապետական անցյալը իդեալականացնելու գայթակղությունից։ Ընդհակառակը, այդ անցյալում նա տեսավ խավարի թագավորություն, լինի դա կնոջ անմարդկային ստրկացում կամ դաժան ու անիմաստ ադաթների տիրակալություն։ Ադելյանի ստեղծագործությունը ամբողջությամբ ուղղված էր այն մութ և բիրտ ուժերի դեմ, որոնք կեղեքում էին հողի աշխատավորին, լինի վաշխառու, թե հոգևորական, ցարական պաշտոնյա կամ գյուղական ղոջա։

Ադելյանի ստեղծագործությունը նշանակալից է նրանով, որ մերժում է նարոդնիկական գյուղափրկիչ պատրանքները և որպես զգաստ ռեալիստ ցույց տալիս գյուղի տնտեսական հարցերը լուսավորչական ձեռնարկումներով լուծելու անհնարինությունը։ Իր պատմվածքներում գյուղացուն ծառայելու իդեալներով տոգորված ինտելիգենտին գյուղ բերելով և նրա գործունեության անհաջող ելքով Ադելյանը ժխտում էր նարոդնիկական այն թեզը, թե անհատը կարող է խոշընդոտ դառնալ տնտեսական կյանքի զարգացման գործին։ Խորապես տոգորված լինելով դեպի աշխատավոր գյուղացին ունեցած սիրով ու կարեկցությամբ Ադել-

յանը, սակայն, ի վիճակի չէր ճիշտ ուղիներ մատնանշելու գյուղացիական սոցիալական հարցի ճշմարիտ լուծման համար։ Իր կյանքի վերջին տարիներին Ստ. Շահումյանի հետ ունեցած մտերմությունը, մարքսիստական ուսմունքի հետ ծանոթանալու հանգամանքը հիմք է տալիս ենթադրելու, որ նա պետք է գտներ գյուղացիական հարցի լուծման ճշմարտացի ուղի, որը գաղափարական-գեղարվեստական առավել նշանակալից ստեղծագործությունների ազդակ պետք է դառնար։

Մահն ընդհատեց քանքարավոր գրողի ստեղծագործության այդ նոր և նշանակալից շրջանը։ Մեր օրերի համար Ադելյանի գեղարվեստական երկերը, որոնք ունեն խոշոր ճանաչողական նշանակություն, օգնում են մեզ տեսնելու տառապանքներով ու ցավերով լի անցյալի հայ գյուղը։

ԱՊԵԼՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

1. «Ներհակ Առաքել», «Մուրճ», 1894, № 7—8, № 9
2. «Նրա ցավը», «Մուրճ», 1895, № 3—4, № 9—10
3. «Մանր խնդիր», «Մուրճ», 1895, № 9—10
4. «Հիվանդոտ խիղճը», «Մուրճ», 1896, № 3—4
5. «Տգիտության զոհեր», «Մուրճ», 1896, № 7—8, № 9, № 10—11, № 12, 1897, № 1, № 2—3
6. «Երկու կրակի մեջ», «Մուրճ», 1898, № 1
7. «Նոր հոգսերի հետևից», «Մուրճ», 1898, № 7—8, № 9
8. «Գառը խոստովանանք», «Մուրճ», 1898, № 11
9. «Սկեսուրը», «Մուրճ», 1899, № 1, № 2
10. «Սկեսուրը», «Մաղիկ», 1904, № 6, (Պոլիս), արևմտահայ լեզվով։
11. «Ուսանողի հիշատակարանից», «Մուրճ», 1900, № 3
12. «Ճար չկա», «Նոր փորձ», 1899

Հոդվածներ

1. «Հասարակական խանութներ», «Մուրճ», 1900, № 3, № 5—6

Թարգմանություններ

1. Կորոլենկո—«Անհրաժեշտություն», «Մուրճ», 1899, № 7

Առանձին հրատարակություններ

1. «Սկեսուրը»
2. Երկերի ժողովածու, կազմեց Ա. Ինճիկյան, Երևան, Հայպետհրատ, 1950։

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

ԱՅՍ ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ՎԻՐՁԵՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

Ա. Աղաբաբյան — *Գուրգեն Մահարի*
Ս. Մաճուկյան — *Վահան Թոթովենց*
Պ. Ա. Սեյրան — *Կարապետ Միրաքյան*
Նո. Մ. Գյուլնազարյան — *Վախթանգ Անանյան*
Լ. Ա. Ասատրյան — *Հովհաննես Հովհաննիսյան*